Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

44

8
Ц-55

8
Ա-55
Սպ 39-ԱՐ
Բ 2005
1001/3856

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Գ. ԳԱԼՍՏԵԱՆԻ № 45.

Պ. ԱՐԱՔՍԵԱՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԹԱՏՐՕՆ

ԺՈՂՈՎԱԾՈՒ Բ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. Գող.
2. Պաշտօնս է խրատփալ.
3. Զոհանչի գալուստը.
4. Կրէչինսկի իւրկայով.
5. Սիրահարուած մայիսը.
6. Արեան դէպք.

ԹԻՖԼԻՍ
ԷԼԵԲՏՐԱՅԱՐԺ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆՑԻ ՊՕԼԻՑ., 7
1910

ՊԵՏԱԿԱՆ-ՀԱՆՐԱՅԻՆ Գ. Գ. ԳՐԱԴԱՐԱՆ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ „ՄՇԱԿ“ ԼՐԱԳՐԻ
Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ Պետական Գրադարան
Հ.Ս.Խ.Հ. ՄԱՇԿԱՅԻ ԱՆՎԱՆ
7/II 1922

22.02.2013

44

008
ղա-բշջ

ԳՈՂ

Կոմեդ. 1 ար. Տ. Միրքոի

ԹԱՐԳ.

Պ. ԱՐԱՔՍԵԱՆ

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ԳՈՂ
ՎԼԱՍՈՒԱԾ
ՈՍՏԻԿԱՆ
ԾԱՌԱՅ

Լիւդովիկ 16-երորդի ճաշակով մի գեղեցիկ հիւրասենեակ։ Աջ դուռը դէպի ննջարանը, ձախ վառարան, նորա վերայ նոյն ճաշակով ժամացոյց եւ երկու մեծ չինական վազաներ։ Խորքում մեծ պատուհան, որը տանում է դէպի պատշգամբը։ Բեմի մէջ տեղը սեղան գեղեցիկ եւ թանկագին իրերով։ Աջ մի պահարան հին դրամներով։ Հին պատկերներ, շքեղ շրջանակներով, թանկագին կաբասիք եւ այլն։

ՏԵՍԻԼ 1.

ԳՈՂ ԵՒ ԾԱՌԱՅ.

(Վարագոյրը բարձրանալիս բեմի վերայ բոլորովին մութն է։ Պատուհանի վարագոյրի եռեւից փոքրիկ լոյս է երևում։ Ժամացոյցը խփում է ժամի 5-ը։ Անմիջապէս պատուհանի եռևից խուլ ձայն է լսւում և իսկոյն պատուհանում երկու շուաք է երևում։ Լսւում է ապակիի ալմասով կտրելու ձայնը, որից յետոյ մի ապակուկտորը ընկնում է յատակի վերայ։

Երկու շուաք էլ սարչում են։ Լռութիւն։ Վերջապէս ճեղքից երևում է մարդու ձեռքը, որը պատուհանի փականքն է բանում։ Պա-

տունանը բացւում է և այնտեղից մտնում է շքեղ հագնուած մի պարոն, թանկագին մուշտակով, ցիլինդրով, սպիտակ փողպատով և ֆրակով։ Նորան հետևում է միջակ հագնուած ծառան մեծ գեղնագոյն չեմոդանը ձեռքին)։

ԳՈՂ.—Հեշտ գործ չէր...(յետնայելով վերցնում է ապակիի կտորը յատակից) Բարեբախտաբար գորգը չը թողեց ձայն հանել...ոչ ոք ոչինչ չը լսեց...

ԾԱՌ.—(զնալով խորքը) Աստուած գիտէ... ոտքերս դողում են։

ԳՈՂ.—Սարսափելի մութն է.

ԾԱՌ.—Չը վառեմ արդեօք լապտերը։

ԳՈՂ.—Հարկաւոր չէ...Անա այստեղ պէտք է էլէքտրականութիւն լինի... (յետ նայելով) Սպասիր...ձախ, եթէ չեմ սխալւում պէտք է լինի վառարան։

ԾԱՌ.—Ծրագրի վերայ ձախ է նշանակուած, կը նշանակէ նա պէտք է այստեղ լինի աջ կողմը։ (շոշափելով զնում է առաջ)։

ԳՈՂ.—Սպասիր...(զգուշութեամբ շոշափելով զնում է) Զգոյշ—չը դիպչես...այստեղ շատ իրեր կայ...

ԾԱՌ.—Անտառում ճանապարհ կորցնելը աւելի հեշտ է...մինչև անգամ խիտ անտառում և այն էլ գիշերով (մատնանշելով վառարանին) Ահա, նա ինքը։

ԳՈՂ.—Ո՞վ։

ԾԱՌ.—Վառարանը։

ԳՈՂ.—Դորա կողքին պէտք է էլէքտրական կոճակը լինի։ Լոյս տուր։

ԾԱՌ.—Մթթէ դուք չէք վախենում։

ԳՈՂ.—Ամենևին.—դէ շտապիր, շուտ։ (ծառան հուսի է տալիս էլէքտրական կոճակը և լոյս է տալիս։ Նոքա յետ են նայում։ ծառան դողում է։ Գողը ինչպէս երևում է բաւականութիւն է զգում)։ Հիանալի է կահաւորուած...ես հենց այդպէս էլ երևակայում էի։

ԾԱՌ.—(յանկարծ վախեցած ցոյց է տալիս դռների վերայ) Լսում էք, լսում էք։

ԳՈՂ.—Ի՞նչ կայ։

ԾԱՌ.—Մթթէ ոչինչ չէք լսում (լսում են. լռութիւն)։

ԳՈՂ.—Դատարկ բան է։

ԾԱՌ.—Ախ, երանի յաջողութեամբ վերջանայ։

ԳՈՂ.—Շարժուիր։ Դիր չեմոդանը բազմոցի վերայ։ (լսում է դռների մօտ) Նա հիանալի քնած է։ Մինչև անգամ խռմփացնում է։

ԾԱՌ.—Խռմփացնում է։ Կը նշանակէ ճիշտ որ ես մի ինչ որ ձայն լսեցի։

ԳՈՂ.—Դէպի գործ։ (նայելով ժամացոյցին) Արդէն ժամի 6 ի կէսն է։ Ժամանակը սուղ է։

ԾԱՌ.—Սատանան տանի, իսկ այստեղ շատ գործ կայ։

ԳՈՂ.—Ես այսօր դժբաղտաբար ժողովարանում երկար նստեցի։

ԾԱՌ.—(կշտամբելով) Եւ ինչ կարիք կար այդքան երկար նստելու այնտեղ, քանի որ անյաջող էք խաղում...ճշմարիտ այդ անմտութիւն է։

ԳՈՂ.—Մի վհատուիր, այստեղ մենք գործը կուղղենք։

ԾՌԱ.—Եթէ որ ուզենայիք դուք հարուստ կը լինէիք և կապրէիք հանգիստ խաղաղ ու կը թողնէիք ձեր գործը։

ԳՈՂ.—Ոչ, ինձ դեռ ես հանգստանալը վաղ է...Ես դեռ ես երիտասարդ եմ, սատանան տանի։

ԾԱՌ.—(հառաչելով) Էհ, ինչ արած։ Կը նշանակէ դէպի գործ։

ԳՈՂ.—Հանգիստ, մի տաքանար։ Ամենագըլխաւորն է սառնասիրտ լինել։

ԾԱՌ.—Այո, այո։ (հանելով չեմօդանից ատրճանակը եւ ղնելով սեղանի վերայ) Այսպէս, նախ առաջ այս— այստեղ։

ԳՈՂ.—Ախ, ես ատելով ատում եմ այդ տեսակ գործիքները։

ԾԱՌ.—(ղնելով սեղանի վերայ մի քանի երկաթէ գործիքներ եւ լօմ)։ Երկրորդը—այս։

ԳՈՂ.—Կեցցես, իսկ այժմ շտապէր...(յետ նայելով) Բացիր այս պահարանը և հնադարեան

փողերը դարսիր չեմօդանը։ Այդ շատ թանկագին և հազուագիւտ փողեր են (հանելով եւ մուշտակը)։ Իսկ ես կը նայեմ այստեղ։ (նստում է սեղանի առաջ եւ երկաթէ գործիքով բաց է անում արկղները աշխատելով)։ Եթէ իմ լրատուն չէ ստում, այստեղ այնպիսի դրամ պէտք է լինի, որը ամեն մէկին կարող է պատուաւոր մարդ դարձնել։

ԾԱՌ.—(դարսելով փողերը) Եւ կարելի էր մի գեղեցիկ տուն առնել գիւղում, այգիով...էհ, ինչ հրաշալի երազ է.— Երեկոյեան դուրս կը գաս պատշգամբը...աղբիւրի առաջ...հրաշալի օդ...եկեղեցում երիցփոխ կընտրուես...

ԳՈՂ.—(հանելով խաղատոմսերը, ղնում է սեղանի վերայ)։ Ռուսաստանի ըէնտա, հիանալի է։ Ունգարական ըէնտա, իսպանական, իտալական ակցիաներ, տրամվայի ակցիաներ...(ղնում է սեղանի վերայ)։ Էհ, յետոյ կը հաշուեմ։

ԾԱՌ.—(նամակներ գտնելով) Նամակները։ (հոտ է առնում) Կանանցից է. ինչ լաւ հոտ ունի։

ԳՈՂ.—Երբ կը դադարես դու այդ կոպիտ արտայայտութիւններից, թող նամակները։

ԾԱՌ.—Բայց չէ՞ որ սորանցով էլ կարելի է օգտուել և փող աշխատել։

ԳՈՂ.—Թող նամակները։ Դու գիտես, որ ես ատելով ատում եմ շանտաժը, այդ կեղտոտու-

թիւն է...Մենք պէտք է լինինք կորրեկտ և կը մնանք վեհանձն։ Առ, վերցրու։

ԾԱՌ.—(Վերցնում է խաղատոմսերը)։

ԳՈՂ.—Դիր չեմօդանը, իսկ փողերը քեզ։(տալիս է նորան մի քանի արծաթեայ եւ ոսկէ փողեր, որոնք գտել էր արկղում)։

ԾԱՌ.—Շատ շնորհակալ եմ։ Աստուած վկայ դուք իսկական ջենտելմէն էք։

ԳՈՂ.—(վերցնելով սեղանից փոքրիկ արծանը) Ինչ հրաշալի բան է։ Հիացք է։ Սնդուկը։ Ասացի, զգոյշ...նայիր ինչ հրաշալի, ծխախոտի տուփեր են (ղիտելով) հիանալի։ Սնդուկը։ Ոչ-ոչ, այդ չէ հարկաւոր, սոքա նոր բաներ են։(վ�է կենում) Իսկապէս վատ չէ, ինձ ճիշտ են հագորդել։ (մտնում է գալիս սենեակի մէջ եւ մօտենում է վառարանին) Ա՛խ, ինչ հրաշալի ժամացոյց է։ Կլասիկական գեղեցկութիւն է։ Սատանան տանէ, իսկ այս գծերը...գծերը ինքը գեղեցկութիւն է։ Ես այս կը ժառանգեմ Լուվրին։ Սընդուկը։

ԾԱՌ.—(Վերցնելով ժամացոյց)։

ԳՈՂ.— (գնում է սենեակի միւս կողմը)։ Սորա տէրը անտարակոյս հրաշալի ճաշակ ունի։ Ես նորան հաւանեցի։

ԾԱՌ.—Պէտք է շտապել,արդէն ժամի վեցն է։

ԳՈՂ.—Այո՛, այո՛(ուզում է ապակիի պահարանը քանալ բայց չէ յաջողւում, նա ոյժով քաշում է

այդ միջոցին պահարանի վերայից վայր է ընկնում վազան եւ ընկերներով յատակի վերայ փշրում է)։ Թ՛ը՛խկ։

ԾԱՌ.—(սարսափած) Իսէր Աստուծոյ։

ԳՈՂ.—Ցիմար բան է։ (ղիտելով)։

ԾԱՌ.—(աւելի եւ աւելի վախենալով) Հանդարտ...հանդարտ։

ԳՈՂ.—Ի՞նչ կայ։

ԾԱՌ.—Այնտեղ ով որ ման է գալիս։ Ես ննջարանից ոտքի ձայն եմ լսում։

ԳՈՂ.—Լռի՛ր։ (պառուզա) Ոչ, ոչինչ չը կայ։

ԾԱՌ.—Ման են գալիս, ճշմարիտ ման են գալիս։

ԳՈՂ.—Ես ոչինչ չեմ լսում։

ԾԱՌ.—Իսկ ես ձեզ ասում եմ, որ այնտեղ ննջարանում ման են գալիս։ Հեռանանք այստեղից (ուզում է փախչել)։

ԳՈՂ.—Ախ, սատանան տանէ, դու ճշմարիտ ես։ Հանգցրու լոյսը շուտ։ (նա եւս ուզում է փախչել, բայց այդ միջոցին բացվում են դռները, եւ դռների մէջ երեւում է գիշերուայ շապկով մի մարդ)։

ԾԱՌ.—Ուշ է, բռնուեցանք։ Հրաժարիմք ի սատանայէ։

ԳՈՂ.—(ուղղուելով) Չը պէտք է շփոթուել։ Ազնուութիւնը առանձին բան է։

ՏԵՍԻԼ 2.

ՆՈՑՆՔ ԵՒ ՎՆԱՍՈՒԱԾ։

ԳՈՂ.—(վերին աստիճանի քաղաքավարի կերպով մօտենում է նորան եւ գլուխ է տալիս)։ Բարի լոյս։

ՎՆԱՍ.—Ցոյս ունեմ, որ ես ձեզ չը խանգարեցի։

ԳՈՂ.—(քաղաքավար.) Օ, երբէք։

ՎՆԱՍ.—Աւելի լաւ։

ԳՈՂ.—Խնդրեմ, համեցէք ներս։

ՎՆԱՍ.—Դուք շատ բարի էք։ (մի քանի քայլ առաջ է գնում)։

ԳՈՂ.—Ներեցէք խնդրեմ, որ ես իմ անզգուշութեամբ խանգարեցի ձեզ քնել։ Բայց ճշմարիտ ես մեղաւոր չեմ։ Դուք այնպիսի քնքոյշ իրեր ունիք, որ ձեռք տալուց անմիջապէս ուշքից գնում են։ Ինչպէս երևում է ձեր իրերն էլ մեր դարու հիւանդութիւնով են վարակուած։ Նոքա մեզ նման ջղային են։

ՎՆԱՍ.—Այո, բայց ինչ արած, դուք նոքանց ներեցէք, չէ որ նոքա հնագիտական իրեր են։

ԳՈՂ.—Այո դուք իրաւացի էք։

ՎՆԱՍ.—(փոքը լոութիւնից յետոյ) Իսկ ում հետ պատիւ ունիմ խօսելու։

ԳՈՂ.—Գիտէք ինչ, դուք երևի շատ պար-

մացած կը լինէք եթէ ես ինձ անուանեմ։

ՎՆԱՍ.—Օ՛, խնդրեմ, ձեր կամքն է։

ԳՈՂ.—Դուք մի գուցէ կը յետաձգէք, և կը սպասէք աւելի յարմար րոպէին։ Ես համոզուած եմ որ այդ րոպէն հեռու չէ և այն ժամանակ մենք պաշտօնապէս կը ներկայանանք միմեանց, որը ինձ մեծ հաճոյք կը պատճառէ իհարկէ։

ՎՆԱՍ.—Ինչպէս կամենաք։

ԳՈՂ.—(ժպիտով) Ճշմարիտն ասած ես այսօր ամենևին դիտաւորութիւն չունէի...

ՎՆԱՍ.—Դուք իրաւացի էք։

ԳՈՂ.—Եթէ այդ ձեզ համար միևնոյն է, ես կը կամենայի առ այժմ իմ անձի վերաբերեալ գաղտնապահ լինել։

ՎՆԱՍ.—Այդ կատարելապէս հասկանալի է։

ԳՈՂ.—Տղամարդկանց մէջ այդպիսի հարցերը շուտ են վերալուծւում։

ՎՆԱՍ.—Համոզուած եղէք, որ ես իմ կողմից...

ԳՈՂ.—Օ՛, ես ոչ մի րոպէ չեմ կասկածում։

ՎՆԱՍ.—Այո, բայց և այնպէս ինձ համար դեռ ևս պարզ չէ...

ԳՈՂ.—Իմ ներկայութիւնը այստեղ, ձեր բնակարանում և այսպիսի ժամանակ։ (ցոյց տալով բացուած արկղները) Այս անկարգութիւնը ինքն է ապացուցանում։

ՎՆԱՍ.—Դուք իրաւացի էք։ Եւ ես ձեզ

նից շատ շնորհակալ կը լինէի, եթէ միայն իմ հարցս անհամեստ չի լինիլ...

ԳՈՂ.—Հաւատացնում եմ ձեզ, որ այստեղ անհամեստութեան մասին խօսք անգամ չի կարող լինել։ Ընդհակառակը ձեր հետաքրքրութիւնը շատ հասկանալի է և ես պատրաստ եմ ձեզ գոհացնել։ տալ ամենայն բանում։ Դուք ինձ շատ էք դուր գալիս։

ՎՆԱՍ.—Շատ շնորհակալ եմ։

ԳՈՂ.—Զարմանալի դուր էք գալիս։ Դուք մեծ ճաշակ ունիք...

ՎՆԱՍ.—Խոնարհաբար շնորհակալ եմ։

ԳՈՂ.—Ես չեմ կեղծում, ես ասում եմ կատարեալ ճշմարտութիւնը։ Ներկայ ժամանակներում ճաշակը հազուագիւտ բան է։ Ես ճիշտ եմ ասում։

ՎՆԱՍ.—Ես տեսնում եմ, որ մենք երկուսս էլ միևնոյն բաներով ենք հետաքրքրւում։ Այդ ուրախալի է։

ԳՈՂ.—Դուք իրաւացի էք։ Միևնոյն ձրգտումները մի բարոյական կապ են ստեղծում և մարդիկ համամիտ են լինում միմեանց հետ եթէ կարելի է այսպէս ասել։ Բայց ներեցէք, քանի որ մենք երկուսս էլ ցանկութիւն ունինք խօսակցելու, աւելի լաւ չէր լինի մի բան ծածկէիք ձեզ վերայ։ Այստեղ ցուրտ է, ես վախենում եմ, որ դուք չը մրսէք։

ՎՆԱՍ.—Դուք իրաւացի էք։ Ներեցէք մի րոպէ (Ուզում է զնալ, բայց վերադառնում է)։ Ես չեմ ուզում ձեզանից յետ մնալ ձեր ուշադրութեան և պարզաբանութեան մէջ...

ԳՈՂ.—Օ՛, խնդրեմ։

ՎՆԱՍ.—Բայց դժբաղտաբար ձեր այստեղ ներկայ գտնուելու վասին ես ստիպուած եմ յայտնել ոստիկանութեանը, յանուն գաղափարի իհարկէ...

ԳՈՂ.—(զլուխ տալով) Խնդրեմ, խնդրեմ։

ՎՆԱՍ.—Միայն յանուն գաղափարի։ Ցտեսութիւն։ (զնում է Ինջարանը)։

ՏԵՍԻԼ 9.

ԳՈՂ ԵՒ ԾԱՌԱՑ։

ԳՈՂ.—Բաղտս չը կտրեց։

ԾԱՌ.—Ես ձեզ ասում էի, որ այս անգամ մենք կը բռնուենք։ (աղերսանօք) Հեռանանք։

ԳՈՂ.—Գժուել ես թ՞ոչ է։

ԾԱՌ.—Մի գուցէ նա մեզ արձակէ, նա այնպէս տարօրինակ մարդ է։ Ինձ թւում է, որ նա վատ մարդ չէ։ Բայց իսէր Աստուծոյ գնանք այստեղից։

ԳՈՂ.—Լաւ։ Այն իրերը, որ մենք վերցրել ենք դիր իրանց տեղը։ Նորից պէտք է սկսել։

ԾԱՌ.—(ղժգոհ) Խաղատոմսերն էլ նմանապէս։

ԳՈՂ.—Այո։ Մարդ երբեմն զոհաբերութիւն պէտք է անէ։

ԾԱՌ.—Կանխիկը նոյնպէս։ Եւ իմ փողն էլ։

ԳՈՂ.—Այո և փողը։

ԾԱՌ.—Էհ, գործեր, գործեր (նորից հանում է չեմօղանից իրերը)։ Մնաս բարեաւ սեփական տուն...մնաք բարեաւ կովեր, հորթեր...(բարկացած)։ Խոզեր։

ԳՈՂ.—Հանդարտ։

ԾԱՌ.—Ձեր խելացիութեամբ և ձեր ուսումով դուք կարող էիք լաւ պաշտօնի մէջ մեծ գումարներ գողանալ ինչպէս անում են պատուաւոր մարդիկ ձեր ծանօթներից շատերը և ապրում ենք առօք փառօք ու շքանշաններ են ստանում։ Էհ, իսկ դուք թեթեւամիտ էք ապրում։

ՎՆԱՍ.—(վերադառնում է շքեղ առաւօտեան զգեստով—խալաթով)։

ՏԵՍԻԼ 4.

ՆՈՑՆՔ ԵՒ ՎՆԱՍՈՒԱԾ։

ՎՆԱՍ.—(տեսնելով թէ ինչպէս են գող եւ ծառան իրերը տեղաւորում)։ Օ՛, խնդրեմ, նեղութիւն մի կրէք խնդրեմ, իմ սպասաւորը բոլորը կը կահաւորէ։

ԳՈՂ.—Բայց...

ՎՆԱՍ.—Նա իմանում է դրանց հետ վարուել։

ԳՈՂ.—Այո, բայց մենք նմանապէս։

ՎՆԱՍ.—Ճշմարիտ նեղութիւն մի կրէք (մօտեցնում է գողին բազկաթոռ, ինքը նստում է միւս բազկաթոռի վերայ, ծառան գնում է խորքը)։ Խընդրեմ, ես ձեզ լսում եմ։

ԳՈՂ.—Նախ քան սկսելը ես կարող էի ձեզ պատմել, ինչպէս բօմանների մի հերոս իմ կեանքի բոլոր պատմութիւնը, բայց այդ չարժէ, այնպէս, որ աւելի լաւ է չը խօսել դորա մասին։

ՎՆԱՍ.—Շատ ուրախ եմ։

ԳՈՂ.—Ես կը դիմեմ ուղիղ հարցին (փոքր լռութիւն)։ Ես—գող եմ (վնասուած հաւածայնութեան նշան է անում)։ Պրոֆեսիօնալ գող (նոյն ժամումը)։ Եւ աւազակ...այս բոլորը մի փոքր լաւ չէ հնչում անսովոր մարդու համար, բայց դուք երևի արդէն հասկացաք։

ՎՆԱՍ.—Օ՛, այո։

ԳՈՂ.—Այդ ձեզ պատիւ է բերում։ Եւ այդպէս, ես—գող եմ. նախ քան իմ այս սոցիալական դիրքս ընտրելու, ես շատ եմ մտածել։ Ես եկայ այն եզրակացութեան, որ մեր այս խառը ժամանակներում այս կոչումը ամենայարմարն է, ամենազնիւը և ամենաքաղաքավարի։

ՎՆԱՍ.—Դուք իրաւացի էք..միայն այդ—ենթադրութիւն է։

ԳՈՂ.—Դուք այս ըոպէիս կը տեսնէք, որ գողութիւնը, ես ասում եմ «գողութիւնը» ինչպէս ընդունուած է ասել վաճառականութիւն, իրաւաբանութիւն, բժշկութիւն, բժշկականութիւն, նկարչութիւն...գողութիւնը համարւում է վատ արհեստ, որովհետև մինչև այժմ ով որ իրան նուիրել է այդ բանին նա եղել է վատ, կոպիտ, գրեհիկ, փողոցային սրիկայ, առանց կրթութեան և առանց ուսումի, այնպիսի մարդիկ, որոնց հետ գործ չէր կարելի ունենալ։

ՎՆԱՍ.—Ես ձեզ հետ համաձայն եմ։

ԳՈՂ.—Իսկ ես այդ արհեստին կամենում եմ շուք տալ, քանի որ նա արժանի է։ Ես կամենում եմ նորան ազատ դարձնել. ազատ պրոֆեսիան արժանի է ուշադրութեան և այդ տեսակ պրոֆեսիան շատերին կը գրաւէ։

ՎՆԱՍ.—Այո, բայց դուք մեծ անբաւականութիւններին կը հանդիպէք։

ԳՈՂ.—Շատ կարելի է։ Բայց ամեն մի կուլտուրային նախաձեռնողը հանդիպել է անբաւականութիւնների։ Նայենք առօրեայ կեանքի վերայ հասարակ հայեացքով առանց խորի. գողութիւնը ամենայարմար գործն է ամեն մի պատուաւոր մարդու համար։

ՎՆԱՍ.—Ոչ, ներողութիւն, իսկ սէրը։

ԳՈՂ.—Անպայման, բայց նորան յափշտակելու համար միջոցներ են պէտք, վճարել է պէտք, այլ խօսքով, գողանալ (վնաս. բացասական նշան է անում)։ Մի՛ք վիճիլ, հետևեցէք խնդրեմ իմ մտքերին։ Ամեն մարդ ընտրում է իրա համար մի որև է պրոֆեսսիա միջոցներ ձեռք բերելու համար և նա ստիպում է նորան գողանալ, շատ թէ քիչ իհարկէ։ Ամենայն դէպս նա մէկից մի բան խլում է։ Դուք խելացի մարդ էք և լաւ էք հասկանում թէ գեղեցիկ բարերարութեան և պատուի քօղի տակ ինչ էթագնուած. յոյս ունեմ, որ փաստերին կարօտ չէք լինի։

ՎՆԱՍ.—Ինձ թւում է, որ դուք շարունակ բացառիկ դէպքերին էք հանդիպել։

ԳՈՂ.—Իսկ դո՞ւք։

ՎՆԱՍ.—Ե՞ս։

ԳՈՂ.—Իհարկէ։ Դուք ամենայն տեղ ասելիք մարդու անունն էք կրում։ Ձեզ փաստերի ամենքն էլ յարգում են, իսկ դուք ձեր առաջին քայլերը Բօրսայից չէք սկսել։ Ցետոյ դուք հարբուտացաք... կարող էք արդեօք ինձ ասել, թէ ձեր հարստութեան մէջ քանի գաղտնի և պարզ անբարոյականութեան միջոցներ են եղել։

ՎՆԱՍ.—(լռութիւնից յետոյ, մոայլ) Դուք իրաւացի էք։

ԳՈՂ.—Ահա տեսնում էք։ Բայց մենք խո-

1.001
3856
Հ.Ս.Խ.Հ. ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
*S.S.S.R. Публичная Библиотека
7/XI 1922
Ա. ՍՅԻՍԻ ԱՆՎԱՆ

սենք միայն այն բանի մասին, ինչ որ ինձ է վերաբերում։ Ես կարճառոտ կը լինեմ։ Ես իմ գործունէութիւնս սկսել եմ վաճառականութիւնից, բայց շուտով, խաբեբայութիւնը ստոր քսութիւնը զզուացրեց իմ ինքնասիրութեանս և ես անցայ ֆինանսական գործունէութեան։

ՎՆԱՍ.—Կը նշանակէ կրակից բոցն էք ընկել։

ԳՈՂ.—Միանգամայն իրաւացի էք։ Շուտով այդ գործով էլ չը կարողացայ պարապել։ Ես չը կարողացայ կեղծ ակցիաներ տարածել, կեղծ հանքային հիմնադիր լինել և հաւատարիմ մարդկանց գրպանից շարունակ փողերը հանելով լցնել իմ գրպանը։ Ես ստախօսութեան ոխերիմ թշնամին եմ։ Այդ իմ ոյժերից վեր էր և ես վրճռեցի լրագրի աշխատակից դառնալ։

ՎՆԱՍ.—Ի՞նչ էք ասում։

ԳՈՂ.—Մի ամսուայ ընթացքում, ես եկայ այն եզրակացութեան, որ այդ աշխատանքով ապրել չի կարելի, եթէ շարունակ չը կաշառուես, բացի դորանից իմ կրթութիւնս ինձ թոյլ չէր տալիս անկիրթ և կոպիտ խմբագիրների հետ, որոնց շատերը մինչև անգամ գրել չը գիտեն... գործ ունենալ։ Ոչ, ես այդ տանել չէի կարող, մտածեցի մի գուցէ ինձանից լաւ քաղաքական գործիչ դուրս գայ։

ՎՆԱՍ.—(ծիծաղում է) Խի, խի, խի։

ԳՈՂ.—Դուք իրաւացի էք։ Աւելի լաւ է դորա մասին չը խօսենք։ Այն ժամանակ ես վճռեցի ինձ նուիրել հասարակական գործերին։

ՎՆԱՍ.—Մեր ժամանակներում այդ դժուար և անմաքուր գործ է։

ԳՈՂ.—Կատարեալապէս ճշմարիտ է։ Բայց կախուած է մարդուց։ Ես բաւականի գեղեցիկ եմ, մի կողմից ժառանգական, մի կողմից պատուաստուած ընդունակութիւն ունեմ հաճոյանալ—ես ոպօրտսմեն եմ և խելօք...

ՎՆԱՍ.—Խելօք էք։ Այդ միայն արգելք է...

ԳՈՂ.—Այսինքն, բաւականի խելօք եմ, որպէսզի կարողանամ գեղեցիկ կերպով ծածկել յիմարութիւնը և անընդունակութիւնը։ Ես լաւ կապեր ունեմ...Պատուի սկզբունքները անգիր գիտեմ։ Յաջող մենամարտող եմ, ոչ մի կուսակցութեան չեմ պատկանում, այնպէս որ ինձ համար մեծ դժուարութիւն չէր ամենաբարձրագոյն ժողովարանում անդամ գրուել և ես ընդունուած եմ ամեն տեղ։ Ամբողջ օրը ես անցէի կացնում գրասենեակում, դերասանուհիների ուբորնիանեբում...ոմանց ես առաջ էի տանում իսկ միւսներին ծառայում էի. պատահում էր ձիարշաւի խաղամիջոցին խաբում էի մարդկանց։ Մի քանի կօկօտկաների համար բնակարաններ էի սարքում, միւսների իրերը ծախում։ Իմ ազդեցութեամբ օգտուում էին գինեվաճառները, դերձակ-

ները, ավֆտոմոբիլի գործարանատէրերը, միլիոնատէրերը և գեղեցիկ կանայք...բայց, շուտով ես զգացի, որ այդ իմ ուժից վեր է։

ՎՆԱՍ.—Այո, չէ կարելի ասել, որ այդ խաղաղ գործունէութիւն է։

ԳՈՂ.—Այդպիսով ես փորձեցի բոլոր պատուաւոր գործունէութիւնները, որոնք բաց են ինտելիգենտ և ճարպիկ երիտասարդի համար, ինչպիսին ես էի. և ես պարզ տեսայ, որ գողութիւնը, ինչ անուն ուզում է նա թող կրէ, միակ ասպարէզն է մարդու համար։ Բայց նորան դիմաւորում են, ծածկում են և նա աւելի վտանգաւոր է լինում։ Ես եկայ այն եզրակացութեան, քանի որ մարդկային օրէնքը ասում է «պէտք է գողանաս» և ոչ ոք այդ օրէնքը հերքել չի կարող, աւելի լաւ է ուրեմն եթէ ազնուաբար գողանաս. լաւ է բացարձակ, պարզ և քո բնական ձգտումը—յափշտակել ուրիշի ունեցածը, չը ծածկես զանազան քողերով և ճռճռան ֆրազներով, որոնց, այժմ միևնոյն է ոչ ոք չէ հաւատում։ Եւ այդպիսով ես սկսեցի գողութիւն անել ամենայն օր։ Ամեն գիշեր ազնուաբար մտնում էի հարուստների բնակարանը։ Միանգամայն ես վճռեցի ուրիշների դրամարկղից վերցնել ամեն ինչ, ինչ որ կարևոր էր իմ դրամական, բարոյական և հոգեկան պահանջներին գոհացուցիչ տալու համար։ Մնացած բաներում ես ապրում եմ այնպէս, ինչպէս բո-

լորը, մի գուցէ աւելի լաւ. երբ գործերս լաւ են, ես մինչև անգամ ընդունակ եմ լինում ազնիւ քայլեր անելու։

ՎՆԱՍ.—Դուք երջանիկ եք։

ԳՈՂ.—Որքան հնարաւոր է այս ստութեան աշխարհում. յամենայն դէպս ես խղճի խայթոց երբէք չեմ զգում, որովհետև բոլոր մարդկանց մէջ, որոնց ես ճանաչում եմ, ես միակն եմ որը համարձակ կերպով իւր գաղափարները կապում է նաև գործի հետ, իսկական կեանքի իմաստը ըմբռնելով (մոայլ ժպիտով)...Եթէ միայն կեանքի մէջ իմաստ կայ։

ՎՆԱՍ.—(մոայլ) Ահա հէնց այդ է...բայց ձեր դերը երբեմն վտանգաւոր է, դուք վատ կարող էք վերջացնել։

ԳՈՂ.—Այո, կամ Ֆրանսիայի նախարար դառնալ. երբեմն ճակատագիրը վարձատրում է...փոքրիկ սիւրպրիզներ է ուղարկում։

ՎՆԱՍ.—Սիրահարական արկածնե՞ր, կանանց հետ։

ԳՈՂ.—Պատահումէ։ (պարծանքով) Մինչև անգամ շատ յաճախ։

ՎՆԱՍ.—Պատմեցէք խնդրեմ...ես սաստիկ սիրում եմ կանանց արկածները։

ԳՈՂ.—Իսկ պրոֆեսսիոնալ գաղտնապահութիւնը։

ՎՆԱՍ.—Դուք կարող էք անունները չտալ։

ԳՈՂ.—Լաւ, ես ձեզ կպատմեմ իմ ոչ ամենահետաքրքիր արկածից մէկը, այլ ամենանորը։ Երեկ չէ անցեալ օրը ես մտայ մի գեղեցկուհու բնակարանը։ Ես տեղեկութիւն ունէի որ հէնց այդ գիշեր նա միայնակ կլինի։ Ես արդէն բոլոր թանկագին իրերը սենեակից ժողովել էի. յանկարծ այդ միջոցին դուռը բացւում է, և նորա մէջ երևում է մի գեղեցկուհի, մազերը թողած և երեսին սարսափ։

ՎՆԱՍ.—Ինչպէս ես—մի փոքր առաջ։

ԳՈՂ.—(թեթեւակատակ) Ես չեմ ուզում ձեզ վրդովել, սակայն դուք կհասկանաք որ նոյն րոպէն ինձ համար նա 1,000 անգամ աւելի գերադասելի էր, թէև դուք նոյնպէս հագնուած չէիք։

ՎՆԱՍ. —Օ՛, խնդրեմ...սակայն շարունակեցէք, յետոյ, յետոյ։ Ի՞նչ տեսակ մազեր ունէր։ Ս՞և։

ԳՈՂ.—Կարմրագոյն։

ՎՆԱՍ.—Ա՛խ, իմ սիրած գոյնը։

ԳՈՂ.—Ա՛խ, որչափ նա գրաւիչ էր։ Նորա գեղեցկութիւնը...նորա մերկութիւնը, նորա սարսափը և...Ա՛խ և այդ բոլորը իմ մէջ արթնացրեց մի այնպիսի սէր, որ մոռացայ թէ ես եկել եմ գողութեան համար։ «Խղճացէք, խղճացէք» ինձ ասաց նա։ «Մի՛ք սպանիլ, վերցրէք ինչ որ կամենում էք, միայն մի՛ք սպանիլ ինձ»։ Ես ընկայ նորա ոտքերի առաջ և աղերսում էի չվախենալ։ Օ, այդ շրթունքները։ Այդ կուրծքը։ Այդ մազերը։ Նա ամբողջ մարմնով դողում էր և այդ դրութեան մէջ ես նորան բարձրացրի ու տարայ միւս սենեակը։

ՎՆԱՍ.—Օ՛, օ, գժւում եմ այդ տեսակ պատմութիւնների համար։ Յետոյ, յետոյ։

ԳՈՂ.—Յետոյ։ Յետոյ նա միւս օրը չէր կարողանում ինձանից բաժանուել և շարունակ ասում էր. «Միրելիս, դու ինձ ոչ թէ սպանում ես, այլ ընդհակառակը»։ Ախ, ես այդպիսի դէպքերին շատ եմ պատահել։

ՎՆԱՍ.— Այո, ձեզ կարելի է երանի տալ (մտածողութեան մէջ)։ Ձեր արուեստը լաւ կողմեր էլ ունի։

ԳՈՂ.—Ի՞նչու չէք փորձել ձեր ոյժերը այդ ասպարիզի վրայ։

ՎՆԱՍ.—(հիասթափուած) Ի՞նչ էք ասում։ Նորից կնշանակէ սկսել կեանքը։ Ո՛չ, ես արդէն բաւականի ծերացել եմ, ուշ է։ (վէր է կենում)։

ԳՈՂ.—Ափսոս։

ՎՆԱՍ.—Իսկապէս շատ ափսոս (նայում է պատուհանում, որտեղից արդէն երեւում է լուսոյ ճառագայթը)։ Արդէն լուսանում է (նախասենեակից ձայն է լսւում)։ Ահա ոստիկանն էլ գալիս է, շատ լաւ մարդ է (մտնում է ոստիկանը)։ Իսկ ես սորա մասին ամենևին մոռացել էի։

ՏԵՍԻԼ 5.

ՆՈՑՆՔ և ՈՍՏԻԿԱՆ

ՈՍՏԻԿ.—Ի՞նչ է պատահել ձեզ մօտ, ի՞նչ կայ։

ՎՆԱՍ.—(*քաշուելով, երբեմն դիմելով զողին, երբեմն ոստիկանին*)։ Օ՛, առանձին ոչինչ, պարոն ոստիկան։ Աւելի ճիշտն ասած ամենևին ոչինչ։

ՈՍՏԻԿ.—Ոչինչ։ Սակայն թոյլ տուէք հարցնել ինչո՞ւ էիք ուղարկում ոստիկանութեան հետևից։ (*յետ նայելով*) Ձեր արկղները բոլորը բաց են, գողութի՞ւն է կատարուել։

ՎՆԱՍ.—Ո՛չ, վերաքննութիւն։ Մէկը միւսին այնքան նման է, որ սկզբից ես ինքս շփոթուեցի։ Հասկանում էք։

ՈՍՏԻԿ.—Ոչինչ չեմ հասկանում։

ՎՆԱՍ.—Ես նոյնպէս։ (*ցոյց տալով զողի վրայ*) Այս պարոնը, երևի նմանապէս ոչինչ չէ հասկանում (*զողը շարժում է գլուխը*)։ Ախ, պարոն ոստիկան, մենք մարդիկս շատ անգամ չենք հասկանում թէ ի՞նչ է կատարուում մեզ հետ, հակառակ դեպքում մենք ոչ թէ մարդ, այլ Աստուած կլինէինք։

ՈՍՏԻԿ.—Ես ձեզ չեմ հասկանում, որքան տարօրինակ էք։ Այս բոլորը տարօրինակ է։ Ուրեմն ի՞նչու համար էիք իմ յետևից մարդ ուղարկելիս։

ՎՆԱՍ.—Յանուն գաղափարի, միայն յանուն գաղափարի։

ՈՍՏԻԿ.—(*անհամբերութեամբ*) Ախ, խնդրեմ, ես կխնդրէի ձեզ...

ՎՆԱՍ.- Հաւատացնում եմ ձեզ, որ մենք ձեզ իզուր ենք նեղութիւն տուել (*քաղաքավարութեամբ ճանապարհ է դնում*)։ Ծ՛տեսութիւն, ց՛տեսութիւն (*ոստիկանը գնում է*)։

ՏԵՍԻԼ 6.

ԳՈՂ, ՎՆԱՍՈՒԱԾ և ԾԱՌԱՅ

ԳՈՂ.—Դուք ոչ միայն ճաշակ ունիք, այլ և տակտ, մեծ տակտ։ Ճշմարիտ ես չգիտեմ թէ ինչպէս շնորհակալութիւն անեմ ձեզ։

ՎՆԱՍ.—Զ՛արժէ, ճշմարիտ չարժէ, դուք ինձ մեծ բաւականութիւն պատճառեցիք։

ԳՈՂ.—Բայց ես չեմ ուզում օգտուել ձեր բարի հիւրընկալութիւնից, համոզուած եղէք որ ես ձեզ գնահատեցի և կեանքիս մէջ չեմ մոռանալ ես այս դէպքը։

ՎՆԱՍ.—Ձեր յիշողութիւնները այնքան հարուստ են, որ այսօրուայ դէպքը շուտով կանցնի ձեր մտքից։ Զէ՞ք կամենալ արդեօք ինձ բա-

ւակնութիւն պատճառել։ Նախաճաշեցէք ինձ հետ։

ԳՈՂ.—Շատ շնորհակալ եմ, բայց ես չեմ կարող։

ՎՆԱՍ.—Ինչո՞ւ։

ԳՈՂ.—Այժմ արդէն ժամի 7-ն է, իսկ ես փլակով եմ։ Այդ մի փոքր ծիծաղալի տպաւորութիւն է թողնում, և ես չէի կամենալ դէպի ձեզ լինել անկորրեկտ։ Բացի դրանից ես պէտք է շտապեմ տուն, հակառակ դէպքում իմ ծառաները անհանգիստ կլինեն։

ՎՆԱՍ.—Բայց ես տելեֆոն ունեմ, որը ձեր տրամադրութեան տակն է։

ԳՈՂ.—Դուք շատ բարի էք, բայց ես չեմ կարող մնալ։

ՎՆԱՍ.—Կամենաք ես ուղարկեմ կառքի յետևից։

ԳՈՂ.—Շնորհակալ եմ, այստեղ մօտ սպասում է իմ աֆտոմօբիլը։

ՎՆԱՍ.—Այդ դէպքում ամեն ինչ կարգին է։

ԳՈՂ.—Դուք թոյլ կտա՞ք (մօտենում է դռներին եւ կանչում է) Իոսիֆ։ (ծառան մօտ է բերում մուշտակը)։ Զեմօդանը (ծառան վերցնում է չեմօդանը)։ Ց՛տեսութիւն։ Ես կրկին ներողութիւն եմ խնդրում։

ՎՆԱՍ.—Ուրեմն ց՛տեսութիւն։ Յոյս ունեմ որ մէկ օր կտեսնուենք...միայն խնդրում եմ

ցերեկով...(գողը մօտենում է պատուհանին եւ ուզում է դուրս թռչել)։ Ո՛չ, ո՛չ, այդ ես չեմ կարող թոյլ տալ, համեցէք մուտքից։

ԳՈՂ.—Դուք իրաւացիէք։ Ներեցէք, այդ սովորութիւնից է (քաղաքավարութեամբ գլուխ է տալիս եւ դուրս գնում)։

ՎԱՐԱԳՈՅՐ

„ՊԱՇՏՕՆՍ Է ԽԸՌՄՓԱԼ“

Կոմեդիա 1 արար.

ԹԱՐԳՄ.

Պ. ԱՐԱՔՍԵԱՆ

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ԺՈԶԷՖ ՄՈՒԼԻՆԷ—Կապիտան։
ՌՈԶԱ—Սորա կինը։
ՊԻՐՈՆՈ—Ծառայ։
ԼԻՆԴՈՐ—Զինուոր։

Բեմը ներկայացնում է Մուլինէի ննջարանը։ Աջ եւ ձախ դռներ, աջ զրասեղան, ձախ պատուհան, որը տանում է դէպի պարտէզը։ Փոքրիկ կլօր սեղան, վրան լուցկի։ Դիմացը մահճակալ վարագոյրներով, ձախ շիրմայ։ Մահճակալի առաջ փոքրիկ սեղան եւ աթոռ։ Վարագոյրը բարձրանալիս Մուլինէն նայում է աջ դռան ճեղքից։

ՏԵՍԻԼ 1.

ԺՈԶԷՖ—մենակ.

ԺՈԶ.—(աջ դռան ճեղքից նայելով) Փառք Աստուծոյ, կնոջս գլուխը խառն է, տեսնեմ ինչ է գրում իմ սիրելի Ֆլօրենտինն (կարդում է) «Անսիրտ, ահա տասն տարի է ինչ միմեանց չենք տեսել» Եւ իրաւ տասը տարի է։ «Այս երեկոյ ժամը 8-ին եղիր օպերայում, գոնէ մի քանի ժամ կարողանամ կարօտս առնել»։ Ախ, ինչպէս եմ կարոտացել նրան, ինչպէս կուզէի ես նորան տեսնել, սեղմել կրծքիս։ Բայց ցաւն այն է որ ես ամուսնացած եմ...ինչ հնարեմ որ կարողանամ հեռանալ տնից և կինս չիմանայ...օյ օյ օ, այնպիսի մի խանդոտն է որ հանգստութիւն չէ տալիս մար-

դուն (ականջ է դնում դռնից)։ Ժամի 6-ն է, Տէր Աստուած, երկու ժամ է միայն մնացել։ Դուռը կողպեմ և հեռանամ։ Ոչ, չի լինի...ամեն գիշեր գալիս է սենեակս և հարցնում է «Ժողէֆ քնած ես», իսկ ես խռռացնում եմ, կարծում է թէ քընած եմ և դուրս է գնում. իսկ այժմ եթէ յանկարծ գայ և տեսնի որ ես անկողնումը չեմ... հոգիս կհանի։ Արդեօք գնամ թէ ոչ։ Աւելի լաւ է մի վիճակ գցեմ, եթէ Ջուխտ գայ, կգնամ,— կենտ— չեմ գնալ (փողը հանելով գրպանից նայում է) Ջուխտէ, Ջուխտ. բաղտս էլ է ասում, որ պէտք է տեսնել Ֆլորենտինային։ Ինչպէս անեմ ա...Ա՜հ...սրանից լաւ բան չի լինիլ, դիտմամբ մի պատճառ կգտնեմ, կխրովեմ հետը և դուրս կերթամ (Բոռալով)։ Այս անտանելի է վերջապէս, այս ինչ տեսակ տուն է...սատանան տանի։

ՏԵՍԻԼ 2.

ՆՈՅՆԸ և ՌՕԶԱ, յետոյ ՊԻՐՕՆՕ

ՌՕԶԱ.—(դուրս գալով աջ դռնից) Ի՞նչ է պատահել, սիրելիս, ինչու ես բղաւում։

ԺՈԶ.—(բարկացած ման է գալիս) Թողէք ինձ հանգիս իսէր Աստուծոյ տիկին, այս ինչ բանէ, մինչև այժմ անկողինս կարգի չէ բերուած։

ՌՕԶԱ.—(կանչել.) Պիրօնօ, անպիտան Պիրօնօ։

ՊԻՐՕՆՕ.—(ներս գալ.) Ի՞նչ էք հրամայում, տիկին։

ՌՕԶԱ.—Ի՞նչու պարոնիդ անկողինը մինչև այժմ չես կարգի բերել։

ՊԻՐՕՆՕ.—Ես դեռ չմթնած ուղղեցի, տիկին։

ՌՕԶԱ.—Լաւ, մէկ էլ ուղղիր։

ԺՈԶ.—Մէկ էլ ուղղիր, մէկ էլ ուղղիր, իսկ որտեղ է իմ գիշերուայ լամպան։

ՌՕԶԱ.—(Պիրօնօին) Դու գժուել ես ինչ է, ինչու պարտականութիւններդ չես ճանաչում։

ՊԻՐՕՆՕ.—Այ տիկին, սեղանի վրայ է։

ՌՕԶԱ.—(ամուսնուն), Սիրելիս, ինչու ես իզուր ասում։

ԺՈԶ.—Լաւ, ասենք լամպան չնկատեցի,— երկու ժամ է ինչ ուզում եմ ծխախոտ ծխել, իսկ լուցկի չկայ։

ՌՕԶԱ.—Հապա այն ինչ է, սեղանի վրայ երկու տուփ է մինչև անգամ։

ԺՈԶ.—Ո՞ւր է, ո՞ւր է լուցկի, սրանք դատարկ են (բռնելիս երկուսն էլ թափում է)։ Չեմ հասկանում ճշմարիտ, այս ինչ տեսակ տուն է, ոչ կինն է կնոջ նման, ոչ ծառան ծառայի, ինչ ասեմ, ինչ...(կողմը) Ոչ մի պատճառ չեմ գտնում (մոտենալով սեղանին գիրքերը խառնում է) Այս ո՞վ է գրքերը շարժել տեղից։

ՌՕԶԱ.—Այդ ինչ նոր բաներ ես հնարում, ո՞վ է գրքերիդ բացի քեզանից ձեռք տալիս։

ԺՈՋ.—(բարկանալով) Սորանից աւելի ինչ պէտք է լինի։ Այդ էր պակաս, որ դու և քո ծառան գլխիս նստէիք։ Ի՞նչու էք շարժում գրքերս, ո՞վ է նրանց տէրը, դո՞ւք թէ ես։ Իհարկէ քեզ նման կինը չի կարող տուն կառավարել...սրանք ինձ սպանել են ուզում,

ՌՕԶԱ.—Շատ լաւ, շատ լաւ։

ԺՈՋ.—(աւելի բարկացած) Ինչ շատ լաւ, տիկին, առաւօտից մինչև երեկոյ ոչ մի գործով չես զբաղւում...միայն գիտես զուգուել և զարդարուել հայելու առաջ։

ՌՕԶԱ.—Ո՞վ, ե՞ս։

ԺՈՋ.—Դու, ապա ե՞ս.

ՊԻՐՕՆՕ.—(կողմը) Էս է կկռուեն։

ԺՈՋ.—Դու, ի՞նչ ես այդտեղ փնթփնթում։

ՊԻՐՕՆՕ.—Ե՞ս...ես ոչինչ պարոն։

ԺՈՋ.—Սուտ եմ ասում, տիկինը որ յոգնում է, դու ես շարունակում նորա գործը։ Այն օրուանից երբ Բարոն Ռօզէնը այս տունը ոտք դրեց...

ՌՕԶԱ.—Ինչ բարոն. այն, որ մի ծիծաղելի նամակ էր գրել ինձ։

ԺՈՋ.—Հէնց նա։

ՌՕԶԱ.—Բայց չէ որ ես քեզ ինքս ցոյց տուի նորա նամակը—վերջապէս ես չեմ կարող արգելել ինձ նամակ գրել (քնքշաբար)։ Բաւական է, արի հաշտուենք...(մօտենում է նորան)։

ԺՈՋ.—(յետ հրելով նրան) Ոչ ոք չի համարձակուի մի կնոջ նամակ գրել, եթէ նա ինքը տեղիք չտայ, ես յիմար չեմ և շատ լաւ եմ հասկանում քո խորամանկութիւնները։

ՊԻՐՕՆՕ.—(որը ուղղում էր անկողինը)։ Տիկին, պարոնի անկողինը պատրաստ է։

ՌՕԶԱ.—Լաւ, դու գնա (Պիրօնօն գնում է) Պարոն, դու ասացիր, որ ես խորամանկութիւն եմ անում...

ԺՈՋ.—Այո, ասել եմ և մի բան էլ աւել։

ՌՕԶԱ.—(բարկացած) Ուրեմն այդպէ՞ս...

ԺՈՋ.—Այո, բերանս մի բանալ...ապա թէ ոչ...(կողմը) Լաւ պրծայ։

ՌՕԶԱ.—Բայց դու սպասիր, այդ բոլորը քեզ շատ թանգ կնստի, գնամ կորչեմ, որ քո զազրելի երեսը չտեսնեմ...խելագա՛ր։ Տես, սենեակս չգաս ապա թէ ոչ ոտքերդ կկոտրեմ, հասկացա՞ր։

ԺՈՋ.—Եթէ գամ կոտրիր, դու էլ իմ սենեակս չգաս...մնաս բարև։

ՌՕԶԱ.—Նորից կրկնում եմ, չգաս սենեակը...(գնում է)։

ԺՈՋ.—((ետեւից) Շուն դառնայ, ով որ գայ։

ՏԵՍԻԼ 3.

ԺՈՋԷՖ—յետոյ ԼԻՆԴՈՐ.

ԺՈՋ.—Լաւ ազատուեցի։ (ականջ է դնում

ղոնեերից) Դուռն էլ կողպեց, ուրեմն այլ ևս չէր գալ. բայց իսկապէս Ռօզան շատ լաւ կին է, սակայն ոչինչ—վաղը կհաշտուենք. ինչ արած, չէի կարող Ֆլօրենտինաի խօսքը դրժել։ Ո՞ւր է սև զգեստս, թաշկինակս, գտայ (գնում է շիրմայի հետեւը)։ Պէտք է մի փոքր գեղեցկանալ։ (ղուռը բախում են) Մտէք, ով պէտք է լինի (նորից բախում) Մտէք (դարձեալ բախում) Մտէք-մտէք։

ԼԻՆԴ.—(մտնելով) Կապիտան։

ԺՈԶ.—Ո՞վ է։

ԼԻՆԴ.—Ես եմ, կապիտան։

ԺՈԶ.—Ո՞վ։

ԼԻՆԴ.—Ես եմ, կապիտան, Լինդօրը։

ԺՈԶ.—Դո՞ւ ես, Լինդօր, մօտեցիր, ինչ ես ուզում։

ԼԻՆԴ.—Առանձին ոչինչ, կապիտան, գնդապետն է ուղարկել։

ԺՈԶ.—Լաւ, մի քիչ սպասիր։

ԼԻՆԴ.—Շատ բարի, կապիտան, կսպասեմ որքան կամենաք։

ԺՈԶ.—(ղուրս գալով) Այժմ, ասա, ինչ ես ուզում։

ԼԻՆԴ.—Առողջութիւնդ կապիտան, գնդապետն է ուղարկել ինձ, այս թղթերը ձեզ յանձնելու։

ԺՈԶ.—Լաւ, բայց չէ՞ր ինքը պէտք է գար։

~~ԼԻՆԴ.~~—Բայց ինչու այսքան ուշ բերիր։

ԼԻՆԴ.—Կապիտան, տեղ չէ մնացել որ ձեզ չփնտրէի, ամեն տեղ ման եմ եկել և ահա վերջապէս ես գտայ։

ԺՈԶ.—Լաւ, ասա տեսնեմ ինչ նորութիւն կայ։

ԼԻՆԴ.—Առողջութիւնդ, կապիտան — նոր բան չկայ։

ԺՈԶ.—Զինուորները բոլորը իրանց տեղն են, ոչ ոք պակաս չէ։

ԼԻՆԴ.—Բոլորը. բացի Բուլօնից։

ԺՈԶ.—Ի՞նչու, դեռ չէ՞ վերադարձել։

ԼԻՆԴ.—Վերադարձաւ, կապիտան, բայց այնքան էր խմել, որ ոտքի վրայ չէր կարողանում կանգնել, տասնապետը նրան բանտարկեց։

ԺՈԶ.—Շատ լաւ է արել, իսկ դու չե՞ս խմում։

ԼԻՆԴ.—Ոչ, կապիտան, խմում եմ, միայն ջուր եմ խմում։

ԺՈԶ.—Շատ լաւ ես անում։ (ղռան ճեղքից ականջ է դնում) Կարծես լաց է լինում, բայց ինչ անենք (Ժամացոյցին նայելով)։ Կէս ժամ է մնացել, ճիշտ 25-րոպէ, իսկ եթէ յանկարծ իմ գնալուց յետոյ գայ և ինձ այստեղ չգտնի, բանս բուրդ կլինի—ինչ անեմ (մտածում է)։

ԼԻՆԴ.—Ինձ վերաբերեալ տալիք հրաման չունի՞ք—կապիտան։

ԺՈԶ.—Ո՛չ, (կողմը) արի սրան իմ խալաթը

հագցնեմ, պարկեցնեմ անկողնումս իմ տեղը, Ռոզան ինչ կարող է իմանալ այդ ես եմ թէ ուրիշը, կկարծէ, որ ես քնած եմ և դուրս կերթայ. հիանալի միտք։

ԼԻՆԴ. –Ուրեմն, ես գնամ, կապիտան։

ԺՈԶ.—Գնում ես գնա։

ԼԻՆԴ.—Լսում եմ, կապիտան։

ԺՈԶ.—Ոչ, սորանից լաւ ոչինչ չի լինի. Լինդօր։

ԼԻՆԴ.—Հրամայեցէք, կապիտան։

ԺՈԶ.—Մօտ տրի տեսնեմ. կարող ես լաւ խոմփալ։

ԼԻՆԴ.—Ի՞նչպէս թէ խոմփալ։

ԺՈԶ.—Խոմփալ չէս հասկանում, երբ մարդ քնած ժամանակ խոմփում է։

ԼԻՆԴ.—Լաւ, ասենք թէ խոմփացրի, յետոյ։

ԺՈԶ.—Ուրեմն խոմփացրու տեսնեմ։

ԼԻՆԴ.—Կապիտան, ես չեմ կարող—բայց ահա Բուռլօնը երբ հարբում է ճիշտ խոզի նման է խոմփացնում։

ԺՈԶ.—Իսկ դու խոմփա մարդու նման, ինչ գործ ունես Բուռլօնի հետ։ Դէ խոմփա։

ԼԻՆԴ.—Ձեր ներկայութեամբ ամօթ է, կապիտան, իսէր Աստուծոյ, աւելի լաւ է գնամ Բուռլօնին ուղարկեմ։

ԺՈԶ.—(կողմը) Ճիշտ իմ ուզած մարդն է։ (նորան) Ամենևին ամօթ չէ, խոմփա տեսնեմ։

ԼԻՆԴ.—Ամօթ է մի զինուորի համար իւր կապիտանի ներկայութեամբ խոմփացնէ։

ԺՈԶ.—(բարկացած) Ես քեզ ասում եմ խոմփա, եթէ ոչ մի ամիս բանտարկել կտամ քեզ։

ԼԻՆԴ.—Լսում եմ, կապիտան, խոռ, խոռ, խոռ։

ԺՈԶ.—Կէցցես, դէ այժմ գնա քնիր։

ԼԻՆԴ.—Լսում եմ, կապիտան(ուզում է գնալ)։

ԺՈԶ.—Այդ ո՞ւր ես գնում։

ԼԻՆԴ.—Գնում եմ զօրանոց քնելու, կապիտանը հրամայեց որ գնամ քնեմ։

ԺՈԶ.—Ոչ, սպասիր։

ԼԻՆԴ.—Կապիտան, դուք չհրամայեցիք, որ գնամ քնեմ։

ԺՈԶ.—Այո, միայն այստեղ, իմ անկողնում։

ԼԻՆԴ.—Օ՜, կապիտան մինչև այժմ այդպիսի բան չեմ արել և չեմ էլ անի։

ԺՈԶ.—Կատարիր ինչ որ հրամայում եմ քեզ, եթէ ոչ անմիջապէս կուղարկեմ քեզ բանտը։

ԼԻՆԴ.—Կամենաք բանտարկեցէք,կապիտան, կամենաք մորթեցէք, բայց այդ չեմ անի, ձեզ հետ միասին մի վերմակի տակ չեմ պարկիլ, դուցէ մի ուրիշ զինուոր համաձայնուի, բայց ես այդ բանը չեմ անիլ։

ԺՈԶ.—Ի՞նչ ես յիմար յիմար դուրս տալիս, ես չեմ պարկելու, դու պիտի միայն պարկես։

ԼԻՆԴ.—Այդ ինչպէս...ապա դուք...

ԺՈՋ.—Ես զօրանոց պիտի գնամ։

ԼԻՆԴ.—Կէս գիշերին։

ԺՈՋ.—Ի՞նչ գիշեր, ժամի 8-ն է դեռ։

ԼԻՆԴ.—Աւելի վատ։

ԺՈՋ.—Առ դիր գլխիդ (թասակ դնելով զըլխին) հանուիր, մտիր անկողինս, վերմակը քաշիր գլխիդ ու խռմփա։

ԼԻՆԴ.—(կողմը) Ինչ որ դժուար բան կայ ինձ է պատահում։ (Նորան) Բայց ես ինչպէս հանուեմ ձեր առաջ, կապիտան, չեմ կարող։

ԺՈՋ.—(կողմը) Կատարեալ աւանակ է սա։ (Նորան) Լաւ, մի՛ հանուիր, թասակդ բաւական է, վերմակը քաշիր գլխիդ, մտիր, շուտ (հրելով Նորան անկողինը, վարագոյրը քաշում է եւ նայում է ժամացոյցին)։ Ճիշտ 5 րոպէ է մնացել. քնեցիր։

ԼԻՆԴ.—Այո՛, բայց քունս չէ տանում—խռ, խռ, խռ։

ԺՈՋ.—(ծիծաղելով) Դեռ չէ, աւանակ, նայիր, Լինդօր, լաւ լսիր և զգուշացիր, եթէ իմ պատուէրներից դուրս մի բան անես, գնդակահար անել կտամ քեզ. լսիր, վերմակը քաշիր գլխիդ այնպէս, որ միայն թասակդ երևայ, հէնց որ դռան ձայն լսես իսկոյն սկսիր խռմփալ։

ԼԻՆԴ.—Կապիտան, քնեմ այնպէս խռմփամ, թէ արթուն խռմփամ։

ԺՈՋ.—Չէ, չքնես մինչև իմ գալը, քեզ քընած ձևացրու։

ԼԻՆԴ.—Ուրեմն ձեր գնալուց յետոյ քնեմ։

ԺՈՋ.—Ոչ, լսիր, ասեմ, եթէ ծառան կամ աղախինը ներս գան, ջուր բերեն, կամ դան լոյս հանգցնելու, կամ խօսեն քեզ հետ, դու ոչ մի ձայն չհանես, այլ շարունակ խռմփա մինչև որ նրանք դուրս կգնան. հասկացար։

ԼԻՆԴ.—Հասկացայ, կապիտան, իսկ եթէ ձեր տիկինը գայ, այն ժամանակն էլ խռմփամ։

ԺՈՋ.—Լսիր, աւանակ, յիմարաբար մի դուրս տալ, նա չի գայ, բայց եթէ գայ միևնոյն է խռմփա, հասկացար, դէ, ես գնացի (գնում է)։

ԼԻՆԴ.—(մենակ, վարագոյրը քանալով) Լաւ թակարդ ընկայ, երանի ոտքս կոտրուէր այստեղ չգայի. յանկարծ եթէ քունս տանի և չը խռմփամ...կապիտանը ինձ սպանել կտայ (լսելով դռան ձայնը) Ի՞ռ, խ՞ռ, խ՞ռ։

ՏԵՍԻԼ 4.

ԼԻՆԴՕՐ և ՊԻՐՕՆՕ

ԼԻՆԴ.—(շարունակ խռմփում է) Ի՞ռ, խ՞ռ...

ՊԻՐՕՆՕ.—(լիմօնադի շիշը եւ բաժակը ձեռքին ներս մտնելով դնում է մահճակալի մօտ եղած փոքր սեղանի վերայ) Պարոն, ահա ձեր լի-

մօնադը և բաժակը. իսկ ինձ պատուիրելու բան չունիք։

ԼԻՆԴ.—(շարունակ խոմփացնում է) Ա՜ռ, խ՜ռ...

ՊԻՐՕՆՕ.—Խեղճը քնեց. տիկնոջ հետ այնքան կռուեց որ քունը տարաւ ու քնեց...

ԼԻՆԴ.—Ա՜ռ, խ՜ռ, խ՜ռ...

ՊԻՐՕՆՕ.—Եթէ հարկաւոր լինեմ, զանգը սեղանի վրայ է (գնում է հանգցնելով լամպը)։

ԼԻՆԴ.—(մենակ վերկենալով) Լիմօնադ, հրաշալի բան, արդեօք խմեմ թէ ոչ...սատանան տանի, մի քանի ժամ էլ ես կապիտան դառնամ (խմում է)։ Հիանալի է...ճիշտ որ աւանակ զինուոր. գնդակի առաջ դու գնա, իսկ այս տեսակ հրաշալի ըմպելիքը կապիտանները խմեն. եկ մէկ էլ խմեմ (խմում է)։ Ուռ՜ա, սիրտս հովացաւ։ (լսում է դռան ձայնը, Լինդ. իսկոյն պարկում է պարկում է եւ խոմփացնում։ Ռօզան մտնում է մոմը ձեռքին)։

ՏԵՍԻԼ 5.

ԼԻՆԴՕՐ և ՌՕԶԱ

ՌՕԶԱ.—(մօտենալով անկողնին) Դու քնած ես, սիրելիս...քնել է...խեղճ Ժոզէֆ—չեմ ուզում խռով ձեալ հետը, որովհետև շատ լաւ մարդ

է. ինձ շատ է սիրում, միայն այն յիմար բարձրի համար ինձ խանդում է, ասենք ես էլ պակաս խանդոտը չեմ։ Ժոզեֆ, դու քնած ես, լաւ, դիտմամբ քեզ քնած մի ձևացնիր, զարթիր, ես եմ քո Ռօզան, քո կինը, զարթիր հաշտուենք. դէ լաւ, խնդրեմ զարթիր, երդւում եմ, սրանից յետոյ այլ ես չեմ կռուիլ և չեմ բարկացնիլ քեզ, ինչ որ ասես կլսեմ քեզ, տես, եթէ զարթնում ես զարթնիր, ապա թէ ոչ վարդագոյնները կրակ կտամ։

ԼԻՆԴ.—(վեր թռչելով եւ խոմփացնելով) Իսէր Աստուծոյ մի այրիր ինձ կվերկենամ։

ՌՕԶԱ.—(վախեցած) Ախ օգնեցէք, սպանեցին...ինչ ես ուզում, ով ես դու, գող ես...

ԼԻՆԴ.—Ո՛չ, գող չեմ։ Ա՜ռ, խ՜ռ, խ՜ռ...

ՌՕԶԱ.—Եթէ գող չես, ուրեմն ով ես դու, ինչու ես մտել այստեղ. շուտ դուրս կորիր։

ԼԻՆԴ.—Դուրս գնալ չեմ կարող, տիկին, մինչև նորա վերադառնալը պարտաւոր եմ խոմփալ, խ՜ռ, խ՜ռ, խ՜ռ։

ՌՕԶԱ.—Զոռ, ցաւ. ինչ ես խոմփացնում, դուրս կորիր այդտեղից։

ԼԻՆԴ.—Ինձ կգնդակահարէ, չեմ կարող գընալ. խ՜ռ, խ՜ռ, խ՜ռ։

ՌՕԶԱ.—Չես կարող գնալ...այ քեզ (գրքերը նետելով նորան)։ Սրիկայ, աւազակ, դուրս, եթէ ոչ կբղաւեմ և բոլոր հարևաններին կհաւաքեմ։

ԼԻՆԴ.—Ո՛չ, իսէր Աստուծոյ, մի բղաւիր, կերթամ, միայն մի փոքր սպասիր... խ՜ռռ՜ռ, խ՜ռ՜ռռ...

ՌՕԶԱ.—Այս ինչ անտանելի դրութիւն է... Ժողէֆը. Պիրօնօ, Պիրօնօ.

ԼԻՆԴ.—Իսէր Աստուծոյ, իզուր տեղը ինձ մի պատժիր, թող մի քիչ էլ խ՜ռմփամ, խ՜ռ, խ՜ռ, խ՜ռ։

ՌՕԶԱ.—Վերջապէս ասա ո՞վ ես դու, խօսիր։

ԼԻՆԴ.—Խօսել չեմ կարող, արգելուած է, խ՜ռ, խ՜ռ, խ՜ռ։

ՌՕԶԱ.—Այս ինչեր է խօսում, Տէր Աստուած, դուրս կորիր, սրիկայ։

ԼԻՆԴ.—«Կորիր, կորիր», եթէ ես կորչեմ, ապա ով խռմփայ, խ՜ռ, խ՜ռ, խ՜ռ։

ՌՕԶԱ.—Դուրս կորիր ասում եմ։

ԼԻՆԴ.—Ի՞նչպէս գնամ. քանի որ գլխարկ չունեմ, խ՜ռ, խ՜ռ։

ՌՕԶԱ.—(Նետում է գլխարկը) Առ, դուրս կորիր։

ԼԻՆԴ.—Ո՞ր տեղից գնամ, դուռը փակ է։

ՌՕԶԱ.—Ինչպէս թէ փակ է (Նայելով դռան) Լաւ, թռիր պատուհանից, միայն հեռացիր այստեղից։

ԼԻՆԴ.—Այս ի՞նչ դժոխքը ընկայ Տէր Աստուած։ Իսէր Աստուծոյ, տիկին, ինձ հանգիստ

թող, ապա թէ ոչ եթէ գայ և ինձ այստեղ չը-գտնէ...խ՜ռռ։

ՌՕԶԱ.—Դուրս թռիր պատուհանից, ասում եմ քեզ։

ԼԻՆԴ.—Լաւ ես ասում, բայց չէ՞ որ մէջքս կկոտրեմ, խ՜ռռ։

ՌՕԶԱ.—Թռիր, եթէ ոչ բղաւեցի։

ԼԻՆԴ.—Մի բղաւիր, գնում եմ, թռչում եմ, բայց թէ ո՞ւր կդուրս գամ այս պատուհանից, խ՜ռ, խ՜ռ, խ՜ռ։

ՌՕԶԱ.—Փողոցը։

ԼԻՆԴ.—Իսկ այնտեղի՞ց, խ՜ռ, խ՜ռ, խ՜ռ։

ՌՕԶԱ.—Չհանդամը։ Պիտի թռչես թէ ոչ։

ԼԻՆԴ.—Տեսս, տիկին, ես ինձ տուած հրամանը կատարում էի և կարգին խռմփացնում էի, միայն դու չթողեցիր. եթէ մի բան պատահի, կապիտանին դու պատասխան կտաս։ (Թռչում է պատուհանից, դռնից լսւում է երկու շան հաչոց, նորից պատուհանից ներս է մտնում) Այն երկու գաղանները կթողնեն որ ես դուրս գնամ։ Ոչ, տիկին, ինչ ուզում ես արա ես այստեղից չեմ դուրս գնալ։ Ինձ ինչ որ հրամայուած է, ես այն պիտի անեմ։ (Մտնում է անկողին եւ խռմփացնում)։

ՌՕԶԱ.—Այս ի՞նչ դժոխք է, Տէր Աստուած, Պիրօնօ, Պիրօնօ։

ՊԻՐՕՆՕ.—(ձեռքին նամակ) Ի՞նչ էք. հրամայում, տիկին։

ՌՕԶԱ.—Ո՞ւր ես կորել։

ՊԻՐՕՆՕ.—Գնացել էի պարտէզի դռան մօտ և այդ միջոցին մի պարոն տալով ինձ այս նամակը ասաց «ծածուկ ալիկնոջդ տուր»։

ՌՕԶԱ.—Ի՞նչ նամակ, տեսնեմ, դարձեալ բարոնն է գրել, լաւ, դու գնա իմ սենեակս և երբ կանչեմ կգաս, գնա։

ՊԻՐՕՆՕ.—Լսում եմ, տիկին (գնում է աջ դռնից)։

ՌՕԶԱ.—Այլ ևս կասկած չկայ, որ այս ամենը բարոնի սարքածն է, լաւ տեսնենք, էյ, բարոն, դուք շատ անամօթ մարդ էք։

ԼԻՆԴ.—Անամօթ—բարոն։

ՌՕԶԱ.—Ես ձեր խորամանկութիւնը հասկացայ...

ԼԻՆԴ.—Ինչ խորամանկութիւն, խ՞ռ, խ՞ռ, խ՞ռ։

ՌՕԶԱ.—Ուզում էք ինձ ևս խեղճ Ամալիայի պէս դժբաղտացնէք։

ԼԻՆԴ.—Տիկին, ես բան չեմ հասկանում, խ՞ռ, խ՞ռ։

ՌՕԶԱ.—Բարոն, ես ձեզ հետ եմ։

ԼԻՆԴ.—Ես բարոն չեմ։ Խ՞ռ, խ՞ռ, խ՞ռ։

ՌՕԶԱ.—Դու բարոն չէս, հապա ո՞վ ես։

ԼԻՆԴ.—Ես Լինդօրն եմ, չորրորդ գնդի գինուորը, խ՞ռ, խ՞ռ։

ՌՕԶԱ.—Զինուո՞ր, իսկ այստեղ ի՞նչ էք շինում։

ԼԻՆԴ.—Խումփացնում եմ։ Խ՞ռ, խ՞ռ, խ՞ռ։

ՌՕԶԱ.—Ի՞նչու համար ես ծածուկ եկել և մտել անկողինը։

ԼԻՆԴ.—Ճիշտն ասեմ։

ՌՕԶԱ.—Ասա։

ԼԻՆԴ.—Որովհետև...

ՌՕԶԱ.—Որովհետև ի՞նչ։

ԼԻՆԴ.—Որովհետև վախենում եմ որ ինձ չը գնդահարել տայ։

ՌՕԶԱ.—Ո՞վ։

ԼԻՆԴ.—Կապիտանը։

ՌՕԶԱ.—Ի՞նչպէս։

ԼԻՆԴ.—Կապիտանը ինձ հրամայեց պարկել իրա անկողնումը և ով գայ չգայ՝ խումփամ։

ՌՕԶԱ.—Իսկ ինքը ո՞ւր գնաց։

ԼԻՆԴ.—Ասաց որ զօրանոց բայց կարծեմ սուտ է։

ՌՕԶԱ.—(ապշած մտենալով զրասեղանին նկատում է նամակը եւ կարդում)։ «Այսօր երեկոյ ժամը 8-ին եղիր օպերայում, գոնէ մի քանի ժամ կարողանամ կարօտս առնել։ Քո Ֆլորենտինա»։ Ուրեմն ահա թէ ի՞նչ...այս դժգոհութիւնը կնշանակէ դիտմամբ էր սարքած որ գնա իրա Ֆլորենտինայի մօտ...լաւ...անիծուի այն օրը

այն ժամը, երբ ես հանդիպեցի նորան (լաց է լինում)։

ԼԻՆԴ.—Ի՞նչ եղաւ, տիկին, մի վախենար ես այստեղ եմ։

ՌՕԶԱ.—Ոչինչ, մի փոքր լաւ չեմ զգում ինձ։

ԼԻՆԴ.—Առ, տիկին, լիմօնադ խմիր կըլաւանաս...չե՞ս խմում, լաւ, ես կխմեմ, քո կենացը (խմում է)։ Այժմ լաւ ես։

ՌՕԶԱ.—Մի փոքր գլուխս է ցաւում։

ԼԻՆԴ.—Ոչինչ, գնա, պարկիր կանցնի։

ՌՕԶԱ.—Քունս չի տանում, ոչինչ կանցնի, խօսիր մի բանի մասին։

ԼԻՆԴ.—Ի՞նչի մասին խօսեմ, տիկին։

ՌՕԶԱ.—Պատմիր ինչ կայ զօրանոցում։

ԼԻՆԴ.—Առողջութիւնդ տիկին, առանձին ոչինչ չկայ, հա՜ մի զինուոր կայ—Բուրլօն անունով։

ՌՕԶԱ.—Լաւ Բուռլօնի մասին պատմիր։

ԼԻՆԴ.—Բուռլօնը միշտ հարբած է լինում և տասնապետն էլ նորան բանտարկում է։

ՌՕԶԱ.—Օպէրայում, Ֆլօրենտինա, ժամը 8 ին, լաւ, ես քեզ ցոյց կտամ։

ԼԻՆԴ.—(կողմը) Այս ինչեր է խօսում, խելքը կորցրել է։

ՌՕԶԱ.—Պիտի խօսես վերջապէս թէ ոչ։

ԼԻՆԴ.—Այլ ևս խօսելու բան չունեմ, տիկին,

ուզում ես քեզ համար էլ մի քիչ խումփամ։ (պարկում է յատակի վերայ եւ խումփում)։ Խ՜ռ, խ՜ռ, խ՜ռ։

ՌՕԶԱ.—Տեսէք թէ ու�ն է թողել իրա տեղ։ Ի՞նչ ես խումփացնում, աւելի լաւ է երգիր։

ԼԻՆԴ.—Ո՞վ...ե՞ս։

ՌՕԶԱ.—Այո՛, դու։ «Օպերա, Ֆլօրենտինա», պէտք է երգես թէ ոչ։

ԼԻՆԴ.—Այո՛ տիկին, թէ կերգեմ և թէ կը պարեմ։

ՌՕԶԱ.—Դէ շո՛ւտ։

ԼԻՆԴ.—(երգում է եւ պարում)։

ՌՕԶԱ.—Կեցցես, կեցցես։

ԼԻՆԴ.—Հաւանեցիր, լաւ երգեցի։

ՌՕԶԱ.—Այո՛, այո՛ շատ լաւ, մէկ էլ երգիր։

ԼԻՆԴ.—(կողմը) Կեցցես Լինդոր, մարդ ոչ ուտի, ոչ խմի այսպիսի տիկնոջ հետ պարի և երգի (երգում է յանկարծ յիշելով)։ Տէր իմ Աստուած, ինձ հրամայուած էր ձայն չ՛հանել, միայն խումփացնել (գնում է ղէպի անկողինը)։

ՌՕԶԱ.—Ո՞ւր ես գնում։ Ի՞նչու չես երգում։

ԼԻՆԴ.—Չեմ ուզում, խէր Աստուծոյ, տիկին, թող գնամ խումփամ (մտնում է անկողին, դրսից ոտքի ձայն է լսւում)։

ՌՕԶԱ.—Նա ինքն է...գալիս է, աւելի լաւ է հեռանամ այստեղից (գնում է)։

ՏԵՍԻԼ 6

ԼԻՆԴՈՐ և ԺՈԶԷՖ

ԺՈԶ.—(մտնում է) Ֆու, սատանան տանի, ինչ յիմարութիւն արի. խեղճ Ֆլորենտինան առաջ որքան գեղեցիկ էր, իսկ այժմ բոլորովին փչացել է։ Իմ կինս հազար անգամ գեղեցիկ է. լաւ է, որ ոչինչ չէ նկատել. այս ապուշին պէտք է արթնացնել և ճանապարհ դնել (մտնում է Ռոզան մոմը ձեռքին)։

ՏԵՍԻԼ 7

ՆՈՅՆՔ և ՌՈԶԱ

ՌՈԶԱ.—Այս ինչ է, ժամի ինն է, դեռ չես պարկել։

ԺՈԶ.—Քունս չի տանում, շատ անհանգիստ եմ։

ՌՈԶԱ.—Ի՞նչ է պատճառը...մի գուցէ դու մոռացել ես, որ մենք հաշտուել ենք։

ԺՈԶ.—Ինչպէս, ինչ։

ՌՈԶԱ.—Մոռացար, իսկապէս ես քեզ նման ամուսնու հետ երկար խռով մնալ չեմ կարող։

ԺՈԶ.—Ինչպէս, ինչ ես ասում չեմ հասկանում։

ՌՈԶԱ.—Խորամանկ, իբր թէ չես հասկանում որ մենք հաշտուեցինք...

ԺՈԶ.—Դու կատակ ես անում։

ՌՈԶԱ.—Կէս ժամ որանից առաջ, քո անկողնում չը հաշտուեցինք, մոռացար։

ԺՈԶ.—Ես քեզ ներեցի, քեզ հետ հաշտուեցինք։

ՌՈԶԱ.—Մի գուցէ զղջում ես։ (Լինդոր շարունակ խոփում է)։

ԺՈԶ.—Ներողութիւն, ինչ, որտեղ։

ՌՈԶԱ.—Ասում ես չես քնել, ուրեմն շատ խորն ես եղել քնած որ չես յիշում։

ԺՈԶ.—(կողմը) Այս ինչ արի, ինքս իմ տունը քանդեցի (ընկնում է աթոռի վրայ)։

ՌՈԶԱ.—Ի՞նչ եղաւ քեզ։

ԺՈԶ.—Ոչինչ, ոչինչ, մի պարզ ասա, ինչ հաշտուեցի, ինչպէս։

ՌՈԶԱ.—Ինչ տարօրինակ մարդ ես դու էլ, կէս ժամ առաջ արածդ չես յիշում։

ԺՈԶ.—Բայց որտեղ, ինչպէս, ինչ ես ասում։

ՌՈԶԱ.—Է՛հ, բաւական է խնդրեմ...աւելի լաւ է գնա քնիր, բարի գիշեր (դուրս է գնում)։

ՏԵՍԻԼ 8.

ԺՈՉԷՖ և ԼԻՆԴՕՐ

ԺՈՉ.—Սա դեռ ինձ քիչ է, տեղն է ինձ։ (Լինդօրը խոմփացնում է) Զահրումար, քաւթառ շուն, անիծուիս քո խոմփալովդ (ժստենալ. նորան)։ Լաւ խոմփացրիր։

ԼԻՆԴ.—Այո, կապիտան։

ԺՈՉ.—Անպիտան, սրիկայ, լաւ ես խոմփացրել, դուրս արի։

ԼԻՆԴ.—(ձեռքը ճակատին դնելով) Ի՞նչ կը հրամայէք, կապիտան։

ԺՈՉ.—Սրիկայ, աւազակ, ասա շուտ ի՞նչ է պատահել իմ գնալուց յետոյ, ապա թէ ոչ շանն նման կխեղդեմ։

ԼԻՆԴ.—(կողմը) Լաւ թակարդն ընկայ։

ԺՈՉ.—Ո՞վ է եկել այս սենեակը։

ԼԻՆԴ.—Ծառան եկաւ—լինօնադ բերեց։

ԺՈՉ.—Ցետոյ։

ԼԻՆԴ.—Ցետոյ ի՞նչ...

ԺՈՉ.—Կինս չեկաւ...

ԼԻՆԴ.—Եկաւ և այն էլ ի՞նչպէս, բայց ես հրաշալի խոմփացնում էի։

ԺՈՉ.—Եկաւ։

ԼԻՆԴ.—Այո, եկաւ, բայց ես խոմփացնում էի։

ԺՈՉ.—Լաւ խոմփացրիր։

ԼԻՆԴ.—Հրաշալի, ամենևին ժամանակ չէի տալիս խօսելու, շարունակ խոմփացնում էի։

ԺՈՉ.—Բայց ինչպէ՞ս եկաւ, ասա, անիրաւ, ասա։

ԼԻՆԴ.—Առաջ տիկինը կարծեց թէ ես Բարօնն եմ։

ԺՈՉ.—Բարօնը, յետոյ։

ԼԻՆԴ.—Ցետոյ, էլ ինչ յետոյ, այնպէս էի խոմփացնում, որ մարդ կը զարմանար։

ԺՈՉ.—Ցետոյ, յետոյ։

ԼԻՆԴ.—Հա, յետոյ կարծեց թէ ես Բարօնն եմ, մօտ եկաւ, ձեռքերով մազերս շոյեց, համբուրեց, յետոյ սկսեց հետս քաղցր խօսել...ես յետոյ այնպէս էի խոմփացնում, կապիտան...

ԺՈՉ.—Լաւ էիր խոմփացնում, աւանակ։

ԼԻՆԴ.—Հրաշալի։

ԺՈՉ.—(ընելով կոկորդից) Ասա, սրիկայ, ի՞նչպէս էիր խոմփացնում։

ԼԻՆԴ.—Խեղտեցին...վայ...թողէք ասեմ։

ԺՈՉ.—Ասա շուտ, յետոյ։

ԼԻՆԴ.—Ցետոյ ինձ ասաց դուրս, եթէ ոչ կը բղաւեմ ասում է, ես ասացի դուրս գնալ չեմ կարող, ինչու՝ ասաց. եթէ ասացի, եթէ ես դուրս գնամ, ո՞վ պիտի խոմփացնի, ասացի ես, յետոյ հարցրեց թէ ո՞վ եմ ես, ես էլ ասացի որ, ես եմ, զինուորը Լինդօրը. հէնց որ իմացաւ թէ զինուորը

եմ, հանդստացաւ, յետոյ սկսեց հետս քաղցը խօսել, բայց ես էլի խռմփացնում էի։

ԺՈԶ.—(ընելով կոկորդից) Ա՜յ, անպիտան, սրիկայ, խռմփացնում էիր։

ՏԵՍԻԼ 9.

ՆՈՅՆՔ և ՌՕԶԱ.

ՌՕԶԱ.—(մտնելով) Մեղաւորը դու ես, Ժոզէֆ։

ԺՈԶ.—Ե՞ս։

ՌՕԶԱ.—Այո՛, դու առ կարդա և ամաչիր, անամօթ, այս խեղճ զինուորը ինչ է արել, որ նրան ծեծում ես (տալիս է նամակը)։

ԺՈԶ.—(նամակը պատռելով) Իրաւունք ունես, տիկին, ներիր ինձ։ Այ անպիտան, դու ես ամեն բանի մէջ մեղաւորը, եթէ շարունակ խռմփացնէիր և չխօսէիր, այդպէս չէր լինի։

ԼԻՆԴ.—Ես առաջ խռմփացրել եմ, յետոյ եմ խօսել, հարցրէք տիկնոջից։

ԺՈԶ.—Վեց ամիս բանտը կնստես։

ԼԻՆԴ.—Այս ինչ է, Տէր Աստուած, ուրիշի տեղը խռմփացրու և միևնոյն ժամանակը բանտը նստիր։

ՌՕԶԱ.—Եթէ սորան բանտը նստեցնեն, քեզ պէտք է գնդակահարեն, (Լինդոլին) ամենևին մի վախենար քեզ, ոչ ոք ձեռք չի տալ։

ԼԻՆԴ.—Իսկ օրէնքը։

ՌՕԶԱ.—(Ժոզէֆին) Նրա մեղը ինչո՞ւմն է։

ԼԻՆԴ.—Որ նորա փոխարէն խռմփացրել եմ։

ԺՈԶ.—Ախ, Լինդօր, եթէ տիկինը ինձ ների, ես էլ քեզ կներեմ, ճիշտ է նամակը ստացել եմ, բայց զղջում եմ։

ԼԻՆԴ.—Իսէր Աստուծոյ, տիկին, ներիր նրան և ազատիր ինձ։

ՌՕԶԱ.—Ես քեզ ներում եմ միայն խեղճ զինուորի պատճառաւ և տես որ այսուհետև այլ ես չկրկնուի։

ԺՈԶ.—Երբէք, գլուխս քարոզ եմ տուել, արի այժմ հաշտուենք։

ԼԻՆԴ.—Ես էլ գլուխս քարոզ եմ տուել, որ այսուհետև ուրիշի տեղ չխռմփացնեմ։



ՎԱՐԱԳՈՅՐ

ԶՈՔԱՆՉԻ ԳԱԼՈՒՍՏԸ

Վոդ. 1 առար.

ԹԱՐԳՄ.

Պ. ԱՐԱՔՍԵԱՆԻ

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ՄԻԼ ՆԻԿՈԼԱԵՎԻՉ,—Սպօրօվ։
ԱՆՆԱ ՄԱԿՍԻՄՈՎՆԱ,—Նորա կինը։
ԱԲԻԱ ՍԱՄՍՈՆՈՎՆԱ ՖՐԻԱԿԻՆԱ,—Սորա մայրը, այրի կին։

Գործողութիւնը կատարւում է Սպօրօվի ամառանոցում։

Այգի։ Աջ—ավանսցէնաի մօտ տուն, դիմացը ժողովրդի կողմից մի քաց պատուհան, որից երեւում է սենեակի մի մասը։ Ձախ նստարան եւ սեղան։ Դիմացը խորքում ամբողջ ընտի տարածութեան վերայ—ցանկապատ փոքրիկ մուտքով։

.....

ՏԵՍԻԼ 1.

ՍՊՕՐՕՎ, յետոյ ԱՆՆԱ ՄԱԿ.

ՍՊ.—(ցանկապատի մուտքում) Սպասէր, ես քեզ ցոյց կտամ...կբռնեմ մի լաւ կՁարդեմ, այն ժամանակ կհասկանաս, որ ուրիշի այգիներում թրև գալ չի կարելի...(գնում է նստարանի կողմը) Միրոպէ չեն թողնի հանգիստ...Սենեակում շոգ է, դուրս եկայ այգի լրագիր կարդալու, մի ըոպէ հանգիստ չեն թողնում։ Ֆու, էհ վերջապէս կարծեմ այժմ կարելի է շարունակել ընթերցանութիւնը...(կարդում է) Այսօրուայ դումայի վերջին նիստի ժամանակ...

ԱՆՆԱ.—(ընտի ետեւից) Միլիա, Միլիա, որտեղ ես։

ՍՊ.—Ահա տեսէք, մինչև հիմա ուրիշների հետ էի կուռում այժմ ստիպուած պէտք է լինեմ իմ ընտանիքին պատերազմ յայտարարել...

ԱՆՆԱ.—(ժոնելով) Ահա թէ դու որտեղ ես եղել, իսկ ես քեզ տանն էի փնտրում...

ՍՊ.—Ի՞նչ կայ, ի՞նչ է պատահել...Թողէք գոնէ հանգիստ լրագիր կարդամ խսէր Աստուծոյ...ամբողջ առաւօտ կամ մէկը, կամ միւսը չեն թողնում դումայի նախահաշիւը կարդալ...

ԱՆՆԱ.—Թող խնդրեմ այդ դումայի հարցերը։ Ուրախացիր, Միլիա, ուրախացիր...

ՍՊ.—Ի՞նչ պատճառաւ պէտք է ուրախանամ, որ ինձ հանգիստ չեն թողնում։

ԱՆՆԱ.—Մայրիկից ես նամակ ստացայ... նա գալիս է մեզ մօտ մեզ ուրախացնելու...լսիր, կարդամ։

ՍՊ.—Լաւ ուրախութիւն է, ինչ ասած։

ԱՆՆԱ.—Ահա լսիր...(կարդում է) «Իմ սիրելի զաւակս, քո նամակը...»(խօսում է) Դէ այստեղ գիտես առհասարակ ինչ են գրում· սիրում եմ, համբուրում եմ...(կարդում է), «իմ գալուստի ժամանակը ճշտապէս որոշել չեմ կարող, բայց յոյս ունեմ շուտով լինել ձեզ մօտ, որպէս զի տեսնեմ—իսկապէս դու այնպէս ես ապրում քո ամուսնու հետ, ինչպէս գրում ես՝ թէ ոչ»։ (ասում է) Ես նորան գրել էի որ դու լաւն ես, ազնիւ, սիրելի, թանկագին։

ՍՊ.—Եւ մի գուցէ նա քեզ հաւատացել է և իհարկէ այն ժամանակ նա ինձ չի հաւանի։

ԱՆՆԱ.—Քեզ չի հաւանի...իմ Միլիոն...նախ և առաջ, մեծապատիւ պարոն, իմ մայրս բոլորովին ինձ նման է...կնշանակէ քանի որ ես սիրում եմ այսպիսի մի անպիտանին, ուրեմն նա ևս պէտք է սիրէ...լսիր, տես յետոյ ինչ է գրում... (կարդում է) «Թէև դու հակառակ իմ ցանկութեան ամուսնացար, բայց քանի որ գրում ես թէ երջանիկ ես,—ես շատ ուրախ եմ...Այժմ իմ հանգստանալու ժամանակն է և իմ բոլոր շարժական և անշարժ կայքը ուզում եմ նուիրել (խօսում է) և այլն...համբուրում եմ...հասկանում ես, Միլիա, բոլորը մեզ է նուիրում...ահա թէ ինչպէս կապրենք քեզ հետ...

ՍՊ.—Այդ բոլորը շատ լաւ, բայց չէ գրում, երբ է գալու...կարելի էր գնալ կայարան—դիմաւորելու...դժբաղտաբար ես նորան չեմ էլ տեսել...

ԱՆՆԱ.—Բայց չէ՞ որ մենք ունինք նորա պատկերը։

ՍՊ.—Այո, որը հարիւր տարի սորանից առաջ էր նկարուած։

ԱՆՆԱ.—Կնշանակէ դուք կվիթ էք...նա քեզ չի ճանաչում, դու նորան։—Մայրիկս շատ բարի կին է...գիտես ինչ, Միլիա, ես նորան քո սե-

նեակումը կտեղաւորեմ...նա կարող է այսօր կամ վաղը գալ, պէտք է կարգադրել (գնում է)։

ՏԵՍԻԼ 2.

ՍՊՕՐՕՎ և ՖՐԻԱԿ

ՍՊ.—(առանձին) Ի՜նչ երջանկութիւն, զոքանչս գալիս է։ Առհասարակ ամբողջ աշխարհի զոքանչներին ատելով ատում եմ, իսկ իմ զոքանչին նա մանաւանդ...զոքանչ բառը արտասանելիս անգամ ինձ դող է բռնում...բը՛ը...նա մեր ամուսնութեան դէմ էր, իսկ այժմ գալիս է։ Շարունակենք ընթերցանութեամբ զբաղուել... որտեղ կանգ առայ...(փնտրում է)։

ՖՐ.—(հին ձեւի զգեստով, մտնում է ցանկապատի մուտքից)։ Ահա վերջապէս հասանք...(տեսնելով Սպօր.)։ Ա՜հա մի ինչ որ մարդ է նստած... կը հարցնեմ նորան...

ՍՊ.—Ահա վերջապէս գտայ...(կարդում է) «Վերջին դումայի նիստի ժամանակ»։

ՖՐ.—(նորան) Մեծապատիւ պարոն։

ՍՊ.—(շնայելով) Ահ...

ՖՐ.—Թոյլ տուէք ձեզ հարցնել, այս ամառանոցը ո՞ր համարն է։

ՍՊ.—(նոյնպէս) 28-ը։

ՖՐ.—(կողմը) Ինչ հպարտն է եղել...(նորան) Իսկ թոյլ տուէք ձեզ հարցնել...

ՍՊ.—(թողնելով լրագիրը) Ֆու, սատանան տանէ։ Մարդ համբերութիւնից դուրս կգայ...Մի բոպէ հանգիստ չեն թողնում...ի՞նչ էք ճանճի պէս ինձ կպել...

ՖՐ.—Ախ, ասացէք խնդրեմ...հարցնել էլ չէ կարելի ի՞նչէ։

ՍՊ.—Այս ամառանոցը 28 համարն է...և եթէ քոռ չէք, կարող էք ինքներդ տեսնել...

ՖՐ.—Դուք յանդուգն էք...գռեհիկ, կոպիտ։

ՍՊ.—(նստում է կարդալու) Շատ ուրախ եմ, որ ձեզ հաճոյանալ չեմ կարող։

ՖՐ.—Ես Նադվորնի Սավետնիկի պատուաւոր այրի եմ...

ՍՊ.—Շնորհաւորում եմ...(կարդում է) «Դումայի վերջին նիստի ժամանակ»...

ՖՐ.—Ախ դուծծկեր...ես ձեր հասակի որդիք ունիմ, դուք չէք համարձակուիլ ինձ հետ այդ ձևով խօսել։

ՍՊ.—Համբերութիւնս հատաւ...լսեցէք, պատուաւոր Նադվորնի Սավետնիկի այրի...եթէ դուք այս բոպէիս չէք կորչիլ այստեղից, ես ստիպուած կլինեմ դռնապանին կանչել...կորէք, մենք միայն շաբաթ օրերն ենք ողորմութիւն տալիս...

ՖՐ.—Ախ, ախ ախ...դուք ինչ իրաւունք ունիք ինձ հետ այդպէս անքաղաքավարի վարվելու...

ՍՊ.—Մի գուցէ կհրամայէք ֆրանսիական

քաղաքավարութեամբ վարուեմ ձեզ հետ...Խընդրեմ...ալէ վուզան...մի գուցէ ռուսերէն կամենաք...ուբիրայտես կշորտու...

ՖՐ.—Ռամիկ, գոեհիկ...ես եկել եմ բարեսրտութեամբ...

ՍՊ.—Սատանան գիտէ, թէ ով էք դուք... ձեր բարեսրտութեամբ մի գուցէ այստեղից մի բան թռցնէք...

ՖՐ.—Այդ ինչ էր է ասում...լաւ են հանդիպում ինձ...

ՍՊ.—Ապա ի՞նչ, կուզէիք որ երաժշտութիւնով հանդիպէինք ձեզ ի՞նչ է...կամ բենգալեան կրակներով...դուք չէ՞ք ուզում դուրս գնալ։ Ո՞չ։ Լաւ, մենք ձեզ ըստ արժանոյն ճանապարհ կ՚դնենք...Նիկիտա (գնում է)։

ՏԵՍԻԼ 3.

ՖՐԻԱԿ և յետոյ ԱՆՆԱ.

ՖՐ.—(առանձին)Ինչ անքաղաքավարութիւն, չլինի թէ այս անտաշը իմ աղջկայ ամուսինն է— Անիւտաի...այդ տեսակ ամուսիններով այժմ աշխարհը լիքն է...և երևի սա կնոջն էլ ծեծում է... քանի անգամ թուղթ բաց արի, միշտ դժգոհութիւն էր դուրս գալիս...իսկ ես դիտմամբ եկայ առանց նախազգուշացնելու...նամակներին ես այն-

քան էլ չեմ հաւատում։ Ինձ չես խափիլ...ամուսինը երևի բղաւել է կնոջ վերայ և ասել է... թէ գրիր մօրդ որ երջանիկ ես, նա էլ յիմարաբար գրել է...

ԱՆՆԱ.—(մտնելով) Գիտես ինչ, Միլիա... (տեսնելով նորան) Մայրիկ...սիրելիս։ Դու արդէն եկել ես, թանկագին մայրիկ...որքան ուրախ եմ...վերջապէս...(համբուրում է) վերջապէս ես քեզ տեսայ։

ՖՐ.—Աւելի լաւ կը լինէր, որ բոլորովին չը տեսնուէինք։

ԱՆՆԱ.—Այդ ինչու, այդ ի՞նչ ես ասում, մայրիկ։

ՖՐ.—Առանց ինձ դուք աւելի երջանիկ էք, բայց անհոգ եղիր, ես երկար չեմ մնալ ձեզ մօտ։ Կը հանգստանամ մի փոքր և կը վերադառնամ տուն։

ԱՆՆԱ.—Ինչպէս։

ՖՐ.—Այնպէս, կը նստեմ երկաթուղին և կերթամ։

ԱՆՆԱ.—Այս ի՞նչ է, ես չեմ հասկանում։ Իսկ ես քեզ անհամբերութեամբ սպասում էի. քեզ համար սենեակ եմ պատրաստել...

ՖՐ.—Ինչու ես նեղութիւն կրել...

ԱՆՆԱ.—Այդ ինչ տարօրինակ ես խօսում, մայրիկ, ես քեզ չեմ հասկանում։

ՖՐ.—Շատ ափսոս...

ԱՆՆԱ.—Քեզ հետ մի բան Է՞ պատահել։

ՖՐ.—Դեռ կայարանից այստեղ գալու ժամանակ կառապանը ինձ բարկացրեց...մէկ բուբլուց պակաս չբերեց...

ԱՆՆԱ.—Այո՛ այստեղ կառապանները թանկ են վերցնում։

ՖՐ.—Աւազակութիւն է, ուրիշ ոչինչ...փողոցները թողով լիքն է...

ԱՆՆԱ.—Բայց չէ՞ որ ջրում են։

ՖՐ.—Ինձ վերայ փորձեցի, մի դռնապան ամբողջ շորերս դրչեց...տրամվայի վագօնը քիչ էր մնում ինձ տակովն անէր...շարունակ զանգահարում էր յիմարը, կարծես չի կարող կողմը քշի...իսկ այստեղ մտայ ամառանոցը թէ չէ՝ մի ինչ որ անտաշ ռամկին հանդիպեցի։ Եւ ինչ լեզուով ասես ինձ սկսեց հայհոյել...լաւ է դեռ լեզուներ չգիտեմ։

ԱՆՆԱ.—Քեզ ո՞վ է վիրաւորել, մայրիկ։

ՖՐ.—Ով է նա չգիտեմ...ահա հէնց այստեղ նստած էր...լրագիրը ձեռքին...ինձ տեսաւ թէ չէ յարձակուեց կատաղած շան պէս։

ԱՆՆԱ.—Այդ ո՞վ կարող էր լինել...մեր տանը բացի Միլից ուրիշ տղամարդ չկայ։

ՖՐ.—Ուրեմն նշանակում է այդ նա է եղել քո գոված ամուսինը...ես քեզ քանի, անգամ նախազգուշացրի չամուսնանալ դորա հետ... ես սովոր չեմ այդպիսի ընդունելութեանը...դեռ

դռնապանի ետևից գնաց...ինձ դուրս է ուզում անել։

ԱՆՆԱ.—Այդ անկարելի է, մայրիկ։

ՖՐ.—Ես սուտ խօսելու կարիք չունեմ։

ԱՆՆԱ.—Ես համոզուած եմ, որ այդ իմ ամուսինը չի եղել։

ՖՐ.—Իսկ ես լսել անգամ չեմ կամենում։ այդ քո ամուսինն էր թէ ոչ, բայց իմ ոտքս այլ ևս այստեղ չի լինիլ...այդ լաւ իմացիր, ես կերթամ։

ԱՆՆԱ.—Բայց ես, մայրիկ, քեզ չեմ թողնիլ... այդ լաւ չէ՞...քեզ մի որևէ յանդուգն վիրաւորել է իսկ մենք ի՞նչով ենք մեղաւոր...ես քեզ կհաստատեմ որ դու սխալւում ես Միլիի մէջ։ Գնանք սենեակը...այստեղ շոգ է...ես քեզ համար սուրճ կպատրաստեմ...գնանք նայիր, ինչպէս ենք ապրում և ուրախացիր։

ՖՐ.—Նայելով կնայեմ...բայց և այնպէս չեմ կարող հաւատալ որ դու երջանիկ ես։

ԱՆՆԱ.—Իսկ քո իրերը ո՞ւր են, մայրիկ։

ՖՐ.—Ա՛խ, սատանան տանէ՞...խօսելու մէջ մոռացայ այն աւազակին վճարեմ և իրերը վերցնեմ...(երկուսն էլ մտնում են տուն)

ՏԵՍԻԼ 4.

ՍՊՕՐՕՎ և ԱՆՆԱ.

ՍՊ.—(մտնելով) Ոչ ոք չգտայ, կարծես բո-

լորը գետինն են մտել...ա, վերջապէս գնացել է պատուաւոր Նադվօրնի սավետնիկի այրին... վախեցել է...էհ, այժմ յոյս ունեմ կարող եմ լրագիր կարդալ...(կարդում է) «վերջին Դումաի նիստի ժամանակ»։

ԱՆՆԱ.—(տանից) Միլիա, Միլիա։

ՍՊ.—Այդպէս էլ ենթադրում էի։ Այս լրագիրը ուղղակի կախարդուած է։

ԱՆՆԱ.—Այստեղ արի։ Մայրիկը եկել է...

ՍՊ.—Այդ էր պակաս։

ԱՆՆԱ.—(մտնելով)Երևակայիր, այստեղ ով որ նորան վիրաւորել է, հայհոյել է և գնացել է դռնապանի ետևից որ իբր թէ դուրս անի նորան այստեղից...այժմ մայրիկը սաստիկ վիրաւորուած է և ուզում է տուն վերադառնալ։

ՍՊ.—Գիտես ինչ սիրելիս, ես կորած եմ։

ԱՆՆԱ.—Ի՞նչ է պատահել։

ՍՊ.—Չէ որ այդ ես էի։

ԱՆՆԱ.—Ի՞նչպէս։ Դու, և դու չես համաչում։

ՍՊ.—Այժմ արդէն համաչելը ուշ է...պէտք է մի կերպ ուղղենք...ինչ հնարենք ա։

ԱՆՆԱ.—Չգիտեմ ճշմարիտ...ահա քեզ շարժական և անշարժ կալվածներ...բոլորը կորաւ։

ՍՊ.—Սպասիր, սպասիր։ Մի յուսահատուիր, մի բան պէտք է հնարել։

ԱՆՆԱ.—Ինչ կարող ես հնարել։ Մայրիկս

այնպէս է բարկացած, որ մինչև անգամ մօտ չի թողնիլ ներողութիւն խնդրելու համար...

ՍՊ.—Մի գուցէ հնարեմ, որ այդ ես չեմ եղել, այլ եղբայրս է եղել...բայց սատանան տանէ, եղբայր էլ չունիմ...

ԱՆՆԱ.—Ինչպէս չէ, կգտնես եղբայր։

ՍՊ.—Սպասիր, սպասիր...գտայ։

ԱՆՆԱ.—Ի՞նչ։

ՍՊ.—Դու համոզիր մայրիկին, որ ես եղբայր ունեմ, և այդ եղբայրս սաստիկ նման է ինձ... հասկանում ես...ասա որ մէկօրեակներ ենք։

ԱՆՆԱ.—Յետոյ ինչ։

ՍՊ.—Յետոյ այն, որ մենք կմեղադրենք եղբօրս...հասկացար։

ԱՆՆԱ.—Ոչինչ չհասկացայ...իսկ որտեղ կգտնես դու եղբայր, այն էլ քեզ նման։

ՍՊ.—Այդ բոլորը ես ինքս կլինեմ...հասկանում ես։ Դու միայն օգնիր ինձ, ես բոլորը կուղղեմ...Ասա որ իմ եղբայրս է...սպասիր, ինչ դնենք նորա անունը...Սակերդօն...Ուրեմն այդ Սակերդօնը սաստիկ յանդուգն, արբեցող և այլն և այլն...մարդ է...հնարիր ինչ որ կուզես։

ԱՆՆԱ.—Միլիա, ես վախենում եմ...

ՍՊ.—Մի վախենար...ինչ կայ այստեղ վախենալու...ֆու սատանան տանէ (դուրս է գնում)։

.....

ՏԵՍԻԼ 5.

ԱՆՆԱ և ՖՐԻԱԿԻՆԱ.

ԱՆՆԱ.—Երանի կարողանամ...ապա թէ ոչ մայրիկս կքրքրէ խեղճ Միլիային։

ՖՐ.—(տանից) Շատ լաւ էք անում...երևի ձեզ մօտ այդպէս է ընդունուած, որ հարազատ մօրը մենակ են թողնում...

ԱՆՆԱ.—(կողմը) Դարձեալ դժբաղտութիւն... (նորան) Ես ամուսնուս եմ փնտրում, մայրիկ, չգիտեմ ո՞ւր է գնացել...

ՖՐ.—Լաւ ամուսին ես, ինչ ասած, քանի որ չգիտես թէ մարդ ո՞ւր է գնացել...նա էլ լաւ պտուղ է, չէ՞ասում թէ ուր է գնում...դու էլ իզուր ես նորա ետևից պօչի պէս մանգալիս, կասէ մի բոպէ առանց ինձ չի կարողանում ապրել...մայրը եկել է նորա մօտ հիւր, իսկ ինքը իմ ետևիցն է պօչի պէս մանգալիս...

ԱՆՆԱ.—Ոչ, մայրիկ, նա այդ տեսակ մարդ չէ...դու նորան ամենևին չես ճանաչում...

ՖՐ.—Լաւ է լաւ, շատ մի գովիլ...ճանաչումես, շատ լաւ նախազգում եմ թէ ինչ մեղրն է...նորա սենեակը զէնքերով լիքն է...աւազակի մէկը կլինի...ուղարկիր վերջապէս նորա հետևից...ո՞ւր է կորել։

ԱՆՆԱ.—Ես արդէն նորա ետևից ուղարկեցի...(կողմը) Ինչ լինում է թող լինի...(նորան) Սակերդօն Նիկալաեվիչին...

ՖՐ.—Այդ էլ ի՞նչ Սակերդօն է։

ԱՆՆԱ.—Իմ ամուսնու եղբայրն է։

ՖՐ.—Եղբա՞յրը...բայց չէ՞ որ դու գրում էիր որ նա ծնողներ և ոչ ոք չունի...

ԱՆՆԱ.—(կողմը) Սկսւում է...(նորան) Ճշմարիտն ասած նա իսկապէս ոչ ոք չունի...եղբայրը հաշւում չէ...նա եղբօրից վաղուց հրաժարուել է...

ՖՐ.—Այդ ի՞նչպէս է հրաժարուել, որ ձեր տանն է լինում։

ԱՆՆԱ.—Այդ շատ հազիւ է պատահում, մայրիկ...

ՖՐ.—Էհ, ի՞նչ, եղբայրը լաւ մարդ է՞։

ԱՆՆԱ.—Սրիկայ է, և դժբաղտաբար դէմքով շատ նման է իմ ամուսնուս, այնպէս նման է, որ կասես կիսած խնձոր լինի...

ՖՐ.—Ապա դու ինչպէս ես նորանց զանազանում։ Ես չէի կարող...

ԱՆՆԱ.—Շատ հասարակ կերպով. իմ ամուսինս ազնիւ է, սիրալիր, իսկ, իսկ Սակերդօնը անպիտան, արբեցող յանդուգն և կոպիտ...

ՖՐ.—Մի գուցէ նա էր ինձ վերայ յարձակւողը։

ԱՆՆԱ.—Երևի...ուրիշ ոչ ոք չէր կարող լինել (կողմը)։ Խեղճ Սակերդօն։

ՏԵՍԻԼ 6.

ՆՈՅՆԲ և ՍՊՕՐՕՎ.

ՍՊ.—(տնից կողմը) Ներկայացումը սկսում է...մուտքի գինն է 20 կոպէկ։ Դէ Միլիա, կերպանափոխուիր և դարձիր Սակերդօն...(ցարօր՝ կնոջը) Ոչ մի տեղ չգտայ ձեր ամուսնուն...սատանան գիտէ թէ ուր է կորել...վերջապէս ես ձեր ծառան չեմ, որ նորա ետևից ման գամ... (կողմը) կարծեմ վատ չեմ սկսել։

ԱՆՆԱ.—Ախ ինչ ափսոս...(կողմը) հեռաքրքիր տեսարան է։

ՖՐ.—Ահա, ահա սա էր ինձ վիրաւորողը։

ՍՊ.—Իսկ դուք ինչ էք թրև գալիս ուրիշի ամառանոցներում...

ՖՐ.—Ես իմ աղջկայ մօտ եմ եկել...

ՍՊ.—Իսկ ինձ հետ դուք գործ չունիք...

ԱՆՆԱ.—Սակերդօն Նիկալաեվիչ, խնդրում եմ վերջ դրէք...ամաչեցէք, այդ ինչ ձևով էք խօսում մօրս հետ...

ՍՊ.—Թքել եմ ես նորա վերայ...ինչպէս ուզեմ այնպէս էլ կխօսեմ։

ՖՐ.—Ախ, ախ, ախ...տեսնում ես, նա քո ներկայութեամբ էլ է սկսում...ախ դու խայտառակ մարդ։

ՍՊ.—Դէ, դէ, քաֆթառ, ձայնդ կտրիր...

ԱՆՆԱ.—(կողմը) շարունակենք մեր դերը... (նորան) Եթէ դուք չէք լռիլ, ես ստիպուած կլինիմ պատմել բոլորը իմ ամուսնուս։

ՍՊ.—Ա՜խ, ասացէք խնդրեմ...շատ եմ վախենում ես ձեր ամուսնուց...թքել եմ ես նորա վերայ...

ԱՆՆԱ.—Ամաչեցէք, դուք նորա հացն էք ուտում...

ՍՊ.—Թող փորձէ միայն ինձ չ'պահել, ես նորա հոգին կհանեմ...յոյս ունեմ ոյժս կպատէ... (յարձակուելով Փրիակինի վերայ) Ուզում էք ես ձեզ մի ձեռքով բարձրացնեմ։

ՖՐ.—(վախից) Ա՜խ, ախ, ախ...գժուել է։

ԱՆՆԱ. –(ամուսնուն) Գժուել էք ինչ է։

ՍՊ.—Մնաք բարեաւ, ես կերթամ քնելու։ (կողմը) Առաջին գործողութիւնը վերջացրի... (գնում է տուն)։

ԲԱՐԱՏԱՐՈՒԹԻՒՆ „ՄԵՇԱԿ“ ԼՐԱԳՐԻ

ՏԵՍԻԼ 7.

ԱՆՆԱ և ՖՐԻԱԿԻՆԱ.

ՖՐ.—Լաւ եղբայր է...ոճրագործ է, ուրիշ ոչինչ։

ԱՆՆԱ.—Եթէ միայն դու իմանայիր թէ ինչպէս է ամուսինս չարչարում դորա հետ...

ՖՐ.—Ի՞նչու դուրս չէ անում տնից...ես նորան աւելով դուրս կվռնդէի...

ԱՆՆԱ.—Քանի անգամ ենք դուրս արել, չէ գնում...ուր գնամ ասում է...

ՖՐ.—Աշխարհքումս քիչ տեղ կայ ինչ է...

ԱՆՆԱ.—Դու ասում է իմ եղբայրն ես...և եթէ ասում է դու ինձ դուրս անես, ես տունը կրակ կտամ...

ՖՐ.—Աւազակ է եղել, ուղղակի աւազակ։

ԱՆՆԱ.—Իսկ ամուսինս վախենում է...յանկարծ իսկապէս տունը կրակ չտայ։

ՖՐ.—Այդպիսի սրիկայից կարելի է սպասել։

ԱՆՆԱ.—Իմ ամուսինս շատ քաղաքավարի է... և՛ ազնիւ մարդ է...ես նորա հետ շատ երջանիկ եմ, ահա դու ինքդ կտեսնես...

ՖՐ.—Ես համոզուած եմ, որ քոնը ինչքան որ վատ լինի, սորա նման չի կարող լինել...այդ տեսակ մարդուն մոմով փնտրես—չես գտնիլ։

ՏԵՍԻԼ 8.

ՆՈՅՆՔ և ՍՊՕՐՕՎ (սիւրտուկով).

ՍՊ.—(տնից—կողմը) Գործողութիւն երկրորդ...(զարծը) Նիւտա, սիրելիս, ինչու չես ծանօթացնում մեր սիրելի մայրիկի հետ։

ԱՆՆԱ.—Ահա, մայրիկ, վերջապէս իմ ամուսինս։

ՖՐ.—Ախ...սա միևնոյն մարդն է, ինչ ես աչքերիս թոզ փչում։

ԱՆՆԱ.—Ոչ մայրիկ, դու սխալւում ես, մի լաւ նայիր...սա Միլիան է, իսկ նա Սակերդոնն էր։

ՍՊ.—Շատ ուրախ եմ, սիրելի մայրիկ...դուք ինձ թոյլ կտաք ձեզ այդպէս անուանել... վերջապէս ես ձեզ տեսնում եմ...Նիւտոչկէն ինձ այնքան է պատմել ձեր մասին, որ ես անհամբերութիւնից այրւում էի ձեր տեսութեան փափագս առնելու...վերջապէս դուք մեզ այցելեցիք...սոխ ու հաց, սիրտը բաց։

ՖՐ.—Ահա այդպէս...շատ ապրես։

ՍՊ.—Թոյլ տուէք մայրիկ, ձեզ համբուրեմ...

ՖՐ.—Համբուրիր, համբուրիր, սիրելիս... տեսնում եմ, որ դու լաւ երիտասարդ ես, իսկ ինչ վերաբերում է քո եղբօրը...

ՍՊ.—Ի՞նչ է պատահել...չլինի Սակերդոնը մի բան է արել...այդ անպիտանից ես չգիտեմ ի՞նչպէս ազատուեմ։

Ֆր.—Ձեզանից ո՞րն է մեծը։

ԱՆՆԱ.—Ոչ ոք...սոքա մի օրումը մի ժամ... մի ժամուայ մէջ են ծնուել։

ՖՐ.—Երևի դէնց այդ է պատճառը, որ նա քեզ չէ լսում...որովհետև մեծին պէտք է լսել։

ՍՊ.—Բայց յոյս ունեմ, որ նա արդէն ներողութիւն է խնդրել։

ԱՆՆԱ.—Չէ՞էլ մտածում։ Մի գուցէ դու, Միլիա, ստիպես նորան։

ՖՐ.—Այո, հասկացրու նորան որ ես...հասարակ կանանցից չեմ, ես Նադվօրնի Սավետնիկի այրի եմ...ահա թէ ինչ։

ՍՊ.—Կստիպեմ, մայրիկ, անհոգ եղէք...ես չեմ թոյլ տալ, որ մեր յարգելի և սիրելի մայրիկին սրիկայի մէկը վիրաւորէ...կտեսնէք թէ ինչ օր կբերեմ ես նորա գլուխը...(կողմը) էհ, կարծեմ պառաւը հաւատաց։(գնում է տուն)։

ՖՐ.—Եւ արժէ...կուշտ կերել է...և մեծամիտ է դառել...սրիկայ։ (պատուհանից երեւում է ինչպէս Սալօրովը գգեստը փոխում է)։

ԱՆՆԱ.—Հանգստացիր, մայրիկ... Միլիան այդպէս. չի թողնիլ...դու տեսար թէ ինչպէս վրդովեց նա։

ՍՊ.—(ըեմի ետեւից) Գնա և անմիջապէս ներողութիւն խնդրիր նորանից, հասկացար... երբէք...եթէ այդպէս է, կտեսնես ինչ կանեմ քեզ...ես թոյլ չեմ տալ յարգելի մայրիկին վիրաւորել...գնա ասում եմ քեզ...(իրը թէ նորան մէկը հրեց)։

ՖՐ.—Ահա, կերար։

ՍՊ.—(ալինջակով) Դու սպասիր...եղբայրս ինձ ուղարկեց ձեզ մօտ, կարծում է որ ես ներողութիւն կխնդրեմ ձեզանից...ինչպէս չէ։

ԱՆՆԱ.—Դուք պարտաւոր էք ներողութիւն խնդրել։

ՍՊ.—Մտքովս չեմ անցկացնի։

ԱՆՆԱ.—Բայց չէ որ դուք վիրաւորել էք։

ՍՊ.—Շատ էլ լաւ եմ արել։

ՖՐ.—Իմ համբերութիւնս, Նիւտա, հատաւ։ Ես ահա թէ ինչ կառաջարկեմ, կամ ես պէտք է լինեմ, կամ սա...մեզանից մէկը պէտք է հեռանայ այստեղից։

ՍՊ.—Ուրեմն, բարի ճանապարհ, կարող էք կորչել...ձեր ետեւից լաց չենք լինի...ձեզ, ով խնդրեց որ դաք...վերջապէս ինչ ուզում էք արէք, իսկ ես այստեղից հեռացողը չեմ...(գնում է)։

ՏԵՍԻԼ 9.

ԱՆՆԱ և ՖՐԻԱԿԻՆԱ.

ԱՆՆԱ.—Այժմ ինքդ տեսար, մայրիկ, թէ ի՞նչ մարդ է։

ՖՐ.—Ախ սրիկայ, լիրբ...սպասիր քո ամուսինը դայ, ես նորան վճռական կասեմ—կամ ես, կամ այդ սրիկան...այս ի՞նչ է վերջապէս, այս ինչ Բաբելոնեան խառնակութիւն է։

ԱՆՆԱ.—Ինչ ասես արել ենք. օրինակ անկողինը հեռացնում ենք, մտածում ենք, որ կեր-

թայ կկորչի, բայց նա կերթայ հիւրասենեակը և այնտեղ կպարկի։

ՖՐ.—Եւ դէմքն էլ—աւազակի դէմք է։

ԱՆՆԱ.—Ի՞նչպէս, մայրիկ։ Միթէ դու չես գտնում, որ մեծ նմանութիւն կայ դորա և իմ ամուսնու մէջ։

ՖՐ.—Կասես դու էլ։ Քո ամուսինը բարի երես ունի...քաղաքավարի է, իսկ այս Սակերդօնը...այն է մարդ ուզում է երեսին թքի...նա մարդ էլ կարող է սպանի...միթէ ձմեռն էլ ձեզ մօտ էր ապրում։

ԱՆՆԱ.—Ո՛չ...

ՖՐ.—Ո՞վ է իմանում, որտեղ էր թրև գալիս։

ՏԵՍԻԼ 10.

ՆՈՅՆՔ և ՍՊՕՐՕՎ.

ՍՊ.—Եկաւ ներողութիւն խնդրելու։

ԱՆՆԱ.—Եկաւ և աւելի վիրաւորեց։

ՍՊ.—Զգիտեմ ճշմարիտ թէ ի՞նչ ելք գտնեմ։ Գիշերները կողքին ատրճանակ եմ դնում, որ մի գուցէ խելքի գայ և ինքնասպանութիւն գործէ, բայց ոչ...մազերը չսանդրած, մօրուքը չսանդրած...

ԱՆՆԱ.—(ցած ամուսնուն) Ի՞նչ ես ասում։

ՖՐ.—Ես ինչ որ մօրուք չնկատեցի...

ՍՊ.—Ունէր, Աստուած վկայ առաջ ունէր...այսօր առաւօտեան է միայն սափրուել...խանութից էր 20 կոպէկ վերցրել։

ՖՐ.—Ախ աւազակ...

ՍՊ.—Քանի անգամ ոստիկանութեան միջոցով ենք դուրս արել...դուրս ենք անում դռներից, պատուհանից ներս է գալիս։

ՖՐ.—Գիշերով։

ՍՊ.—(կողմը) Թէկուզ հէնց գիշեր լինի (նորան)։ Այո, գիշերով...մարդ սարսրում է...ինքներդ դատեցէք...ձմեռ է...սաստիկ ձիւն է գալիս...սարսափելի փոթորիկ...քամի...սաստիկ անձրև է գալիս...անտանելի մութ գիշեր...կայծակ և որոտում...յանկարծ պատուհանը շրխկ...Սակերդօնը պատուհանում կանգնած է...

ՖՐ.—Ախ, Տէր իմ Աստուած, ես կբղաւէի...

ՍՊ.—Կատաղի դէմքով...աչքերը փայլում են վագրի նման, ձեռքին ատրճանակ...

ՖՐ.—Սպասիր, սպասի՛ր...չէ որ ձմեռը դուք չորրորդ յարկումն էիք բնակւում, նա ի՞նչպէս կարող էր պատուհանից ներս մտնել...

ԱՆՆԱ.—(ցած ամուսնուն) Դու, Միլիա, արդէն շատ չափազանցացրիր...ձմեռ ժամանակ յանկարծ կայծակ և որոտում։

ՍՊ.—Ես ասում եմ մօտաւորապէս...ով կարող է երաշխաւորել, որ նա այդ բանը չի կարող անել։

ՖՐ.—Այո, նա ամեն բանի ընդունակ է։

ՍՊ.—Զար է և կատաղի ինչպէս վագր...մի անգամ ինձ վերայ բարկացաւ չգիտեմ ինչու համար...վերցրեց պատից քարշ արած սուրը և խփեց կրծքիս այնպէս ուժեղ, որ սրի ծայրը մէջքիցս դուրս եկաւ...այդ դէպքի մասին մինչև անգամ լրագրներում գրուած էր ճշմարիտ։

ՖՐ.—Միթէ սուրը դուրս եկաւ մէջքից։

ՍՊ.—Այո...(*ցոյց տալով*) ահա այստեղից մտաւ, և այստեղից դուրս եկաւ...

ՖՐ.—Ախ, ախ, ախ։ Սարսափից ոտքերս դողում են։ Եւ դու կենդանի մնացիր։

ՍՊ.—Ինչպէս տեսնում էք...

ՖՐ.—Եւ երևի սաստիկ ցաւ զգացիր։

ՍՊ.—Ոչ, ոչինչ...աթոռից քարշ էր արած։

ՖՐ.—Ո՞վ։

ՍՊ.—Սիւրտուկը։

ՖՐ.—Ֆու, իսկ ես կարծում էի դու։

ԱՆՆԱ.—(*ցած ամուսնուն*) Շատ լաւ է, Միլիա, շարունակիր։

ՍՊ.—Նա մարդասպանութեան համար չորս անգամ նստած էր բանտում...մի անգամ ես հազիւ եմ ազատուել նորա ձեռքից. գնում էինք կարգով...բանկից փող էի ստացել...հէնց որ մոտեցանք Վ. կարմուշին նա յանկարծ ծոցից հանեց մի ահագին դաշոյն և ասաց «տուր շուտով փողերը ապա թէ ոչ կսպանեմ», ես ինչ որ ոյժ

ունէի ժողովեցի...բռնեցի նորա օձիքից և դուրս շպրտեցի կառքից... այդ միջոցին կառապանը մտրակեց ձիերուն և մենք փախանք նորա ձեռքից...յանկարծ տրրրակ...մի անիւը դուրս ընկաւ...մենք շարունակում էինք փախչել, որովհետև նա դաշոյնը ձեռքին վազում էր մեր ետևից...մի փոքր անցանք—երկրորդ անիւը դուրս ընկաւ...յետոյ երրորդը, չորրորդը, հինգերորդը, վեցերորդը...

ՖՐ.—Ախ, ախ, ախ...Տէր Աստուած...գիտես ինչ, ահա ես քեզ խնդրում եմ կամ ես կը մնամ այստեղ կամ նա...նորա ստուերը անգամ չլինի այստեղ։

ՍՊ.—Ես այս րոպէիս կկարգադրեմ...(*գնալ. դէպի տուն*) հաշտութիւն, հաշտութիւն (*գնում է*)։

ՖՐ.—Եթէ ես իմանայի թէ այդպիսի եղբայր ունի քո ամուսինը, ես նորան նամակ կգրէի, որ մինչև իմ գալը նորան հեռացնէր այստեղից։

ԱՆՆԱ.—Անհոգ եղէք մայրիկ, իսկոյն Միլեան նորան տանից դուրս կանի և...

ՍՊ.—(*ներսի ետեւից*) Սակերդօն...դուրս կորիր իմ տնից...չեմ գնալ դու իրաւունք չունես, ես քեզ այլևս չեմ կամենում պահել, հասկացար. ահա քեզ 25 ռուբլի...տուր փողերը... և կորիր աչքիցս, և չեմ թոյլ տալ, որ քո պատճառաւ

իմ սիրելի զոքանչը վիրաւորուի...դուրս, դուրս, ասում եմ քեզ...ահա քո վերարկուն և գլխարկը։

ՖՐ.—Փառք Աստուծոյ, վերջապէս ազատուեցինք...միայն ինչ կարիք կար այդպիսի մեծ գումար տալու, մի ռուբլի տար բաւական էր, միևնոյն է գինու է տալու...

ՍՊ.—Վերջապէս ազատուեցինք...դուրս արի, մայրիկ։ (ցոյց տալով կուլիսներում) ահա տեսէք ինչպէս է գնում։

ՖՐ.—Ո՞ւր է ուր...այդ մի ինչոր կին է աւելը ձեռքին։

ՍՊ.—Ինչ էք ասում, մայրիկ...այդ նորա փայտն է...դուք երևի լաւ չէք տեսնում...ահա, տեսէք շուռ եկաւ...սպառնում է։

ՖՐ.—Ախ, փառք Աստուծոյ, վերջապէս ազատուեցինք այդ աւազակից, այժմ կարելիէ հանգստանալ, ցոյց տուր ինձ, Անիւտա, քո սենեակը, մի փոքր հանգստանամ, իսկ յետոյ կխօսենք գործի մասին։ (Սպօրով) Դու երևի նմանապէս յոգնել ես։

ՍՊ.—Սաստիկ յոգնել եմ, մայրիկ...երկու մարդու դեր էի կատարում։

ՖՐ.—Շնորհակալ եմ, շատ շնորհակալ եմ քեզանից (հաւքուրում է նորան)։

ԱՆՆԱ.—Ես կասեմ, մայրիկ, որ նախաճաշը պատրաստեն։

ՖՐ.—Ինչպէս ուզում ես, սիրելիս, ես այժմ

տեսնում եմ, որ դուք երջանիկ էք... (երկուսն էլ զնացին)։

ՍՊ.—Ֆու, սաստիկ յոգնել եմ...բայց լաւ խաղ խաղացի իմ զոքանչի գլխին, այժմ յոյս ունեմ, որ կարելի է լրագիր կարդալ...որտեղէի...ահա գտայ «վերջին դումայի նիստի ժամանակ»։

ՎԱՐԱԳՈՅՐ

ԿՐԷՉԻՆՍԿԻ ԻԻԲԿԱՅՈՎ

Կոմ. 1 առար.

ԹԱՐԳՄ.

Գ. ԱՐԱՔՍԵԱՆԻ

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՈՎՆԱ ԿՐԷԶԻՆՍԿԱՑԱ—այրի կին։
ԵԿԱՏԵՐԻՆԱ ՖԵՈԴՈՐՈՎՆԱ—նորա աղջիկը։
ԻՎԱՆ ՊԵՏՐՈՎԻՉ ՎԱԼԻՆՑԻԻ—նոտար։
ՎԱԼԵՐԵԱՆ ԳՐԻԳՈՐԵԻՎԻՉ ՇՈՒՍՏՈՎ։
ՄԱՇԱ։
ՎԿԱՆԵՐ։

Միջակ կահատրուած սենեակ։ Ձախ—բազմոց։ Աջ—դաշնամուր—հայելի, նորա մօտ վազայի մէջ ծաղիկներ։

ՏԵՍԻԼ 1

ԿՐԵԶԻՆՍԿԱՑԱ.

ԿՐԷԶ.—(մենակ վրդովուած մարդ է գալիս, յետոյ մտնում է Կատիան) Այդ անարդարութիւն է, միանգամայն անարդարութիւն։ Ոմանք շարունակ փողի պակասութիւն չունին, իսկ միւսները միշտ դատարկ գրպանով են նստած։ Ո՞չ մի ելք... փող...փողը անհրաժեշտ է...(մտածելով) Փող... հեշտ է ասել...բայց ի՞նչպէս...ահա հարց։

ԿԱՏ.—(մտնելով) Այս ինչ տաղտկալի տրխրութիւն է, Տէր Աստուած... գոնէ որևէ հիւր գար։

ԿՐԷԶ.—Ասացէք խնդրեմ...մի գործով գրաղուիր, մի բան կարդա, կամ դաշնամուր նուագիր։

ԿԱՏ.—Մեծ ուրախութիւն է դաշնամուր նուագելը, ինչ արած։

ԿՐԷԶ.—Այդ էլ չես ուզում։ Սուրճ պատ-
ուիրիր։

ԿԱՏ.—Աւելի լաւ է ասէք «զբաղուիր խա-
ղալիքներով»—այդ ինչեր էք ասում, մայրիկ։

ԿՐԷԶ.—Դու լաւ կանես, որ լռես, տեսնում
ես մայրդ մտածում է. նստիր։ (Կատ. նստում է)
Գիտես ինչ, Կատիա։

ԿԱՏ.—Սպասեցէք, մայրիկ, դուք երկար
պէտք է խօսէք։

ԿՐԷԶ.—Յիմար...ես գործի մասին պէտք է
խօսեմ քեզ հետ և լուրջ գործի մասին։

ԿԱՏ.—Ուրեմն ահա ինչ, թող սուրճ պատ-
րաստեն, իսկ դուք ուղարկեցէք քաղցրաւենիք
գնելու, առանց քաղցրավենիքի ես ձեզ մի բո-
պէ անգամ չեմ լսիլ։

ԿՐԷԶ.—լաւ, լաւ։

ԿԱՏ.—(մօտենալով դռներին կանչում է) Մա-
շա։

ՏԵՍԻԼ Զ.

ՆՈՅՆՔ և ՄԱՇԱ

ՄԱՇԱ.—Ի՞նչ էք հրամայում։

ԿՐԷԶ.—Սուրճ պատրաստիր։

ՄԱՇԱ.—Շատ բարի (ուզում է գնալ)։

ԿՐԷԶ.—Սպասիր (հանում է փողը) Կէս ֆունտ
քաղցրաւենիք կառնես։

ԿԱՏ.—Մի ֆունտ, մայրիկ։

ԿՐԷԶ.—Կէս ֆունտը բաւականէ։

ԿԱՏ.—Կնշանակէ այսօր մենք խօսակցել
չենք կարող։

ԿՐԷԶ.—(նայում է Կատ. վերայ—յետոյ Մա-
շային) Մի ֆունտ։

ԿԱՏ.—Շոկոլադէ, լիկիօրով—ֆունտը 1 ր.
50 կ. արժէ։

ԿՐԷԶ.—Դէ, դէ, դէ. ինչ ես ասում։

ԿԱՏ.—Եթէ այդպէս է, ամենևին կարիք
չկայ ուղարկելու (վեր է կենում եւ ուզում է գնալ)։

ԿՐԷԶ.—Դէ, լաւ...(ձգում է փողը) Առ վեր-
ցրու, կողոպտիր մօրդ...Կատիան ուզում է փողը
վերցնել յատակից) Չհամարձակուես...(Մաշային)
Էլ ինչ ես կանգնել։

ՄԱՇԱ.—Ապա ինչով գնեմ քաղցրաւենիքը։

ԿՐԷԶ.—(փողը տալով) Առ (Մաշան գնում է)։

ԿԱՏ.—Իսկ այժմ, մայրիկ, խօսեցէք որքան
կամենաք, ես պատրաստ եմ ձեզ ամբողջ օրը
լսել։

ԿՐԷԶ.—Հեռացիր։

ԿԱՏ.—Մայրիկ։

ԿՐԷԶ.—Հեռացիր ասում եմ...(ման է գա-
լիս վրդոված)։

ԿԱՏ.—Ա, այդպէս, լաւ (մօտենում է դաշ-
նամուրին)։

ԿՐԷԶ.—Մարդու գլուխը պտոյտ է գալիս,

իսկ նա 1 ռուբլի 50 կոպէկանոց քաղցրաւենիք է պատուիրում։

ԿԱՏ.—(նուագում է)։

ԿՐԷԶ.—Ես քեզ ասում եմ թողնուագելը...

ԿԱՏ.—(շարունակում է)։

ԿՐԷԶ.—Թող նուագելը։

ԿԱՏ.—(շարունակում է)։

ԿՐԷԶ.—Դու չՀես իմանում։

ԿԱՏ.—(շարունակում է)։

ԿՐԷԶ.—Մօրդ խօսքը չՀես ուզում լսել։

ԿԱՏ.—(շարունակում է)։

ԿՐԷԶ.—Վերջապէս կդադարՀես թէ՞ ոչ։

ԿԱՏ.—(շարունակում է)։

ԿՐԷԶ.—ԵթԷ այդպէս է, ես կՀեռանամ։

ԿԱՏ.—(շարունակում է, յետոյ յետ նայում) Խա, խա, խա, փախաւ... միևնոյն է հեռու չի գնալ (Մաշան մտնելով)։

ՄԱՇԱ.—Համեցէք քաղցրաւենիքը։

ԿԱՏ.—(վերցնում է եւ ուտում) Շատ համեղ է։

ՄԱՇԱ.—Իսկ սուրճ կՀրամայէք։

ԿԱՏ.—Իհարկէ, իսկ մայրիկը ո՞ւր է, չգիտես։

ՄԱՇԱ.—(ծիծաղելով) Այստեղ է, սանդուխտների մօտ, միայն պատուիրեց, որ ձեզ չասեմ։

ԿԱՏ.—Խա, խա, խա, հեռու չի գնացել։

ՄԱՇԱ.—Իսկ Ճնացած փողը...ձեզ տամ։

ԿԱՏ.—Ախ դեռ փող էլ է Ճնացել, իհարկէ, տուր ինձ...բայց գիտես ի՞նչ, վերցրու փողը և

գնա քաղցր կարկանդակներ առ, միայն տես այնպէս գնա, որ մայրիկը չտեսնէ։

ՄԱՇԱ.—Շատ լաւ (գնում է)։

ԿԱՏ.—Լաւ օր է լուսացել ինձ համար, և քաղցրաւենիք...և քաղցր կարկանդակներ սուրճով։ Հետաքրքիր է, ի՞նչ է շինում մայրիկը այնտեղ։ ուզում է ինձ վախեցնել։

ՏԵՍԻԼ 3.

ԿԱՏԻՆ և ԿՐԷԶԻՆՍԿ.

ԿՐԷԶ.—(մտնում է լուռ եւ նստում է բազմոցի վերայ)։

ԿԱՏ.—Ա՛, բարև ձեզ։

ԿՐԷԶ.—(չէ պատասխանում)։

ԿԱՏ.—Բաւական է մայրիկ...հաշտուենք(մօտենում է նորան)։

ԿՐԷԶ.—Ի՞ն բնաւորութեան հետ սատանան էլ չի կարող հաշտ ապրել։

ԿԱՏ.—Դէ, բաւական է, մայրիկ, այլ ևս չէք բարկանում...ես ձանձրացայ...հաշտութի՛ւն, հաշտութի՛ւն...(համբուրում է նորան)։

(Մտնում է Մաշան, երկու զաւաթ սուրճ եւ կարկանդակները մատուցարանի վերայ)։

ԿՐԷԶ.—(տեսնելով կարկանդակները) Ա՞յս ինչ է։

ՄԱՇԱ.—Կարկանդակներ են. օրիորդը հրամայեց։

ԿՐԷՋ.—Օրիորդը։ (Կատիային) Այդ որ դուռմարներից էք ծախսում, մեծապատիւ. օրիորդ։

ԿԱՏ.—Քաղցրաւենիք գնելուց մանը փող էր ՄՆացել։

ԿՐԷՋ.—Շատ լաւ էք անում, շատ լաւ էք անում։ Կողոպտեցէք, կողոպտեցէք, որքան կարելի է, տեսնենք դորա վերջը ինչ պէտք է լինի։

ԿԱՏ.—Այդ ես վախից արի։

ԿՐԷՋ.—Ի՞նչ վախից։

ԿԱՏ.—Դուք դուրս գնացիք, և ես վախեցայ։

ԿՐԷՋ.—(Մաշային) Դուրս կորիր։ (Մաշան դուրս է գնում) Դէ Կատիա, եթէ ես քեզ հետ այսօր գործ չունենայի, այս բանը ես քեզ չէի ներիլ։

ԿԱՏ.—Ձեզ սուրճ ածեմ, մայրիկ։

ԿՐԷՋ.—Դու ինձ բարակացաւ կգցես։

ԿԱՏ.—Ձեր տարիքում բարակացաւ, չեն ընկնում։

ԿՐԷՋ.—Այս ի՞նչ տեսակ աղջիկ է, Տէր Աստուած։

ԿԱՏ.—Դուք մայրիկ, կամենում էիք ինձ հետ խօսել, խօսեցէք քանի որ լաւ տրամադրութեան մէջն եմ։

ԿՐԷՋ.—Փող չունինք, ահա թէ ինչի մասին էի ուզում խօսել։

ԿԱՏ.—Այդ նորութիւն չէ։

ԿՐԷՋ.—Բոլորը ծախսուել է։

ԿԱՏ.—Աւելի վատ ձեզ համար, իսկ ինձ այդ ամենևին չէ վերաբերում։

ԿՐԷՋ.—Վերաբերում է, սուտ ես ասում։ (լուսինից յետոյ) Իվան Պետրովիչին դու հաւանում ես։

ԿԱՏ.—Վալինցեւի՞ն...այսինքն, ինչպէս ասեմ...

ԿՐԷՋ.—Նա նօտարէ...մեծ եկամուտ ունի... անցեալ տարուայ ընթացքում, ասում են 20 հազար ռուբլի մաքուր փող է վաստակել...

ԿԱՏ.—Մեզ ինչ։

ԿՐԷՋ.—Հասկացիր, որ շուտով ուտելու հաց չենք ունենալ։

ԿԱՏ.—Իսկ եթէ Վալինցեվը 20 հազար ռուբլի ունենայ, մեզ ի՞նչ։

ԿՐԷՋ.—Սպասիր։ Անցեալ կիրակի ժողովրանում շարունակ դու նորա հետ էիր մանդալիս...նա քեզ ոչինչ չասեց...թէ նա քեզ հաւանում է, կամ սորա նման մի բան...

ԿԱՏ.—Ասաց. «ես ձեզ, ասում է, շատ եմ հաւանում Կատերինա Ֆեոդորովնա, ես ասում է երջանիկ կլինէի, եթէ դուք համաձայնուէիք իմ կինս դառնալ, միայն» ասում է...

ԿՐԷՋ.—Միայն ի՞նչ։

ԿԱՏ.—Ես ասում է, ապահովված չեմ...

ԿՐԷԶ.—Ուրեմն ինչ, օժիտ է ուզում ինչ է։ Իսկ դու, դու ինչ ասիր։

ԿԱՏ.—Ես, մայրիկ, աչքերս խոնարհեցրի, և քնքոյշ ժպտացի։

ԿՐԷԶ.—Օժիտ է ուզում. ոչինչ օժիտ կը-տանք։

ԿԱՏ.—Ո՞րտեղից կտաք, քանի որ ոչինչ չունինք։

ԿՐԷԶ.—Սպասիր...մենք կապահովացնենք... (մտածում է) Դու գնա և բեր այստեղ իմ բարձը և վերմակը, վերցրու նախ դեղորայքի մի քանի սրուակներ։

ԿԱՏ.—Ես ոչինչ չեմ հասկանում։

ԿՐԷԶ.—Ցեռոյ կհասկանաս։ Դու միայն լսիր, ինչ որ ասում են քեզ...

ԿԱՏ.—Շատ բարի (գնում է միւս սենեակը)։

ԿՐԷԶ.—(առանձին) Որքան ուզում ես ու-ղեղդ փորիր, սորանից լաւագոյնը չես հնարիր... Վալինցեվը ձեռնտու զուգակից է իմ Կատիախս համար...օխ, օխ...

ԿԱՏ.—(բերում է բարձը, վերմակը եւ սրուակ-ները) Ահա, մայրիկ։

ԿՐԷԶ.—Տուր ինձ (բարձը եւ վերմակը դնում է բազմոցի վերայ, իսկ սրուակները, սեղանի վե-րայ)։ Օխ, խօ, խօ (բազմոցի վերայ անկողին է պատրաստում)։ Այժմ երեսսրբիչ բեր ինձ համար։

ԿԱՏ.—Երեսսրբիչը հեռու է...ահա վերցրէք

անձեռոցիկը...(վերցնում է սուրճի տակից)։

ԿՐԷԶ.—Լաւ, քացախի մէջ դրջիր։

ԿԱՏ.—Օդեկոլոնով չի կարելի։

ԿՐԷԶ.—(բարկացած) Լաւ, թող լինի օդե-կոլոն։

ԿԱՏ.—(Կատար.) Պատրաստ է։

ԿՐԷԶ.—(դնելով ձեռքը ճակատին, եւ շուրջը նայելով) Այժմ կարծեմ ամեն ինչ կարգին է։

ԿԱՏ.— Խա, խա, խա։

ԿՐԷԶ.—Ի՞նչ ես ծիծաղում...վերցրու թուղթ, գրիչ, և նստիր այստեղ։

ԿԱՏ.—Գրչածայր էլ է հարկաւոր։

ԿՐԷԶ.—Ապա ինչով պէտք է գրես։

ԿԱՏ.—Ե՞ս, ես պէտք է գրեմ, ես գրել չեմ սիրում, մայրիկ։

ԿՐԷԶ.—Բայց չէ, այս բոլորը քեզ համար է... նստիր։

ԿԱՏ.—Նստեցի։

ԿՐԷԶ.—Գրիր։ Մեծապատիւ պարոն Իվան Պետրովիչ։

ԿԱՏ.—Ինչպէս։ Իվան Պետրովիչ։

ԿՐԷԶ.—Այո, գրիր։ Իմ մայրը վտանգաւոր հիւանդ է...

ԿԱՏ.—Ի՞նչպէս թէ հիւանդ է, բայց չէ որ դուք առողջ էք։

ԿՐԷԶ.—Հիւանդ է, սաստիկ հիւանդ է։

ԿԱՏ.—Լաւ, շատ էլ հիւանդ լինիք, նորան ի՞նչ։

ԿՐԷԶ.—Գրիր քո գործը չէ...(թելադրում է) մրսել է և սաստիկ հիւանդ է։ Բժիշկը ասաց, որ նա երկար չի ապրի...ախ։

ԿԱՏ.—Խա, խա, խա։

ԿՐԷԶ.—Ի՞նչ ես, ծիծաղում, գրիր...(թելադրում է) Կարող էք երևակայել իմ դժբախտութիւնը։ Աղաչում եմ ձեզ...որքան կարելի է շուտ գաք մեզ մօտ, մօրս կտակը կատարելու համար, որը սիրելի մայրիկս ուզում է անմիջապէս կատարել։ Սպասում եմ անհամբեր. ձեզ նուիրուած Կատերինա Կրէչինսկայա։ Ֆու։

ԿԱՏ.—Ձեզ նուիրուած Կատերինա Կրէչինսկայա։

ԿՐԷԶ.—Դէ, այժմ կանչիր Մաշային և անմիջապէս կառքով ուղարկիր նամակը։

ԿԱՏ.—(վեր է կենում աղախնուն կանչելու եւ երգում է)։

ԿՐԷԶ.—Ցիմար։ Մայրդ պատրաստւում է մեռնել, իսկ դու երգում ես...լռիր, ապա թէ ոչ բոլորը կփչացնես (կատ. զնում է նամակը ծերքին միջին դռնից) Օ՛խ, (բարձը ուղղելով) Երևի դեռ ստիպուած կլինեմ երկար պարկել, աւելի լաւ է կոշիկներս հանեմ, ապա թէ ոչ, աջ ոտիս կոշիկը ցաւ է տալիս...(հանում է կոշիկները, մտնում է Կատիան) Իսկ այժմ, Կատիա, երբ կ'գայ

Վալինցեվը, դու պէտք է քեզ դժբախտ ձևացնես։

ԿԱՏ.—Խա, խա, խա, այդ ի՞նչպէս, մայրիկ, ես չգիտեմ։

ԿՐԷԶ.—Լաց եղիր, ասա, ես դժբախտ եմ, մայրիկս մեռնում է։

ԿԱՏ.—Ինչպէս ինչպէս։ Սպասիր, մայրիկ (կրկնում է) «ես դժբախտ եմ, մայրիկս մեռնում է»...իսկ եթէ ես յանկարծ, մայրիկ, ծիծաղեմ։

ԿՐԷԶ.—Համարձակուեմ։

ԿԱՏ.—«Մայրիկս դժբախտ է։»

ԿՐԷԶ.—Ցիմարութիւններ մի անի։

ԿԱՏ.—«Մայրիկս մեռնում է...»

ԿՐԷԶ.—Աւելի հասարակ ձևով։

ԿԱՏ.—Ի՞նչպէս հասարակ...

ԿՐԷԶ.—Սպասիր, ահա այսպէս (վեր է կենում եւ բազմոցի մօտ կանգնելով, ներկայացնում է) Մայրիկս մեռնում է, ես դժբաղտ եմ. ի՞նչ անեմ, ի՞նչ անեմ...ես որբ եմ մնում։

ԿԱՏ.—Այդպէս, մայրիկ։ Խա, խա, խա։ Ոչ մայրիկ, այդպէս ես համաձայն չեմ։

ԿՐԷԶ.—Կատիա, ես քեզ վերջին անգամ եմ ասում, տես, որ չզղջաս (ընտի ետեւից լրտում է ոտքի ձայն)։

ԿԱՏ.—Ով որ գալիս է։

ԿՐԷԶ.—Աստուած իմ, (արագ մտնում է անկողինը) Օ՛խ, ծխ։

ՏԵՍԻԼ 4.

ՆՈՅՆՔ և ՇՈՒՍՏՈՎ.

ՇՈՒՍՏ.—(մտնելով) Անցնում եմ, և...

ԿՐԷԶ.—Ա՜խ, ախ...օխ։

ՇՈՒՍՏ.—Եւ ինչպէս միշտ...

ԿՐԷԶ.—Սիրտս, սիրտս։ Օ՜խ, չեմ կարող... Կատիա (Կատիան մտնում է, աղջկան—ձայնը փոխելով) Ի՞նչու չես սկսում։

ԿԱՏ.—Մի՞թէ սորա մօտ էլ պէտք է, մայրիկ։

ԿՐԷԶ.—Սկսիր շուտով...օխ։

ՇՈՒՍՏ.—Ի՞նչ է պատահել։

ԿԱՏ.—(մանգալով) «Ես՝ դժբաղտ եմ...մայրիկս մեռնում է։ Ի՞նչ անեմ, ի՞նչ անեմ»։

ԿՐԷԶ.—(կողմը) Որ սատանան բերեց սորան այստեղ։ Բայց աւելի լաւ, շատախօս է... ամբողջ քաղաքը կտարածէ։ Օ՜խ։

ՇՈՒՍՏ.—Եղանակը վատ է...

ԿԱՏ.—«Ես որբ եմ մնում»...

ԿՐԷԶ.—Մեռնում եմ։

ՇՈՒՍՏ.—Կամենաք գնամ բժշկի ետևից... ես իսկոյն...(ուզում է գնալ)։

ԿՐԷԶ.—Ոչ, չէ հարկաւոր... սպասեցէք (կողմը) Այդ էր պակաս...եթէ բժիշկը գայ, բոլորը կորած է։

ՇՈՒՍՏ.—Մնաք բարև...

ԿՐԷԶ.—Սպասեցէք...դուք մեզ հարկաւոր էք...Օ՜խ...վկայ պէտք է լինէք...կտակս...կտակը...Օ՜խ։

ՇՈՒՍՏ.—Կտակ...(կողմը) երանի ներս չը մտնէի։

ԿԱՏ.—(մտենալով մօրը) Մայրիկ, ես կերթամ, ես ձանձրացայ...

ԿՐԷԶ.—(ցաւ) Կորիր աչքիցս...(բարձր) Օ՜խ։

ԿԱՏ.—(գնալով) «Ի՞նչ անեմ, ի՞նչ անեմ»։ (գնում է)։

ՇՈՒՍՏ.—Իսկ ես ի՞նչ անեմ։

ՏԵՍԻԼ 5.

ՆՈՅՆՔ, ՎԱԼԻՆՑԵՎ և երկու վկայ.

ՎԱԼ.—(պօրտֆելը եւ գրքերը ձեռքին) Աննա Սրապիոնովնա...այս ինչ դժբախտութիւն է։

ԿՐԷԶ.—(բարձր) Օ՜խ...մեռնում եմ...մնաք բարև...

ՎԱԼ.—Դեռ ես Աստուած ողորմած է... բժիշկը...

ԿՐԷԶ.—Օ՜խ, երկուսը...յոյս չկայ...բոլորը վերջացաւ...

ՎԱԼ.—Սարսափելի է... մի քանի օր առաջ բոլորովին առողջ էիք...

ԿՐԷԶ.—Վաղուց է, վաղուց եմ տանջւում... Օ՜խ...շուտով կտակս...կտակս...

ՎԱԼ.—Այս բոպէիս (նստում է եւ բացում պօրտֆելը, կողմը) Ի՞նչ կարող է ունենալ (գրում է)։

ՇՈՒՍՏ.—(կողմը) Իսկապէս պառաւը մեռնում է։ Հետաքրքիր է ինչ ժառանգութիւն է թողնելու։ Եկատերինա Ֆեոդորովնան ինձ դուր է գալիս, և եթէ օժիտ կունենայ—կարելի է առաջարկութիւն անել։

ՎԱԼ.—Այժմ բարեհաճեցէք խնդրեմ ասել, թէ ի՞նչ ունիք և ումն էք կտակում։

ԿՐԷՉ.—Բոլորը նորան...կատիային...միայն նորան...գրեցէք։ Կտակում եմ միակ աղջկան, Կատերինա Ֆեոդորովնա Կրէչինսկուն վաճառականական բանկում ունեցած 50 հազար ռուբլին։

ՇՈՒՍՏ.—(արագ մտնելով) 50 հազա՞ր։

ՎԱԼ.—(Շուստովի բացականչութիւնից վեր թռչելով, յետ նայելով) Ա՛, բարև ձեզ։ (կողմը) Արդեօք սխալ չլսեցի՞ ես։ Ի՞նչպէս հրամայեցիք։

ԿՐԷՉ.—50 հազար ռուբլի...խաղատոմսերով...համարները...ահա այստեղ են գրուած... (տալիս է ցուցակը)։

ՎԱԼ.—Շատ գեղեցիկ։

ՇՈՒՍՏ.—(կողմը) Գնամ շնորհաւորեմ Եկատերինա Ֆեոդորովնային...իսկապէս արժանի է... (ուզում է գնալ)։

ԿՐԷՉ.—(Շուստովին) Ո՞ւր էք գնում...դուք պէտք է վկայ լինիք։ (կողմը) Մի զուցէ կատիան յիմարաբար բացի գաղտնիքը...

ԿՐԷՉ.—(թելադրելով) Բացի այդ...

ՇՈՒՍՏ.—Բացի այդ...բրաւո։

ԿՐԷՉ.—Անշարժ սեփական կալուածքը 500 դեսեատին հող, կալուժսկի նահանգում... իւր բոլոր շինութիւններով...Օ՛ֆ...վատ եմ զգում ինձ։

ՎԱԼ.—(վերթռչելով) Ինչով կարող եմ օգտակար լինել։

ՇՈՒՍՏ.—(մտենալով) Մի զուցէ ջուր կամենա՞ք։

ԿՐԷՉ.—Ոչ, ոչինչ...անցաւ...(Վալինցեվին) գրեցէք...(թելադրում է) Ինացած ժառանգներին։

ՇՈՒՍՏ.—(հեռանալով) Այդ մէկը աւելորդ էր։

ԿՐԷՉ.—Կտակում եմ...օ՛ֆ...օ՛ֆ...այլ ևս ոչինչ։

ՇՈՒՍՏ.—(կողմը) Քիչ է, բայց բարեխիղճ։

ՎԱԼ.—(մտ տանելով գիրքը) Այս բոպէիս կվերջացնենք, յարգելի տիկին։ Ստորագրեցէք, անմոռանալի Աննա Սրապիոնովնա, իսկ յետոյ վկաները կստորագրեն։ (վկաներին) Դուք ճանաչում էք տիկին Կրէչինսկուն։

1. ՎԿԱՅ.—Ինչպէս ձեր կամքն է։

ՎԱԼ.—Այսինքն ի՞նչպէս թէ իմ կամքն է, ես հարցնում եմ...դուք ճանաչում էք տիկին Կրէչինսկուն։

2. ՎԿԱՅ.—Երկու ռուբլի արժէ։

ՎԱԼ.—Ախ տէր Աստուած...դէ լաւ նստեցէք և ստորագրեցէք...ձեր գիտէք։

1—2 ՎԿԱՑ.—Գիտենք։ (նստում են եւ ստորագրում)։

ՎԱԼ.—Լաւ, գնացէք գրասենեակը, ես խոկոյն կգամ։ (Շուստովին) Նստեցէք...գրէք...(թելադրում) Այս կտակը կատարելիս, որը կազմուել է Տիտուլիարնի սովետնիկի այրի Աննա Սրապիոնովնա Կրէչինսկու կամքով, ներկայ էի և վկայում եմ...

ԿՐԷՉ.—Օ՜խ...խեղճ աղջիկս...Կատիա...որբ է մնում...Օ՜խ...Կատիա...սիրելիս...Ո՞վ կփայփայէ քեզ...ո՞վ կփաղաքշէ...փող ունիս, բայց տէր չունիս...Օ՜խ չարժանացայ ես քո պսակը տեսնելուն...ծխ։

ՎԱԼ.—Աննա Սրապիոնովնա, դուք ինձ ճանաչում էք։

ԿՐԷՉ.—Ճանաչում եմ, Իվան Պետրովիչ, ճանաչում եմ։ Լաւ մարդ էք։

ՇՈՒՍՏ.—Աննա Սրապիոնովնա, չէ որ ինձ էլ էք ճանաչում։

ԿՐԷՉ.—Այո, այո, դու գրիր։

ՇՈՒՍՏ.—Ես արդէն ստորագրեցի։

ՎԱԼ.—ԵԹԷ միայն ես կարողանայի յուսալ։

ԿՐԷՉ.—Ես հաւանում եմ ձեզ, Իվան Պետրովիչ, մեռնելու ժամանակ սուտ չեմ ասիլ։

ՎԱԼ.—Իսկ Եկատերինա Ֆեոդորովնան։

ԿՐԷՉ.—Օ՜խ...ծխ...նա խեղճը ձեզ սիրում է...չէ որ մօրից դժուար է թագցնել...ես միշտ ասում էի մի մտածիր նորա մասին, նա քեզ չէ սիրում...

ՎԱԼ.—Աննա Սրապիոնովնա, թոյլ տուէք, ես լինեմ նորա ուղեկիցը (ընկնում է ծնկաչոք)։

ՇՈՒՍՏ.—(նմանապէս ծնկաչոք) Թոյլ տուէք ես լինեմ նորա պաշտպանը...

ՎԱԼ.—(Շուստովին) Ձեմ հասկանում, դուք ինչ էք խառնւում։

ԿՐԷՉ.—Շնորհակալ եմ, ի սրտէ շնորհակալ եմ։

ՎԱԼ.—Կարճ։ Ես խնդրում եմ, Եկատերինա Ֆեոդորովնայի ձեռքը։

ՇՈՒՍՏ.—Աննա Սրապիոնովնա, ես ևս...

ԿՐԷՉ.—Օ՜խ...պէտք է...հարցնել...Կատիային, նորա կամքն է։

ՎԱԼ.—(վերկենալով) Թոյլ տուէք ես նորան կանչեմ...(ժեստենալով դռնելին)։

ՇՈՒՍՏ.—Ոչ, թոյլ տուէք ես...(վերթռչելով ժեստենում է նոյն դռներին)։

ՎԱԼ.—Այդ ո՞ւր...(յետ քաշելով Շուստովին, բացում է դռները եւ կանչում) Կատերինա Ֆեոդորովնա, համեցէք այստեղ, ձեզ մայրիկը կանչում է։

ՏԵՍԻԼ 6.

ՆՈՑՆՔ և ԿԱՏԻԱ.

ԿԱՏ.—(մտնելով) «Ի՞նչ անեմ ես, ի՞նչ անեմ»...

ՎԱԼ.—Սիրելի Կատերինա Ֆեոդորովնա, ես խստորեն ցաւակցում եմ...

ԿՐԷՋ.—Աբի այստեղ, Կատիա...

ԿԱՏ.—(մօրը ցած) Մայրիկ, վերջացրու, ապա թէ ոչ, կծիծաղեմ։

ԿՐԷՋ.—(ցած Կատիային) Զհամարձակուես։ (բարձր) Օ՜խ, ինձ համար դժուար էր քեզ մենակ թողնել...Իվան Պետրովիչը ազնիւ մարդ է... նա քեզ առաջարկութիւն է անում...Օ՜խ...

ՎԱԼ.—Եկատերինա Ֆեոդորովնա, սիրելիս (ծնկաչոք համբուրում է ձեռքը) Երջանկացրէք ինձ։

ՇՈՒՍՏ.—(ծնկաչոք) Վճռեցէք, կեանք, կամ մահ։

ԿԱՏ.—Առաջարկութիւն։ (կողմը) Ոչինչ չեմ հասկանում (բարձր եւ ձեռքը մեկնելով Վալինցեվին) Ես համաձայն եմ։

ՇՈՒՍՏ.—(կողմը) Սրիկայ, ձեռքիցս խլեց։

ՎԱԼ.—(վերկենալով) Օ, շնորհակալ եմ ձեզանից (համբուրում է ձեռքը)։

ԿՐԷՋ.—Էհ, փառք Աստծոյ, այժմ ես ձեզ օրհնեմ։ Օ՜խ...վատ եմ զգում ինձ...իսկ հարսանիքը երբ կկատարէք։

ՎԱԼ.—Երբ որ կժառանգէք, մայրիկ։

ԿՐԷՋ.—Շուտով, շուտով պիտի կատարէք... իսկ այժմ հեռացէք...ես ինձ լաւ չեմ զգում։

ՇՈՒՍՏ.—Պատիւ ունեմ...շատ շնորհակալեմ (գնում է)։

ՎԱԼ.—Ես երեկոյեան կգամ ձեզ մօտ, իմ թանկագին նշանածս (համբուրում է նորան, եւ մօտենալով Կրէչինսկուն)։ Իսկ ձեզ ցանկանում եմ առողջութիւն, մեռնել չէ հարկաւոր (դուրս է գնում)։

ԿՐԷՋ.—(վերկենալով տեղից) Բոլորը գնացին։

ԿԱՏ. —Բոլորը։

ԿՐԷՋ.—Ոչ ոք չկայ։

ԿԱՏ.—Ոչ ոք։

ԿՐԷՋ.—(այս եւ այն կողմը նայելով, տեսնում էք, որ ոչ ոք չկայ, սկսում է պարել) յաղթութիւն «Էվրիկա»։

ԿԱՏ.—Բայց, մայրիկ, ես ոչինչ չեմ հասկանում։

ԿՐԷՋ.—Զէ՞ս հասկանում։ Այդ նշանակում է, որ քո մայրը հանճար է։ Տրա, տա, տա...(պարում է, իսկ Կատիան ծիծաղում է)։

ՎԱՐԱԳՈՅՐ

ՍԻՐԱՀԱՐՈՒԱԾ ՄԱՅԻՕՐ

Կոմ. 1 առար.

ԹԱՐԻՄ.

Գ. ԱՐԱՔՅԵԱՆԻ

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆԿ

ԱՊՕԼՕՆ ԳՐԻԳՈՐԻԵՎԻՉ ԳՐՕՄՕԲՈՑ—մայիոր։
ԱԻԱԿՈՒՄ—նորա ծառան—զինուոր։
ՄՈՒԽԱ—գրագիր—զինուոր։

Միջակ կահաւորուած սենեակ։ Մէջտեղը եւ աջ դռներ։ Ձախ պատուհան։ Ընդհանուր անկարգութիւն է տիրում։

.....

ՏԵՍԻԼ 1.

ՄԱՑԻՕՐ առաւօտեան անկարգութեան մէջ է։

ՄԱՑ.—(նայելով հայելու մէջ) Ռեխ է...որ կողմից նայես ռեխ է...և ինչու համար, ասացէք խնդրեմ, պէտք է այսպիսի անհաւասարութիւն լինի...նայում ես մի հասարակ սպային...ոչինչ, ամեն բան տեղն է...և կարողանում է գրաւել կանանց ուշադրութիւնը...իսկ ես...մայիոր եմ, բայց այլանդակ ռեխ...օ, ճշմարտութիւն։ Սակայն զինուորական դրութեան ժամանակ իմ դէմքս շատ համապատասխան դէմք է, խիստ է և անողորմ...(աշխատում է խիստ դէմք արտայայտել) Աստուած վկայ, ես ինքս ինձանից վախենում եմ (ման է գալիս)։ Էհ, երանի շուտով ստանայի հրամանաթուղթը և նեռուէի ամենաարիւնահեղ պատերազմը (ման է գալիս եւ մարշ է սուլում)։ Ախ, միայն թէ շուտով հրամանաթուղթը...ես իմ մէջ զգում եմ այնպիսի հերոսական ոյժ,

որ յուսով եմ մեծ փառքի արժանանալ...(մտածելով) կտանեմ գունդը...«յառաջ, գրոհ տալ» ախ այդ իմ միակ փափագս է...գնդակները կարկուտի նման թափւում են, հրամանատարները գոռում գոչում են, շուրջը ծուխ է կանգնած... հրաշալի է (նստում է)։ Պատերազմելուց յետոյ, ինձ կանչում է նորին գերազանցութիւնը, և ասում է «դուք, մայիոր, երևելի քաջ էք եղել»...և այստեղից (ցոյց է տալիս կուրծքը) քարշ է անում պսպղան շքանշանը...յետոյ բարձր աստիճան, իսկ երբ պատերազմը վերջացաւ...լրագիրներում գովասանք, հասարակական ճաշկերոյթներ, իսկ կանայք, կանայք...ուխ (աչքերը փակում է)...յետոյ ինչ, կարծում էք ես կամուսնանամ։ Ինչպէս չէ։ Երբէք չեմ ամուսնանալ, որովհետև ամուսնանալը մեծ յիմարութիւն է... ոչ, երբէք...և ինչ կայ ընտանեկան կեանքի մէջ... բրրր...ուչ...ես երջանիկ եմ, որ ամուսնացած չեմ (մտենալով պատուհանին) Մամ...դիմացի պատուհանը բացւում է...այդ իմ հարևանուհիս է երևի... երկու օր է, ինչ տեղափոխուել եմ այս բնակարանը, բայց մինչև այժմ չէի նկատել, որ այդպիսի գեղեցիկ հարևանուհի ունիմ...ահա և երկրորդը...ոչինչ, գեղեցիկ է...(լսում է ծիծաղի ձայն) ծիծաղում է...և ինչ լաւ է ծիծաղում... խէ, խէ, խէ...ախ դու իմ սիրունիկս (մտնում է ծառան)։ Ծիծաղումէ։ Եւ երբ ծիծաղում է ամ-

բողջ մարմնով դողում է, սիրելիս (օդային համբոյր է ուղարկում։ Նկատելով ծառային)։ Անասուն, ինչ ես ուզում, քեզ ոչ կանչեց։

ԾԱՌ.—Գրագիրն է եկել, ձերդ բարձրութիւն։

ՄԱՅ.—Գրագիր...ասացէք խնդրեմ, մեծ բան է։ Բայց դու գիտես, անասուն, թէ ինչ բան է գրագիրը (թքելով յատակին) թփիւ, ահա, թող սպասէ...հ՛մ...գրագիր...(դուրս է գնում)։

ՏԵՍԻԼ 2.

ԾԱՌԱՅ և ԳՐԱԳԻՐԸ

ԾԱՌ.—Որքան խիստ է իմ պարոնս...եթէ միայն հրամանատարի պաշտօն տան դորան, մի հայեացքով թշնամուն կ՛ոչնչացնէ, որովհետև աչքերը կատաղի գոմէշի նման է, իսկ ձայնը սադաէլի ձայն է...

ԳՐԱԳ.—(դռների մէջ) Թոյլ է տրուած ներս գալ։

ԾԱՌ.—Մտէք...պարոնս գնաց զգեստաւորուելու...(ականջում) որովհետև հասարակ զինուորների առաջ միշտ զգեստաւորուած է դուրս գալի, որպէս զի աւելի խիստ տպաւորութիւն թողնի...

ԳՐԱԳ.—Դուք այդ չէք կարող ասել, որովհետև ես թէև հասարակ գրագիր եմ, բայց

ամեն բան իմ ձեռքովս է անցնում...ասենք օրինակ հրամանատարը ուզում է զօրքը տանել դէպի աջ. հրամանատարը հրամայում է վաշտապետին, իսկ վաշտապետը ինձ «գրիր» ասում է ինձ վաշտապետը, որ զօրքը գնա աջ» իսկ ես կարող եմ վերցնել և գրել «ձախ»։ Այդ միջոցին զօրքը կգնայ ձախ...

ԾԱՌ.—Իսկ ձեր մեծաւորը կծուլի։

ԳՐԱԳ.—Կանաչ տաքտեղի պէս։

ՏԵՍԻԼ 3.

ՆՈՑՆՔ և ՄԱՑԻՕՐ զգեստաւորուած.

ՄԱՑ.—(զրագրին) Բարև.

ԳՐԱԳ.—Պատրաստ եմ ծառայութեան, ձերդ մեծութիւն։

ՄԱՑ.—Ի՞նչ կայ։

ԳՐԱԳ.—Ողջութիւն ձերդ մեծութեան. հրամայել էիք կանչել։

ՄԱՑ.—Այո...(ծառային նշան է անում, որ դուրս գնայ) Ահա տես, սիրելիս...մի զեկուցում պէտք է գրուի։

ԳՐԱԳ.—Նորին գերազանցութեանը, ձերդ մեծութիւն։

ՄԱՑ.— Իսկ դու որտեղից գիտես։ (զրագիրը ժպտում է). Այո, նորին գերազանցութեանը...

նստիր և գրիր...(զրագիրը նստում է սեղանի առաջ եւ գրում)։ Նորին գերազանցութեան և այլն և այլն...գրիր։ Մայիսի Գրօմօբոի զեկուցումը...գրիր...(թելադրում է)։ Պատիւ ունեմ զեկուցանելու, որ բոցավառ սրտով սիրահարուած...թիթիւ, ինչ յիմարութիւն եմ դուրս տալիս...(զրագիրը ծիծաղում է)։ Այդ ինչպէս ես համարձակւում ծիծաղել։ Դուրս կորիր այս բոպէին։ Ֆֆա՜, աչքերով կուտեմ քեզ (զրագիրը ուզում է գնալ)։ Սպասիր...բայց ոչ, գնա...Ո՞ւր ես կորչում, յիմար։ Արի այստեղ (անվստահութեամբ)։ Լսիր, այստեղ դիմացը երկու օրիորդ են բնակւում, դու չե՞ս ճանաչում նրանց։

ԳՐԱԳ.—Օրիորդնե՞ր... ինչպէս չէ, ձերդ բարձրութիւն...երկու քոյրեր են...վաճառականի աղջկերք են...սեփական տանն են բնակւում։

ՄԱՑ.—...Ը՞ր իսկ ինչպէս է այն մէկի անունը։

ԳՐԱԳ.—Փոքրի՞...Օլիմպիադա։

ՄԱՑ.—Կասկած չկայ, որ նա այն է...

ԳՐԱԳ.—Այո, օրիորդ է։

ՄԱՑ.—Լաւ, կարող ես գնալ։

ԳՐԱԳ.—Պատիւ, ունեմ ձերդ բարձրութիւն (գնում է)։

ՏԵՍԻԼ 4.

ՄԱՅԻՕՐ առանձին, և յետոյ ծառան.

ՄԱՅ.—(յանկարծ ուշքի գալով) Սատանան տանէ, մայիսը Գրիգորեանն եմ ես թէ ոչ։ Այդ ինչ արի այս բոպէիս ա...ուռռ անիծեալ օրիորդներ... կորէք...հեռացէք աչքիցս...կը երդւեմ երբէք չամուսնանալ...ժամ է տուժուր...Աւակում (մտնում է ծառան)։

ԾԱՌ.—Ինչ էք հրամայում, ձերդ բարձրութիւն։

ՄԱՅ.—Ճաշել...շուտ...միայն տես, որ կերակուրը այնպէս տաք լինի, որ բերանը այրի։

ԾԱՌ.—Լսում եմ, ձերդ բարձրութիւն (արագ պատրաստում է սեղանը եւ դուրս է գնում)։

ՄԱՅ.—(ման է գալիս երգելով) «Ոհ, ինչ երջանիկ եմ...որ ես կին չունեմ» (մտենում է պատուհանին, մտնում է ծառան կերակուրը ձեռքին)։ Զէն երևում, երևի ճաշում են (մտենում է հայելուն)։ Ուէխ է, որքան նայես միևնոյն ուէխն է, թփիւ (ծառային)։ դու ինչ ես ուզում։ Դու էլ ուէխ ես, և աւելի խայտառակ։

ԾԱՌ.—Այդպէս է, ձերդ բարձրութիւն։

ՄԱՅ.—Ամենաայլանդակ, և խայտառակ ուէխ (մտեցնելով հայելուն)։ Նայիր... զմայլուիր... տեսնում ես—որքան ես գեղեցիկ եմ քո առաջ։

Զզում ես, անասուն, այժմ քո դժբաղտութիւնը, թշուառ արարած...դուրս կորիր։ (ծառան դուրս է գնում, Մայիսը նստում է ճաշելու, երկար լռութիւն)։

ՏԵՍԻԼ 5.

ՄԱՅ.—(առանձին) Երևակայէք...մի կտոր կոկորդս չէ գնում...ախորժակս բոլորովին կորել է։ Ի՞նչ է նշանակում այս։ Զլինի կանանց պատճառով է...յիմարութիւն (վեր է կենում եւ սկսում է մանգալով երգել)։ «Ո՛հ, ինչ երջանիկ եմ, որ ես կին...» (նստում է պատուհանի մօտ)։ Ոչ ոք չէ երևում, երևի ճաշից յետոյ քնել են...(մտածում է)։ Իսկ ի՞նչ կլինի, եթէ ես ամուսնանամ... Օլիմպիադա...հմ, Ապալոն և Օլիմպիադա...թըմլիկ ձեռքեր, կարմրիկ թուշեր...ուֆ...ոչ ամուսնանալը լաւ բան է...օժիտը կլինի սեփական տուն...գորգեր...փող...կապրեմ փառաւոր...փոքրիկ պարտեզ կլինի իմ տան առաջ։ Մի տարուց յետոյ, երեխայի ձայնը կլսուի...(վեր է թռչում տեղից) փոքրութիւն է...յիմարութիւն (նստում է սեղանի առաջ եւ պատրաստում է ուտել)։ Զեմ կարողանում...չի գնում կոկոր...միթէ սիրահարուած եմ։ Ի՞նչ, ինչ ասացի։ Սիրահարուած։ Խա, խա, խա (բարկացած)։ Աւակում (մտնում է ծառան)։

ՏԵՍԻԼ 6.

ՄԱՑԻՕՐ և ԾԱՌԱՆ.

ԾԱՌ.—Ի՞նչ էք հրամայում, ձերդ բարձրութիւն։

ՄԱՑ.—Ժողովիր սեղանից, և դուրս կորիր (ման է գալիս մեծ քայլերով)։

ԾԱՌ.—Ձերդ բարձրութիւն։

ՄԱՑ.—Ինչ կա՞յ։

ԾԱՌ.—Ոչինչ չէք կերել ձերդ բարձրութիւն։

ՄԱՑ.—Այո, չեմ կերել...քեզ ի՞նչ (ծառան տխուր նայում է նորան)։ Ի՞նչ ես աչքերդ չռել... չեմ կերել...կնշանակէ չեմ ուզում... ի՞նչ ես կանգնել փայտի նման։

ԾԱՌ.—(տխուր) Կհրամայէք վերցնել ինձ համար, բայց ահա երկու օր է, ես ոչինչ չեմ կարողանում ուտել։

ՄԱՑ.—(կատակով) Մի՞թէ. այդ ինչ է պատահել ձեզ հետ։

ԾԱՌ.—Չգիտեմ, ձերդ բարձրութիւն։ Սրտիս տակը ինչոր բան է պտոյտ գալիս։

ՄԱՑ.—Ախ, ասացէք խնդրեմ...(հեգնօրէն) Մի գուցէ ձերդ ազնուութիւնը սիրահարուած է։

ԾԱՌ.—(մոայլ) Այո, ձերդ բարձրութիւն։

ՄԱՑ.—Ի՞նչ...ախ դու...դուրս, սրիկայ, ապա-

թէ ոչ...ֆֆա...աչքերով կուտեմ քեզ (ծառան գնում է)։

ՏԵՍԻԼ 7.

ՄԱՑԻՕՐ, և յետոյ ծառան.

ՄԱՑ.—Ինչպէս էք հաւանում ա։ Սիրահարուել է. էշի գլուխը...ինչ յանդգնութիւն...այժմ ամեն մի հասարակ զինուոր համարձակւում է սիրահարուել...չէ ուտում, ախորժակը կորցրել է սրիկան (ման է գալիս)։ Խա, խա, խա։ (ընկնում է բազկաթոռի մէջ, եւ շարունակ քարծր ծիծաղում է, մտնում է ծառան)։

ԾԱՌ.—Ձերդ բարձրութիւն (Մայիսը ծիծաղում է)։ Ձերդ բարձրութիւն։

ՄԱՑ.—(վեր թռչելով տեղից) Դարձեալ նա... սիրահարուած է...խա, խա, խա։

ԾԱՌ.—Ձերդ բարձրութիւն։

ՄԱՑ.—Ինչ կհրամայէք, ձերդ ցածութիւն, Խա, խա, խա։

ԾԱՌ.—(ցած ձայնով) Նամակ (տալիս է նամակը)։

ՄԱՑ.—(վերցնելով) Ումի՞ց։

ԾԱՌ.—(ցած) Օրիորդներից։

ՄԱՑ,—Ո՞վ բերեց։

ԾԱՌ.—Նորանց աղախինը։

ՄԱՅ.—Ի՞նչ ասաց։

ԾԱՌ.—(*խորհրդաւոր*) Շատ բարևում են, ասում է և խնդրում են պատասխանել նամակին։

ՄԱՅ.—Լաւ...ֆֆա՜...(*աչքերը ոլորում է, ծառան դուրս է գնում*)։

ՏԵՍԻԼ 7.

ՄԱՅ.—Հրաւիրում են...գնա՞լ թէ ո՞չ։(*կարդում է*) «Անպատճառ կսպասենք։ Վաղուց տանջւում ենք։ Ինչ է պատահել մեզ—չենք հասկանում» հ՛մ...հասկանալի է...պէտք է գնալ...(*մտածում է զալիս*)։Միայն...ինչպէս սկսել խօսակցութիւնը (*կանգ է առնում*). հ՛մ...եթէ անմիջապէս բացատրեմ իմ սերը, լաւ չի լինի։ Ճշմարիտ ինձ համար թնդանօթը...ռումբը...ոչինչ են, բայց թէ...նորանց ներկայութեամբ լեզուս կապւում է, կոկորդս ցամաքում...սակայն, սատանան տանէ կերթամ...(*յանկարծ կանգ է առնում եւ մտածում*)։ Ասենք թէ, ներս մտայ. «պատիւ ունեմ ներկայանալ Ապալօն Գրիմօբոյ, Մայիոր Գրիմօբոյ։ «Շարմէ դէ վու վուար—նստեցէք»։ Նստում ենք...լռութիւն։ «Ինչ քաշուողն էք եղել, ինչ կարիք կար վիզիտի...աւելի լաւ էր հասարակ ձևով գայիք»։ «Ախ ինչ էք ասում, այդ ինչպէս կարելի է...առանց վիզիտի, մեզ զինուորականների համար, այդ պարտաւորեցուցիչ է»։ Լռութիւն...«Դուք ծխում էք։ Թոյլ տուէք առաջարկել ձեզ... «Մերսի, ծխախոտ չեմ ծխում, օղի չեմ գործածում, թղթախաղը ատում եմ...միայն սրտիս մէջ մի բանն եմ փայփայում այդ... սէրնէ» Տպաւորութիւնը մեծ է։ «Մենք լսել ենք, որ դուք պատրաստւում էք գնալ պատերազմի դաշտը»։ «Հրամել էք». «և դուք չէք վախենում»։ Ֆֆա՜, աչքերով կուտեմ թշնամուն (*սարսափելի հայեացք է ձգում*)։ Անմիջապէս օրիորդները սիրահարւում են, ես ասում եմ պարդօն, վերեմ կենում տեղիցս, գլուխ եմ տալիս, և այսպէս մօտենում եմ դռներին...յանկարծ այդ միջոցին, ես լսում եմ Օլիմպիադաի ձայնը, որը ասում է իր քրոջ. «Անշանտէ»...ես իբր թէ ոչինչ չլսեցի, և հանգիստ դուրս եմ գնում... Եկայ, տեսայ և յաղթեցի... (*ընկերը ոլորում է*) Աւակում։

ՏԵՍԻԼ 8.

ՄԱՅՐՕՐ և ԾԱՌԱՆ.

ԾԱՌ.—(*մտնելով հարբած*)։ Ինչ էք հրամայում, ձերդ...

ՄԱՅ.—Անասուն, դու հարբած ես։ Քեզանից տակառի հոտ է գալիս...

ԾԱՌ.—Հարբած եմ, ձերդ բարձրութիւն, և

միևնոյն ժամանակ սիրահարուած։ (Մայիսը բարձրացնում է ձեռքը, այդ միջոցին մտնում է զրագիրը)։

ՏԵՍԻԼ 9.

ՆՈՑՆՔ և ԳՐԱԳԻՐ.

ԳՐԱԳ.—Պատիւ ունեմ շնորհաւորելու, ձերդ բարձրութիւն։

ՄԱՅ.—Ինչ կայ։

ԳՐԱԳ.—(թուղթը տալով) Ձերդ բարձրութիւնը նշանակուած է պատերազմի դաշտը...

ՄԱՅ.—Լաւ, իսկ օրիորդներին ասայ, որ ես գնում եմ պատերազմ, և կանանցով զբաղուելու այժմ ես ժամանակ չունեմ...ժամ է տուժուը։ Աւակում, կապիր իրերը։

ՎԱՐԱԳՈՅՐ

ԱՐԵԱՆ ԴԷՊՔ

Կոմ.—կատակ 1 արար.

ՓՈԽ.

Գ. ԱՐԱՔՍԵԱՆԻ

ԴՈՐԹՈՂ ԱՆՁԻՆՔ

ՄԻԽԱԻԼ ԱՐՏԵՄԻՋ ԿԱՂԱՄԲԵԱՆ։
ՆԻՆԱ ԶԱԽԱՐՈՎՆԱ—սորա կինը։
ԳԱՍՊԱՐ ԻՎԱՆԻՋ ՏԷՐ-ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—սորա քեռին։
ՊԵՏՐՈՍ ՓԵՏՈՒՐԵԱՆ։
ՄԱՐԻԱՄ—տնտեսուհի։
ՄԵՍՐՈԲ—ծառայ։
ՈՍՏԻԿԱՆ։

Բեմը ներկայացնում է Կաղամբեանների նընջարանը։ Աջ—առաջի պլանում դռներ։ Ձախ զըրքակալ, նորա վերայ հայելի, եւ մի զոյգ կանացի կոշիկներ։ Դիմացը, մահճակալ վարագոյրով ծածկուած։ Ձախ—վառարան, նորա մօտ լայն բազմոց, սեղան եւ բազկաթոռներ։ Բազմոցի մէկի վերայ ընկած է սիւրտուկ։ Ձախ խորքում—նոյնպէս դռներ։ Խորքում երկու պատուհան, լուսցարան։ Մահճակալի մօտ, աթոռի վերայ կանացի զգեստ։ Աւան սցէնաի մօտ սեղանի առաջ, յատակի վերայ ընկած են երկու զոյգ ցեխոտ կոշիկներ։

.....

Կաղամբեանը առանց կոշիկների եւ սիւրտուկի պարկած է բազմոցի վերայ, իսկ Փետուրեանը նոյնպէս առանց կոշիկների—մահճակալի վերայ վարագոյրների յետեւը։ Ձախ խորքից մտնում են Նինա Զախ· եւ Մարիամը։

ՏԵՍԻԼ 1.

ԿԱՂԱՄԲԵԱՆ, ՆԻՆԱ ԶԱԽ., ՄԱՐԻԱՄ և ՓԵՏՈՒՐԵԱՆԸ—
(վարագոյրի յետեւից).

ՆԻՆ. Զ.—Հանդարտ, տեսնում ես քնած է։
ՄԱՐ.—(լրագիրը ձեռքին) Ոչի՛նչ...չի զարթ-

նի...խորն է քնած (դնում է լրագիրը սեղանի վերայ)։

ՆԻՆ. Զ.—Անձրևանոցը փնտրիր...տես ուր է դրել։

ՄԱՐ.—Չկայ, ոչ մի տեղ չգտայ։

ՆԻՆ. Զ.—Լաւ փնտրիր...ինչպէս թէ չկայ... ես ինքս իմ աչքովս տեսայ, ինչպէս քեռու անձրևանոցը վերցրեց և դուրս գնաց...իսկ այժմ քեռին եկել է, և պահանջում է։

ՄԱՐ.—Ես ինչ անեմ, որ չկայ։

ՆԻՆ. Զ.—Լաւ փնտրիր, նայիր այնտեղ անկիւնում, սև անձրևանոց է, կէռ փայտով։

ՄԱՐ.—Չկայ ասում եմ, ամեն տեղ ման եմ եկել։ Գիշերը ով բացեց պարոնին դուռը։

ՆԻՆ. Զ.—Ես։

ՄԱՐ.—Անձրևանոցը ձեռքին էր թէ ոչ։

ՆԻՆ. Զ.—Ժամի երկուսը կլինէր, և ես ոչինչ ձեռքին չնկատեցի...ինքն էլ սաստիկ հարբած էր։

ՄԱՐ.—Տեսէք, տեսէք թէ ինչպէս է կօշիկները ցեխոտել...(նկատելով կօշիկների միւս զոյգը) Տէր իմ Աստուած, այս ինչ է...երկու զոյգ կօշիկներ է հագել ինչ է։

ՆԻՆ. Զ.—Քեզ ասում են, որ քեռին սպասում է անձրևանոցին...ինչ պիտի պատասխանենք։

ՄԱՐ.—Քանի որ չկայ, ես ինչ անեմ, մի գուցէ կորցրել է, կամ մի տեղ թողել։

ՆԻՆ. Զ.—Կօշիկներին նայեցէք, կօշիկներին...ամբողջովին ցեխ է...

ՄԱՐ.—(վերցնելով լրագիրը, սրբում է կօշիկները)։

ՆԻՆ. Զ.—Ի՞նչ ես անում, խելագար։ Չէ որ այդ այսօրուայ լրագիրն է...յանկարծ պահանջեց, ինչ պիտի պատասխանես։

ՄԱՐ.—Անհոգ եղէք, նա ամենայն օր չէ կարդում...այլ երբեմն...վերջապէս մառանում ահագին կապոց լրագիրներ ունեմ, եթէ պահանջէ կարելի է ներքևից բերել...

ՆԻՆ. Զ.—Վերցրու կօշիկները և տար տուր ծառային, որ սրբէ...(Կաղամբեանը ձգձգում է)։ Օյ, կարծեմ զարթնում է, աւելի լաւ է հեռանանք այստեղից (դուրս են գնում ոտքերի ծայրերի վերայ. Մար. կօշիկները դուրս է տանում)։

ՏԵՍԻԼ 2.

ԿԱՂԱՄԲԵԱՆ և ՓԵՏՈՒՐԵԱՆ.

ԿԱՂ.—(յօրանջում է, զարթնում եւ վերկենալով նստում է)։ Հրաժարիմք ի սատանայ է... այս ինչ է։ Այս ո՞ւրտեղ եմ ես...ոստիկանատանը չեմ արդեօք (նայելով շուրջը)։ Ի՞նչ եմ ասում... ես իմ տանն եմ, մեր ննջարանում...ուրեմն նշանակում է, ես տուն եմ եկել և այնպէս հարբած

եմ եղել, որ ոչինչ չեմ յիշում...սաստիկ ծարաւ եմ...(զրաֆինից ջուր է խմում)։ Լաւ է որ էլի տուն եմ եկել (հագնում է սիւրտուկը)։ Բայց ինչու ես բազմոցի վերայ եմ քնել (Փետուրեանը խրմփացնում է)։ Այս էլ ինչ է, ո՞վ է այստեղ խրմփացնում...մի գուցէ ես հետս մարդ լինեմ բերած, բայց ո՞ւմ...չլինի կին եմ բերել...(սարսափած) կի՞ն...իմ կնոջ ներկայութեամբ այստեղ ուրիշ կին եմ բերել...ահա կանացի զգեստն էլ ընկած է այստեղ...Տէր իմ Աստուած...այդ ի՞նչպէս է պատահել...պէտք է ճանապարհ դնել (մտենալով մահճակալին)։ Տիկին, ինչպէս է... ո՞վ էք դուք...տիրուհի, մադամ, թոյլ տուէք հարցնել ձեզ...

ՓԵՏ.—(զարթնելով) Ա—ա—ա—ա։ Ո՞վ է այդտեղ (ղուրս է նայում)։

ԿԱՂ.—Դուրս եկէք այդ տեղից...

ՓԵՏ.—(յետ քաշելով վարագոյրը նստում է) Ի՞նչ է պատահել։

ԿԱՂ. –Տղամարդ...ի՞նչու էք մտել այդտեղ իմ անկողինը։

ՓԵՏ.—Ձեր անկողի՞նը...իսկ ես որտեղ ե՞մ։

ԿԱՂ.—Իմ տան մէջ։

ՓԵՏ.—Իսկ դուք ի՞նչ իրաւունքով էք ինձ բանտարկել այստեղ, թոյլ տուէք իմանալ։

ԿԱՂ։—Ի՞նչ բանտարկել, ի՞նչ էք ասում։

ՓԵՏ.—Ուրեմն բացատրեցէք, ի՞նչ իրաւունքով եմ ես եկել այստեղ, ձեր տո՞ւն... ես ձեզ ամենևին չեմ ճանաչում։

ԿԱՂ.—Ես էլ ձեզ չեմ ճանաչում... (մէկուսի) Որտեղից եմ վերցրել ես այս մարդուն...

ՓԵՏ.—Սաստիկ ծարաւ եմ (խմում է զրաֆինից)։ Ինչպէս է ձեր ազգանունը։

ԿԱՂ.—Կաղամբեան։

ՓԵՏ.—Շատ լաւ ազգանուն է, կաղամբէ տօլմա ես շատ եմ սիրում։

ԿԱՂ.—Իսկ ձե՞ր ազգանունը։

ՓԵՏ.—Փետուրեան։

ԿԱՂ.—Ուրեմն տուէք ձեր ձեռքը և ծանօթ լինենք։

ՓԵՏ.—Համեցէք, շատ ուրախ եմ (տալով ձեռքը)։

ԿԱՂ.—Ի՞նչպէս է ձեր տրամադրութիւնը։

ՓԵՏ.—Ոչի՞նչ...մի փոքր գլուխս է ցաւում, իսկ դուք ինչպէս է՞ք։

ԿԱՂ.—Իմ գլուխս էլ մի փոքր ցաւում է... բայց բացատրեցէք խնդրեմ, այդ ինչպէս էք ընկել իմ անկողինը...

ՓԵՏ.—Այդ արդէն ինձ համար բոլորովի՞ն անհասկանալի է...բայց ո՞ւր է իմ կօշիկները։

ԿԱՂ.—Երևի տարել են արբելու։

ՓԵՏ.—Ինչպէս է շորերս ցեխոտուել (սրբում է)։

ԿԱՂ.—(կողմը) Հետաքրքիր է, ինչ մարդ է

սա, և ինչու համար եմ ես սորան բերել այստեղ (մտնում է ծառան կոշիկները ձեռքին)։

ՏԵՍԻԼ 3.

ՆՈՑՆՔ և ԾԱՌԱՆ.

ԾԱՌ.—(կողմը) Ախ, պարոնս հիւր է բերել հետը։

ԿԱՂ.—Ի՞նչ ես բերանդ բաց արել... տուր կոշիկները։

ՓԵՏ.—Սպասեցէք, այս իմ կոշիկներն է (նրատում է եւ հագնում)։

ԾԱՌ.—Ինչ տարօրինակ մարդ է։

ԿԱՂ.—(կոշիկները հագնելով) Ինչ ես ապշել, մարդիկ չես տեսել ինչ է։

ԾԱՌ.—Տիկինը հրամայեց հարցնել, թէ ի՞նչ էք արել անձրևանոցը։

ԿԱՂ.—Ինչ անձրևանոց։

ԾԱՌ.—Քեռու անձրևանոցը...որը երեկ նա այստեղ մոռացել էր, և դուք վերցրել էիք ձեզ հետ։ Փնտրում ենք ամեն տեղ, բայց չենք գըտնում...փայտի գլուխն էլ կէռ է...այժմ քեռին սպասում է։

ԿԱՂ.—Իսկապէս յիշում եմ, հետս կէռ անձրևանոց կար...լաւ, գնա քեռուն ասա, որ ես կուղարկեմ։

ԾԱՌ.—(գնում է աջ)։

ՏԵՍԻԼ 4.

ԿԱՂԱՄԲԵԱՆ և ՓԵՏՈՒՐԵԱՆ

ԿԱՂ.—Դուք իմ անձրևանոցը չէք տեսել։

ՓԵՏ.—Ի՞նչ անձրևանոց...գլխարկս չեմ գըտնում...երևի առանց գլխարկի եմ եկել։

ԿԱՂ.—Փողոցներում, առանց գլխարկի՞, ամօթ չէ մի պարոնի համար։

ՓԵՏ.—Ցեռոյ, որտեղի պարոն եմ ես։

ԿԱՂ.—Ասացէք վերջապէս, ո՞վ էք դուք։

ՓԵՏ.—Ե՞ս...ես բոլորի գլխաւորն եմ։

ԿԱՂ.—Մեծաւո՞ր...

ՓԵՏ.—Գլխաւոր...

ԿԱՂ.—Իսկ թոյլ տուէք իմանալ, ձեր ծառայութեան տեղը որտեղ է։

ՓԵՏ.—Խոհանոցում։

ԿԱՂ.—Ինչպէս։

ՓԵՏ.—Ես «Գրանդ Օտէլ» հիւրանոցի գլխաւոր խոհարարն եմ...

ԿԱՂ.—Խոհարա՞ր...դուրս այստեղից։

ՓԵՏ.—Ի՞նչ էք բառում, դուք ինքներդ էք բերել ինձ այստեղ։

ԿԱՂ.—Տէր իմ աստուած, ա՞յս ինչ է, իմ անկողնիս վերայ, մի ինչ որ խոհարար է շընթրել...ախ դու փլաւ քամի՞չ։

ՓԵՏ.—Դէ, դէ, հանդարտ, մեծապատիւ պա-

րոն, յիշեցէք, որ երէգ մի ամանի մէջ էինք խորովում, մի սօուզի տակ։

ԿԱՂ.—Այժմ ի՞նչ պիտի ասեմ կնօջս...որտեղից եմ բերել այս հրէշին...

ՓԵՏ.—(ձեռքերը դնելով զրպանը) Դու այդ հայհոյանքի համեմունքը թող...(հանելով ձեռքերը) Դու աւելի լաւ է...

ԿԱՂ.—Սպասիր, այդ ի՞նչ է ձեռքերդ։

ՓԵՏ.—Իսկապէս...քո ձեռքերն էլ նմանապէս...

ԿԱՂ.—Սատանան տանէ... երևի գրպանիցն է...(ձեռքերը դնելով զրպանը) Ա՜ծ՛ուխ...

ՓԵՏ.—(նոյնպէս) Իմ գրպանումը նոյնպէս...

ԿԱՂ.—Որչափ փող ասես կտայի, միայն իմանայի թէ երէգ որտեղ եմ եղել։

ՓԵՏ.—Այդ շատ հեշտ է...ուղարկիր լրագիր դնելու, երևի այնտեղ արդէն բոլոր մեր խայտառակութիւնը նկարագրուած է։

ԿԱՂ.—Ախ դու խորոված հնդուհա՜...բայց իսկապէս մի գուցէ լրագրներում մի բան գրտնենք մեր մասին...բայց ո՞ւրտեղ է լրագիրը (կանչում է կնօջը) Նինա Զախարովնա...(Փետուրեանին)։ Ա՜ռ այժմ թագնուիր...կինս գալիս է։

ՓԵՏ.—Շատ լաւ (թագնւում է, մտնում է Նինա Զախ.)։

ՏԵՍԻԼ 5.

ՆԻՆ. Զ.—Ի՞նչ է պատահել։

ԿԱՂ.—Այսօր լրագիր չեն բերել, ի՞նչ է։

ՆԻՆ. Զ.—Նախ և առաջ ասա բարի լոյս, և յետոյ հարցրու լրագրի մասին։

ԿԱՂ.—Է լաւ, բարի լոյս (համբուրում է կնօջը) Լրագիրը չե՞ն բերել։

ՆԻՆ. Զ.—Լրագիր՞ ես չեմ տեսել, մի գուցէ աղախինը իմանայ (կանչում է)։ Մարիամ, այսօրուայ լրագիրը պարոնը ուզում է (յետ նայելով)։

ԿԱՂ.—Ի՞նչ ես նայում։

ՆԻՆ. Զ.—Ծառան ասում է, որ հիւր ես հետդ բերել։

ՓԵՏ.—(դուրս գալով) Ներողութիւն, այդ երևի իմ մասին է...պատիւ ունեմ ներկայանալու։

ԿԱՂ.—Թփիւ, սատանան տանէ, այդ էր պակաս։

ՆԻՆ. Զ.—Բարեհաճել էք ամուսնուս հետ քէֆ անե՞լ։

ՓԵՏ.—Այդ դեռ, տիկին, անյայտութեան մէջն է...բայց քանի որ ես պատիւ ունեմ խոհարար...

ԿԱՂ.—(ընդմիջելով) Դէ դէ, քանի որ սա խոհարարութեան մէջ ոչինչ չէ հասկանում... ինձ խնդրեց, մի որև է հիւրանոցում սորա համար տեղ գտնեմ, որովհետև սա իմ սանիկն է։

ՓԵՏ. –(կողմը) Օհ։

ՆԻՆ. Զ. Պատկառելի տարիք ունի քո սանիկը...այդ երբ ես մկրտել դու սորան։

ԿԱՂ.—Ինչ հարց ու փորձի ժամանակն է... սա հիւանդոտ մարդ է, և դորա համար էլ շուտ է պառաւել (Փետուրեանին)։ Ո՞ր սատանան ստիպեց քեզ դուրս գալ (շարունակում է նորա հետ խօսել, մտնում է Մարիամը)։

ՄԱՐ.—(Նին. Զ.) Այսօրուայ լրագիրը ես դէն եմ ձգել։ Զէ՞ որ ձեր ներկայութեամբ նորանով կօշիկներն էի սրբում...բայց ահա անցեալ տարուայ լրագիրներից եմ բերել։

ՆԻՆ. Զ.—Բայց եթէ յանկարծ նկատի՞։

ՄԱՐ.—Ամենևին չի նկատի (տալիս է լրագիրը Կաղամբեանին եւ դուրս է գնում)։

ԿԱՂ.—Տուր տեսնեմ. (նայում է եւ կարդում) Մի կին փախել է իւր ամուսնու գործակատարի հետ վերցնելով 350 ռուբլի, և երկու փութ երկաթ»...սատանան տանէ, ի՞նչ գլխովն էր տալիս երկաթը։

ՓԵՏ.—Այդ մեզ չի վերաբերում, տես ուրիշ տեղ։

ԿԱՂ.—«Այս գիշեր»,օհօ...ոստիկանութիւնը սարսափելի ոճրագործութեան հետքն է գտել։ Ն—ի փողոցում ածուխի պահեստի մօտ, մի սպանուած կնոջ դիակ է գտնուած»...«Տէր իմ Աստուած (կարդում է)։ Ենթադրում են, որ ոճրագործները երկուսով են եղել և հարբած։

ՓԵՏ.—Երկուսը մի կնոջ դէմ, սրիկաներ։

ԿԱՂ.—(կարդում է) «Ոստիկանութիւնը, յոյս ունի ոճրագործներին շուտով ձերբակալել, որովհետև սպանուածի մօտ գտնուած է մի տղամարդու գլխարկ»...

ՓԵՏ.—(սարսափած) Ի՞նչ ես ասում։

ԿԱՂ.—«Եւ մի թաւշեայ անձրևանոց կեռ փայտով»։

ՆԻՆ. Զ.—Ինչպէս քեռունն էր։

ԿԱՂ.—(կողմը) Արիւնը գլուխս է խփում... (կնոջը) դու այնտեղ...պատրաստիր...

ՆԻՆ. Զ.—Ի՞նչ պատրաստեմ։

ԿԱՂ.—Ինչ ուզում ես պատրաստիր...նախաճաշ...կամ թէյ...

ՆԻՆ. Զ.—Իսկ այնտեղ քեռին...

ԿԱՂ.—Թող սպասէ։

ՆԻՆ. Զ.—Այս ի՞նչ է պատահել սորան։ (գնում է)։

ՏԵՍԻԼ 6.

ԿԱՂ.—Լսեցիր։

ՓԵՏ.—Հարբած դրութեան մէջ։

ԿԱՂ.—Կասկած չկայ...

ՓԵՏ.—Որ այդ մենք ենք...սպանել ենք կնոջ

ածուխի պահեստի մոտ... ահա թէ ինչու է մեր գրպաններում ածուխը։

ԿԱՂ.—Տէր իմ Աստուած...ես ոչինչ չեմ յիշում...ճիշտ է—ես հարբած ժամանակ կռուան եմ...բայց մի կնոջ...

ՓԵՏ.—Այդ դու ես արել, ես այդքան ուժ չունեմ...(ուզում է գնալ)։

ԿԱՂ.—Սպասիր, սպասիր, այդ ո՞ւր ես գնում... կամ միասին պէտք է մեռնենք, կամ ազատուենք։

ՓԵՏ.—Թող խնդրեմ, ինչ ես կպել ինձ, ես ուզում եմ ձեռքերս լուանալ...ձեռքերից մեզ կարող են ճանաչել։

ԿԱՂ.—Իսկապէս...խոհարար է, բայց խելօք է դատում (երկուսն էլ մտնում են լուացարանին, եւ ձեռքերը լուանում։ Մտնում է Նինա Զախարովնան)։

ՏԵՍԻԼ 7.

ՆՈՅՆՔ և ՆԻՆԱ ԶԱԽԱՐՈՎՆԱ.

ՆԻՆ. Զ.—Այդ ի՞նչ էք անում այդտեղ։

ԿԱՂ.—Չե՞ս տեսնում, ձեռքերն ենք լուանում։

ՆԻՆ. Զ.—Նախաճաշը և ինքնաեռը պատրաստ է։

ԿԱՂ.—Ուրեմն սպասիր այնտեղ...

ՆԻՆ. Զ.—Իզուր ես ձեռքերդ լուանում,

այսօր քեզ համար բաղանիքը տաքացրել ենք։

ՓԵՏ.—Այդ բաղանիքը որտեղ է։

ՆԻՆ. Զ.—Մենք այստեղ սեփական բաղանիք ունինք։

ԿԱՂ.—Լաւ, լաւ, գնա ասում եմ քեզ։

ՆԻՆ. Զ.—Քեռին սպասում է։

ԿԱՂ.—Գնա վերջապէս...

ՆԻՆ. Զ.—Ոչինչ չեմ հասկանում(գնում է աջ)։

ՏԵՍԻԼ 8.

ԿԱՂԱՄԲԵԱՆ և ՓԵՏՈՒՐԵԱՆ

ԿԱՂ.—Քեռին եկել է իւր անձրևանոցի յետևից, եթէ ոստիկանութիւնը ցոյց տայ նորան իր անձրևանոցը, նա կճանաչէ, և մենք կորած ենք։

ՓԵՏ.—Սպասիր, այդ ի՞նչ է երևում գրպանիցդ...կարմիր ժապաւէն...(հանում է նորա գրպանից կանացի՝ գլխակապ) Գլխակապ...էհէ... մի գուցէ իմ գրպանումն էլ մի բան գտնուի... (ձեռքը դնում է գրպանը) Կայ...ինչ որ կայ...(հանում է կանացի կօշիկ) Կանացի կօշիկ...

ԿԱՂ.—Այդ ինչպէս ենք հարբել, Տէր իմ Աստուած...սպանել ենք, և միևնոյն ժամանակ կողոպտել...

ՓԵՏ.—Կողոպտել ենք...մի հատ կօշիկ... ինչիս է պէտք (բեմի ետեւից լսում է ծայն)

«Ի՞նչ էք նորան հարցնում։ Ես նորանից չեմ վախենում...ես պէտք է նորան տեսնեմ» (մտնում են Գասպար Իվ. եւ Նինա Զախ.)։

ՏԵՍԻԼ 9.

ՆՈՅՆՔ, ԳԱՍՊ. ԻՎԱՆ. ԵՒ ՆԻՆԱ ԶԱԽ.

ԳԱՍՊ. Ի.—Ի՞նչու ես ինձանից թաքնւում։

ՆԻՆ. Զ.—Նա իւր սանիկի հետ էր այստեղ։

ԳԱՍ. ԻԻ.—Ի՞նչ սանիկ։

ՓԵՏ.—Ատամս ցաւում է...օյ...ինչպէս է ցաւում...(կապում է թուշը եւ նստում խորքում)։

ԿԱՂ.—(տանելով Գասպ. Ի. դէպի աւանսցենան) Նորա ատամը ցաւում է...Աստուած նորա հետ...որքան ուրախ եմ, քեռի...

ԳԱՍՊ. ԻԻ.—Այս այն մարդը չէ՞, որին երեգ ես ձեզ հետ միասին տեսա՞յ։

ԿԱՂ.—Որտեղ։

ԳԱՍՊ. ԻԻ.—Այնպիսի մի տեղ որ...

ԿԱՂ.—Սուտ է, մենք այդ տեսակ տեղեր չենք այցելում։

ԳԱՍՊ ԻԻ.—Նա է...նա ինքն է...

ԿԱՂ.—(Փետուրեանին) Գետինը մտնես...

ՓԵՏ.—Օյ, ատամս (հեռանում է խորքը)։

ԿԱՂ.—Ուրեմն երեգ դու մեզ տեսել ես։

ԳԱՍՊ. ԻԻ.—Իհարկէ։ Ամբողջ գիշեր ձեր ետեւիցն էի մտն գալիս, մինչեւ տուն եկաք։

ԿԱՂ.—Ամբողջ գիշեր հետեւում էիր... որտեղ։

ԳԱՍՊ. ԻԻ.—Ամենայն տեղ։

ԿԱՂ.—Շնորհակալ եմ, քեռի, ուրեմն դու կարող ես վկայել։

ԳԱՍՊ. ԻԻ.—Ի՞նչ։

ԿԱՂ.—Մենք վկայ ունինք, շնորհակալ եմ, քեռի...Նինա Զախարովնա բացիր շամպանիան։

ՆԻՆ. Զ.—Տէր իմ Աստուած, այս ինչ է պատահել իմ ամուսնուս (գնում է)։

ՏԵՍԻԼ 10.

ՆՈՅՆՔ, ԱՌԱՆՑ ՆԻՆԱ ԶԱԽ.

ԿԱՂ.—Քեռի, ասա խնդրեմ, երեգ որտեղ մեզ տեսար։

ԳԱՍՊ. ԻԻ.—Ես կնոջդ ներկայութեամբ բոլորը չէի ուզում ասել...միթէ նորան կարելի է մասնակից անել երեգուայ բոլոր քո արարմունքներիդ...

ԿԱՂ.—Ուրեմն դու բոլորը տեսա՞ր։

ԳԱՍՊ. ԻԻ.—Ախ դուք ոճրագործներ, աւազակներ։

ՓԵՏ.—(առաջ գալով) Ես այնտեղ չէի, այդ ես չէի...

ԳԱՍՊ. ԻԻ.—Ինչ ես կեղտոտ ձեռքերով մո-

տենում։

ԿԱՂ.—Ձեռքերդ պահիր, դարձեալ ձեռքերդ ածուխոտ է։

ՓԵՏ.—Օյ, ատամս, ատամս (նորից գնում է դէպի խորքը)։

ԿԱՂ.—Իսկ եթէ մեզ տեսար, ինչու չխանգարեցիր։

ԳԱՍՊ. ԻԻ.—Հարբած էիր... ինչպէս խանգարէի...բռունցքդ մի փթանոց է...

ԿԱՂ.—Լռիր, լռիր։

ԳԱՍՊ. ԻԻ.—Ձեռքիդ էլ իմ անձրևանոցն էր, ուզում էի խլել, բայց չյաջողուեց։

ԿԱՂ.—Այդ անձրևանոցի մասին, քեռի, այլ ևս ոչ մի խօսք...ես քեզ համար նորը կգնեմ, արծաթէ ծայրով...ես քեզ համար դեռ շատ բան կգնեմ, դու միայն երդուիր, որ ոչ ոքին չես ասի, ինչ որ գիտես...նախ և առաջ անձրևանոցի մասին...ասա որ կորցրել ես...ես քեզ արժան գնով թութուն կտամ։

ԳԱՍՊ. ԻԻ.—Լաւ, քո խայտառակութեան մասին ես ոչ ոքի չեմ ասիլ...միայն թէ երազումս յանկարծ չասեմ, որովհետև երազումս, ես խօսել գիտեմ, այդ միջոցին կինս բոլորը կիմանայ։

ԿԱՂ.—Տէր Աստուած...(Փետուրեանին) Այստեղ արի (նորան ցած)։ Սա մեզ կարող է մատնել, ինչ անենք...

ԳԱՍՊ. ԻԻ.—Կմատնի, անպայման կմատնի։ Մի բան է մնում միայն—վերջացնել սորա հետ, ուրիշ ոչինչ։

ԿԱՂ.—(սարսափած) Ինչպէս։

ՓԵՏ.—Կամ մենք պիտի մեռնենք, կամ դա, ուրիշ հնարք չկայ...

ԿԱՂ.—Օյ, օյ, օյ, սարսափելի է։ Ի՞նչ ելք գտնենք։

ՓԵՏ.—Բաղանիքը տաք է։ Բոլոր պատուհանները փակիր, բաղանիքը ծուխով կլցուի, նա էլ անմիջապէս կխեղդուի ծուխի մէջ, իսկ յետոյ կարելի է ասել, որ գնացել էր լողանալու, և ինքն էր խեղդուել։

ԿԱՂ.—Ահա թէ ուր տարաւ մեր արբեցողութիւնը։ Ինչ արած, քանի որ այս ճանապարհին ենք կանգնել...(Գասպար Իվանիչին) Ուրեմն այդպէս, թութունը ես տալիս եմ քեզ կէս գնով, իսկ այժմ գնանք բաղանիք։

ԳԱՍՊ. ԻԻ.—Բաղանիք։ Ինչու համար։

ԿԱՂ.—Այդ իմ սովորութիւնն է, երբ որ վաճառականութեան հարցը վերջացնում եմ իսկոյն դէպի բաղանիք...երթանք։

ԳԱՍՊ. ԻԻ.—Գնա ինքդ, եթէ այդպէս ուզում ես, իսկ ես երեգ չէ անցեալ օրն էի։

ԿԱՂ.—Ես քեզ ասում եմ գնանք։

ՓԵՏ.—Գնացէք, գնացէք։

ԳԱՍՊ. ԻԻ.—Ահա սորան տար, տեսնում ես ձեռքերը կեղտոտ է։

ԿԱՂ.—(Փետուրեանին) Ձեռքերդ պահիր... (Փետուրեանը հեռանում է խորքը, Գասպ. Իսանիչին). Գնանք ասում եմ քեզ (բռնում է ձեռքից) թէ խելք ունես գնանք։

ԳԱՍՊ. ԻԻ.—Թող ինձ, ասում եմ քեզ...ես բաղանիք չեմ ուզում...թող...չեմ ուզում ես քո թութունը (Կաղասմբեանը ուժով դուրս է տանում ձախ)։

ՏԵՍԻԼ 11

ՓԵՏՈՒՐԵԱՆԸ մենակ, յետոյ ՆԻՆԱ ԶԱԽ.

ՓԵՏ.—Այժմ ի՞նչ անեմ...փախչեմ...ոչ, այդ աւելի վատ կլինի...նա թէև վաճառական է, բայց յիմար է, առանց ինձ կկորչի...նախ աւելի լաւ է հետքերը կորցնելու համար ոտնամանը և գըլխակապը այրենք...ախ այս անպիտան ձեռքերը միշտ մոռանում եմ...դնում եմ գրպանս և նորից սևանում են (ձեռքերը լուանում է, մտնում է Նինա Զախ.)։

ՆԻՆ. Զ.—Դարձեալ ձեռքերն է լուանում... (նորան) Այդ ի՞նչ է, շարունակ ձեռքերն էք լուանում։

ՓԵՏ.—Ա՜, ի՞նչ...այո, այո, այո,—ձեռքերը... այո սովորութիւն է, գիտէք...մաքրութիւն ես շատ

եմ սիրում, որովհետև լաւ ընտանիքներում շատ եմ ծառայել, իսկ այնտեղ միշտ պահանջում են կեղտոտ ձեռքերով մթերքին ձեռք չտալ։

ՆԻՆ. Զ.—Ինչ մթերքին։

ՓԵՏ.—Օրինակ մսին, կօտլետ շինելու; մանաւանդ ձուկ խորովելու ժամանակ...

ՆԻՆ. Զ.—Մի՞թէ դուք խոհարար էք։

ՓԵՏ.—Թփիւ, լեզուիցս թռաւ...(նորան)։ Ես խոհարար չեմ, բայց և այնպէս...օրինակ, երբ մտնում ես խոհանոց...(եղանակը փոխելով) իսկ ձեր քեռուն բաղանիք տարան—լողացնելու։

ՆԻՆ. Զ.—Ինչո՞ւ...Տէր Աստուած... խելագարուել է ինչ է՞...ինքնաեռը և նախաճաշիկը պատրաստ է, փոխանակ նախաճաշելու, նա բաղանիք է տանում...

ՓԵՏ.—Ոչինչ, ոչինչ, մենք իսկոյն կգանք, դուք գնացէք, գնացէք խնդրում եմ... ես չեմ կարող դեռ գալ, ձեր ամուսինը ինձ յանձնարարութիւն է տուել...պէտք է թղթերը նայեմ...

ՆԻՆ. Զ.—Մի՞թէ։ Բան չգողանայ այստեղից, գնամ Մարիամին ուղարկեմ (գնում է)։

ՏԵՍԻԼ 12.

ՓԵՏՈՒՐԵԱՆԸ մենակ, յետոյ ՄԱՐԻԱՄ

ՓԵՏ.—Այժմ դէպի գործ...(բացում է վառարանը եւ նայում)։ Ինչ կայ այստեղ, ամբողջ

ամառը երևի չեն վառել և ինչ ասես դարսել են մէջը...(հանում է փոքր զամբիւղ) Մեխեր է...կոտրած ութօ...(հանում է միւս զամբիւղը)... դեղոբայքի սրուակներ...(հօտ է առնում) Ֆու, անպիտան հօտ է գալիս...(ծեռքը կոխում է վառարանը)։

ՄԱՐ—(մտնելով) Ի՞նչ է փնտրում վառարանում (հետեւում է կարասիքի ետեւից)։

ՓԵՏ.—(հանում է մի շիշ) Շիշ, հետաքրքիր է, ի՞նչ կայ մէջը։

ՄԱՐ.—(կողմը) Այ, այ, այ, տիկնոջ սիրած ըմպելիքը...

ՓԵՏ.—(հօտ է առնում շշից) Լաւ հօտ ունի...(խմում է շիշից) Քաղցր է...շատ համեղ է... (խմում է) ինչ հրաշալի ըմպելիք է...սպասիր, ես քեզ կդատարկեմ...(դնում է շիշը սեղանի վերայ)։ Այժմ վառարանը դատարկ է, կարելի է... (վառում է գլխակապը) վառուիր, որ հետքդ չմնայ...

ՄԱՐ.—Ինչ որ վառում է...

ՓԵՏ.—Իսկ այժմ կօշիկը...որտեղ եմ պահել...(տեսնելով զրքակալի վերայ Նինա Զախ. կօշիկները)։ Վա՛, երկուսն է դարձել...բայց միևնոյն է հետքը կորցնելու համար այս էլ վառենք (ծգում է վառարանը)։

ՄԱՐ.—Այս ի՞նչ է...տիկնոջ կօշիկներն է այրում...(առաջ գալով) Այդ ի՞նչ ես անում. ինչու ես կօշիկները այրում...

ՓԵՏ.—Լռիր...իբր թէ չես տեսել (ընելով նորան)։

ՄԱՐ.—(ազատուելով) Թող ինձ սրիկայ... Թող, ասում եմ քեզ (մտնում է Նինա Զախ.)։

ՏԵՍԻԼ 13.

ՆՈՅՆՊ և ԿԱՂԱՄԲԵԱՆ.

ԿԱՂ.—Ի՞նչ է պատահել այստեղ։

ՓԵՏ.—Երկուսս էլ կորած ենք...այս կինը կարող է մեզ մատնել, նա տեսաւ ինչպէս ես կօշիկները այրեցի...

ԿԱՂ.—Ի՞նչ կօշիկներ...

ՓԵՏ.—Այն կնոջ կօշիկները, որին մենք քեզ հետ սպանեցինք...

ՄԱՐ.—Սպանեցի՞ք...օյ, թողէք ինձ, թողէք...

ԿԱՂ.—Սորանից այժմ ինչպէս ազատուենք... սպասիր, առ այժմ տանեմ սորան և կողպեմ հաւաքուենում։

ՓԵՏ.—Շատ լաւ...իսկ ես կմտածեմ դորա դատավճռի մասին։

ՄԱՐ.—Այ, այ, թողէք ինձ, թողէք... (երկուսով ընում են նորա ծեռքերից եւ տանում են ղէպի խորքը)։ Այ, այ այ (արագ ներս է մտնում Նին. Զախ.)։

ՏԵՍԻԼ 14.

ՆՈՅՆԲ և ՆԻՆՍ Զ. յետոյ ծառայ.

ՆԻՆ. Զ.—Այս ումն են սպանում։

ԿԱՂ.—Լռիր...փակիր աչքերդ, և անշարժ եղիր, ապա թէ ոչ մահդ մօտ է...

ՄԱՐ.—Օգնեցէք, օգնեցէք...

ԾԱՌ.—(մտնելով) Պարոն, ոստիկանը եկել է, ձեզ է հարցնում...

ԿԱՂ.—Ոստիկանը...թող քաֆթարին...մենք կորած ենք (Փետուրեանը արձակում է Մարիամին)։

ՄԱՐ.—Ո՞ւֆ, փառք քեզ Աստուած։

ՓԵՏ.—Ես մեղաւոր չեմ...ճշմարիտ մեղաւոր չեմ...

ԿԱՂ.—Կանչիր ոստիկանին...անձնատուր եմ լինում (ծառան գնում է եւ մտնում է ոստիկանի հետ)։

ՏԵՍԻԼ 15.

ՆՈՅՆԲ, ԾԱՌԱՅ և ՈՍՏԻԿԱՆ.

ՈՍՏԻԿ.—Միխայիլ Արտեմիչ, պատիւ ունեմ։

ԿԱՂ.—Սպասիր սպասիր, ես թէև քեզ շատ անգամ պատուել եմ, բայց գիտեմ թէ ինչու համար ես եկել։

ՈՍՏԻԿ.—Ձեզ վերայ գանգատ կայ։

ԿԱՂ.—Զղջում եմ, մեղաւոր եմ, տար ինձ ոստիկանատուն։

ՓԵՏ.—Իսկ ես...թոյլ տուէք ինձ ասել, որ ես ամենևին մեղաւոր չեմ։

ՈՍՏԻԿ.—Ո՞վ էք դուք։

ՓԵՏ.—Փետուրեան...ամենևին մեղաւոր չեմ։

ԿԱՂ.—Ինչ էք դորան լսում...

ՈՍՏԻԿ.—Ինչու է ձեր ձեռքերը ածուխոտ։

ՓԵՏ.—Ախ, ներեցէք խնդրեմ, (պահում է ձեռքերը) որովհետև ինչպէս ինքներդ տեսնում էք, ես այդպիսի բաներին ընդունակ չեմ, այդքան ուժ էլ չունեմ...ամենաշատը խոզ կարող եմ մորթել, հաւ, բայց թէ...

ՈՍՏԻԿ.—Ինչ ես դատարկ դատարկ դուրս տալիս։

ԿԱՂ.—Մի լսիր դորան...ես զղջում եմ, սատանան ինձ խաբեց, ես անմեղ մեղաւոր եմ... այդ արեան դէպքը...

ՈՍՏԻԿ.—Ի՞նչ ես ասում։

ՆԻՆ. Զ. և ՄԱՐԻԱՄ.—Տէր Աստուած։

ԿԱՂ.—Գրիր, որ մենք երեք հարբած դրութեան մէջ մի կին ենք սպանել։

ՆԻՆ. Զ.—Գժուել ես ինչ է. մի գուցէ տաքութեան մէջն ես։

ԿԱՂ.—Ո՛չ, չեմ գժուել, իսկ տաքութեան մէջ. այժմ ես չեմ, այլ բաղանիքում քեռին է։

(ոստիկանին) Բայց սպասիր, ես արդէն լրագրի մէջ կարդացի, որ արդէն ոստիկանը հետքը գտել է։

ՈՍՏԻԿ.—Ինչ լրագիր, որտեղ էք կարդացել։

ԿԱՂ.—Ահա լրագիրը, կարդա (տալիս է լրագիրը եւ ցոյց է տալիս տեղը)։

ՈՍՏԻԿ.—(նայում է) Բայց այս լրագիրը անցեալ տարուանն է,—ահա տեսէք 1909 թ.։

ԿԱՂ.—Ինչպէս թէ 1909 թ., ուրեմն այդ սպանութիւնը անցեալ տարի է կատարուել... (Մարիամին) որտեղից ես վերցրել այս լրագիրը։

ՄԱՐ.—Ներողութիւն, պարոն, նորը պատռել էի, ես էլ հինը բերի։

ԿԱՂ.—Տէր իմ Աստուած...այս ինչ է...ուրեմն ինչու քեռուն բաղանիք տարայ, շուտ գնացէք բաղանիքի պատուհանները ջարդեցէք...ազատեցէք քեռուն (Գասպարը Ու. երեւում է)։

ՏԵՍԻԼ 16.

ՆՈՅՆՔ և ԳԱՍՊ. ԻԻ.

ԳԱՍՊ. ԻԻ.—Օ՛յ, օյ...գլուխս...

ԿԱՂ.—Բեռի, կենդանի ես, քեռի (գրկում է նորան)։

ՓԵՏ.—(նոյնպէս գրկելով) Բեռի, կենդանի ես։

ԳԱՍՊ. ԻԻ.—Թողէք ինձ...հազիւ եմ բաղանիքից ազատուել։

ԿԱՏ.—Ոչինչ կանցնի...

ՈՍՏԻԿ.—Բայց սպասեցէք, այսօր մի կառապան եկաւ ինձ մօտ գանգատուելու, որ դուք (Կաղամբեանին) երեգ նորան անձրեւանոցով խփել էք և ձեզ հետ ինչ որ խոհարար է եղել։

ՓԵՏ.—Այստեղ է խոհարարը։

ՈՍՏԻԿ.—Յետոյ իմացայ, որ ձեզ հիւրանոցի ծառաները փակել են ածուխի պահեստում...յետոյ մի ինչ որ կին գանգատւում էր, որ գլխից գլխակապն էք պոկել փողոցում, և երբ նորա ոտքից կօշիկը ընկել է, ձեզանից մէկը վերցրել է և չգիտեմ ուր է ձգել...

ԿԱՂ. և ՓԵՏ.—Ահա թէ ինչ։

ՈՍՏԻԿ.—Այժմ գանգատողները իրանց վնասներն են պահանջում։

ԿԱՂ.—Որքան է գումարը։

ՈՍՏԻԿ.—Հարիւր յիսուն ռուբլի։

ԿԱՂ.—Պատրաստ եմ զոհելու, իսկ այժմ, տիկին, (կնոջը) մեզ համար նախաճաշիկ պատրաստիր, մի-մի բաժակ կոնծենք, թող սա լինի վերջին բաժակը։

ՎԱՐԱԳՈՅՐ

На основаніи авторскихъ правъ, при постановкѣ настоящихъ 12-ти водевилей изданіе Галустяна какъ въ 1-ой, такъ и во 2-ой книгѣ, съ каждаго акта взимается по три рубля съ акта. Для иногородныхъ расходы по переводу денегъ за счетъ автора. Неуплатившіе авторскихъ, будутъ преслѣдоваться на основаніи Цензурнаго устава. Адресъ для переводовъ: Тифлисъ, Магазинъ Гуттенбергъ, для Араксяна.

П. Араксянъ.

Հեղինակների օրէնքների համաձայն պ. Գալստեանի հրատարակուած 12 վոդվիլները (երկու գրքի մէջ Ա. և Բ.) ներկայացնելու համար, ամեն մի գործողութիւնը վարձատրվում է երեք ռուբլիով։ Փոխադրելու ծախքը հեղինակի հաշուին է։ Չվճարողները պատասխանատուութեան կենթարկուեն ցենզուրայի կանոնադրութեան համաձայն։ Փոխադրելու համար հասցէն է, Тифлисъ. Магазинъ Гуттенбергъ для Араксяна.

Պ. Արաքսեան։

ՀՀ Ազգային գրադարան
NL0167902